Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

№ 69218

25 SEP 2006

19 NOV 2007

Հրատարակութիւն «Լուսոյ» երկամեայ ճանգիսի

№ 69218

ԿԱՐԱԼԷՆԿՈ

ԳԱՏԱՍՏԱՆԻ ՕՐԸ

ԹԱՐԳՄ. ՄՈՒՇԷ ՎԱՐԴԱՊԵՏ

ԹԻՖԼԻՍ
Տպարան Տ. Մ. Ռօսինեանցի
1902

ԷՐՈՏ .ՅՈ. 4 Հ

Հրատարակութիւն «Լումայ» երկամեայ հանդիսի

891.71
4-78
Կր.

ԿԱՐԱԼԷՆԿՈ

ԴԱՏԱՍՏԱՆԻ ՕՐԸ

ԹԱՐԳՄ. ՄՈՒՇԷ ՎԱՐԴԱՊԵՏ

1002
5088

ԹԻՖԼԻՍ
Տպարան Տ. Մ. Ռոտինեանցի
1902

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
C.C.P.A Публичная Библиотека
7/II--1922
Именна. Мленникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

24 .05. 2013

11765

Дозволено цензурою, Тифлисъ, 30 Мая 1902 г.

ԿԱՐԱԼԷՆԿՕ

ԴԱՏԱՍՏԱՆԻ ՕՐԸ

(ԻՕՄ-ԿԻՊՈՒՐ [1])

ԿԱՐԱԼԷՆԿՕԻ

(Մալառուսական հեքիաթ)

Կրակը հանգաւ, լուսնեակը է բարձրանում
Գայլակերը արածում է անտառում։
(Շեչենկօ)

I.

Լսես ինչ կայ,—ով մարդ, հապա մի պարզ գիշեր դուրս եկ տնից, կամ աւելի լաւ, դուրս արի հէնց գիւղից, բաց ձրացիր բլրակը, ու աչքդ ձգիր երկնքին ու երկրին։ Տես թէ ինչպէս պայծառ լուսնակը չրջում է երկնքի երեսին, ինչպէս պեծալրծին են տալիս ու աչքախփիկ անում աստղերը, ինչպէս երկրի երեսից թեթև ամպեր են բարձրանում և, կարծես գիշերով ճանապարհը կտրող ուշի մնացած օտարականների նման միմեանց ետևից մի տեղ չտապում.... Իսկ անտառը հմայուած ականջ է դնում, ինչ թովիչ բաներ են կատար-

---

[1]) Հրէաները զարնան սկզբներում տօնում են իրենց նոր տարին, իսկ տասն օր անց գալիս է Իոմ-Կիպուր (մաքրութեան) տօնը։ Մալառուսիայում դա «Դատաստանի օր» է

СОБРАНІЕ ... БИБЛІОТЕКА

ւում այդտեղ կէս դիշերից յետոյ, իսկ քնէած գետակը վազում է, և խոխոջում, և ափի սօսիներին մի բան փնթփընթում...։ Եւ այնուհետև, դու, մարդ Աստուծոյ, ասա ինձ— ինչ ասես, ինչ հրաշք ասես չի պատահիլ այս Աստծու տնակի մէջ, որ մարդիկ լոյս աշխարհ են անուանում։

Կարող է ամեն բան պատահել։ Ահա հէնց իմ մէկ բարեկամիս, Նովո-Կամենկայի ջաղացպանի դլխին էլ, մի արկած էր պատահել...։ Թէ որ մինչև այժմս դեռ ոչ ոք ձեզ այդ բանը չէ պատմել, դէ լաւ ուրեմն, ես կպատմեմ, միայն ինձնից մի պահանջէք, որ երդուեմ, թէ այդ ամենը ուղիղ է։ Ամենևին, չեմ երդուիլ, որովհետև ճիշտ է, ես այդ ամենը ջաղացպանից իրենից եմ լսել, բայց և այնպէս, մինչև օրս էլ դեռ չդիտեմ—եղել է իսկապէս այդ բանը, թէ չի եղել...։

Էհ, եղել է թէ չի եղել, բայց և այնպէս եկէք ինչ որ պատահել է, պատմեմ ձեզ։

Մի իրիկուն, իրիկուան ժամից յետոյ, Ջաղացպանը Նովո-Կամենկայից տուն էր դառնում,—Ջաղացը, աւելի չէ, դեղից հաղիւ մէկ ու կէս վերս հեռու լինէր,—Ջաղացպանիս քէֆը տեղը չէր։ Բայց թէ ինչու քէֆը տեղը չէր, այդ նա ինքն էլ կարող չէր ասել։ Եկեղեցում ամեն բան կարգին, կանոնին էր եղել, և մեր Ջաղացպանը, որ ձայնի կողմից ոչ ոքից յետ չէր մնալ, սաղմոսասացի բեմից սաղմոսներն այնպէս վարժ, այնպէս բարձր էր կարդացել, որ մինչև անդամ սովոր մարդիկն էլ զարմացել էին. «Տեսէք, տեսէք, ո՛նց է վրայ տալիս,—ասում էին նրանք զարմացած,—որ ասես մի խօսք չի հասկացնում. կատարեալ անիւ է—պտտւում է, դլորւում, և դիտես էլ, որ անիւը մատներ ունի, բայց կարող ես թէ կուզ մէկ մատը տեսնել։ Հէնց այդպէս էլ նա էր կարդում,—կարդմունքն, ոնց որ անիւ կարծես քարած ճամբի վրայ դդրդում էր, բայց արի ու մի բառ չոկիր։]

Եւ Ջաղացպանը ականջ էր դնում թէ մարդիկ ինչ են

կոչում և այն հաւատալիքը կայ, թէ այդ օրը հրէական սատանան, Ջանչողը, մտնում է սինագոգ և մի հրէայ վերցնում, տանում։ Հաւանօրէն այդ հաւատալիքն առաջացած պիտի լինի այն հանդամանքից, որ հրէաները արևմտեան նահանգների մանր քաղաքներում Իօմ-Կիպուրը կատարում են չափազանց սրտալոյզ և եղերերգական ծէսերով՝ քրիստոնեայ ժողովրդի աչքի առաջ։

խօսում իրար մէջ, և ուրախանում էր։ Հո կարողանում էր հոգու համար աշխատել,—ոնց որ ամրապինդ երիտասարդը կալում, այնպէս էլ սա իր լեզուով թակում էր, թակում, մինչև որ կոկորդը չորացաւ, քիչ էր մնում աչքները դուրս պրծնէին։

Ժամից յետոյ տէրտէրը Ջաղացպանին տուն տարաւ, թէյ խմացրեց, մի չիշ էլ օղի բերին, սեղանի վրայ դրին ու դարտակած յետ տարան։ Դրանից յետոյ լուսնակն արդէն դաշտերի վրայ բաւական բարձրացել, մոխիկ էր տալիս փոքրիկ, բայց արագաշոս Կամենկա գետակին, երբ որ Ջաղացպանը տէրտէրի տնից դուրս եկաւ և գեղի մէջովն անցնելով իւր Ջաղացը դարձաւ։

Գեղացիներից ոմանք արդէն քնած էին, ոմանք խրճիթում նստած ճրագի լուսով ընթրիք անում, իսկ կալին նաև այնպիսիները, որոնց աչնանային տաք ու պարզ գիշերը քաշել, փողոց էր դուրս բերել։ Եւ ծերունիները նստած էին տան առաջ սաքուի վրայ, իսկ երիտասարդները քաշուել էին ցանկապատերի տակ, խրճիթների ու բալուտի թանձր ստուերում, այնպէս որ նրանց տեսնել անդամ կարելի չէր, և միայն այստեղ-այնտեղ լսւում էր նրանց կամացուկ խօսելու ձայնը, կամ զսպուած ծիծաղը, իսկ երբեմն էլ երիտասարդ զոյգի անզգոյշ համբոյրը...։ Էհ, ինչ ասես չի պատահիլ ահա մի այսպիսի պարզ ու տաք գիշեր բալուտի թանձր ստուերի մէջ։

Եւ թէպէտ Ջաղացպանը մարդկանց չէր տեսնում, բայց նրանք տեսնում էին Ջաղացպանին, որովհետև նա հէնց փողոցի մէջ տեղով, լուսնակի լուսովն էր գնում։ Ուստի և տեղ-տեղ նրան ասում էին.

—Բարի իրիկուն, պարոն Ջաղացպան։ Տէրտէրի տնից հո չէք դալիս։ Այսքան ժամանակ նրա մօտ հո չէք հիւրասիրուել։

Ամենքն էլ դիտէին, որ միայն այդտեղից է դալիս նա, ուրիշ տեղ չունի, և Ջաղացպանին դիւր էր դալիս այդ բանը, ուստի և նա հպարտութեամբ ու առանց քայլերը կանդնեցնելու պատասխան տուեց։

—Էհ, վատ չէր, բաւական լաւ հիւրասիրուեցայ,—և հրպարտ քայլուածքով առաջ գնում...։

Իսկ ոմանք լուռ նստած էին յերդիկի տակ ու ապա-

սում, որ շուտով անցնի, գնալ և չնկատէ իրենց այդտեղ եղածը։ Բայց մեր Ջաղացպանն այն մարդը չէ, որ թողնի գընալ կամ մոռանալ այնպիսի մարդկանց, որոնք իրենից պարտքի ալիւր կամ տոկոսով փող էին առել, կամ ցորեն աղալու համար պարտք մնացել։ Ի՞նչ անենք, թէ նրանք ստուերի միջից լաւ չէին երեում կամ նստած էին լուռ ու մունջ, կարծես պապանձուած լինէին, բայց և այնպէս Ջաղացպանը կանգ էր առնում և խօսում.

—Հ՛ը, բարի աջողում։ Այստեղ է։ Ուղում էք լռեցէք, ուղում էք՝ չէ, այդ ձեր դիտնալու բանն է, բայց պարտքերդ պատրաստեցէք, որովհետև ժամանակը վաղն է, առաւօտը կանուխ։ Իսկ ես չեմ սպասիլ, գիտցած լինիք։

Եւ յետոյ դարձեալ փողոցի միջով շարունակեց իւր ճանապարհը, իսկ նրա ստուերը կողքից անբաժան վազում էր հետը։ և ինչ ստուեր—սեւ, սիպ սև, այնպէս որ Ջաղացպանը, որ դիր-կարգումով մի մարդ էր և հարկաւոր տեղում գիտէր խելքին զօռ տալ, ինքն իրեն մտածում էր.

—Ի՞նչ սև ստուեր է։ զարմանալի բան...։ Ձիւնից սպիտակ շոր հագնիս ու ստուերդ այսպէս ածուխից էլ սև լինի՞...։

Այստեղ նա եկաւ հասաւ Ջհուդ Եանկէլի օղտանը, որ կանգնած էր բլրակի գլխին, ճանապարհի մուտքի մօտիկ։ Արևի մայր մտնելով չաբաշն էլ վերջացել էր արդէն, բայց և այնպէս տէրը օղտանը չէր, հապա կար միայն վարձուորը՝ Խալրկոն՝ որ միշտ չաբաշ ու տօն օրերին տիրոջ ու նրա տնեցիների տեղն էր բռնում։ Խալրկօն նրանց համար ճրագ վառում, իւր ձեռներով լաճախորդներից փող ստանում, քանի որ Ջհուդները—այդ սաղ աշխարքն էլ գիտէ—խիստ մօտիկ են իրենց հաւատին—ամենեին տօն օրը ոչ ճրագ կվառեն, ոչ ձեռները փող կբռնեն—մեղք է։ Այս ամենը նրանց տեղաք վարձուոր Խալրկօն էր անում. իսկ Եանկելը կամ նրա կինը, և մէկ-մէկ էլ նրանց տղերքը աչքները չորս բացած նայում էին, թէ մի դուլէ շահանոցը կամ աբասանոցը դալը ընկնելու տեղ մի հունարով Խալրկօի ջերը մանի։ «Խորամանկ մարդիկ են, օ՛, շատ խորամանկ,—մտածում էր Ջաղացպանը։—Ճամբան դուել են, համ իրենց Աստծուն են հաճոյանում, համ էլ կոպէկները չեն կորցնում։ Խելօք ժողովուրդ է, այս էլ պէտք է ասած,—մերոնք որտեղ»։

Նա կանգ առաւ օղտան դրանը, հրապարակի վրայ,

որը պինդ թակուած էր բազմաթիւ մայդկանց ոտների տակ, որոնք թէ վաճառանոցի և թէ հասարակ օրերը, ամբողջ շաբաթը, խռնուում են այդտեղ, և հարցրեց.

—Եանկէլ, էյ, Եանկէլ։ Տանն ես, թէ չէ։

—Չես տեսնում, տանը չէ,—դախլի ետևից պատասխանեց վարձուորը։

—Բաս ո՞ւր է։

—Ո՛ւր է,—ուր պիտի լինի, քաղաքում,—պատասխանեց վարձուորը։—Մի՞թէ, պարոն Ջաղացպան, չգիտէք, թէ ինչ օր է այսօր նրանց համար։

—Ի՞նչ օր է որ։

—Իոմ-կիպուր է։

«Որպէս թէ բան հասկացրեց»—մտածեց ինքն իրեն Ջաղացպանը։ Եւ պէտք է ձեզ ասեմ, որ թէպէտ այս վարձուորը մի հասարակ վարձուոր էր,—չէ թէ միայն հասարակ, հապա և Ջհուդի վարձուոր,—բայց և այնպէս գիր-կարդում գիտցող, բան տեսած ու հպարտ մարդ էր, ծառայութիւնից վերադարձած զինուոր։ Սիրում էր քիթը վեր պահել ու պարծենալ, մանաւանդ Ջաղացպանի առաջ։ Սկեղեցում սաղմոս էլ էր կարդում, Ջաղացպանից պակաս չէր, միայն ճաքած ձայն ունէր ու մէկ էլ քթի մէջն էր ասում։ Այդ պատճառով էլ ժամադրքի վերաբերմամբ կարող էր մեր Ջաղացպան Փիլիպպի հետ մրցել, բայց Առաքեալի մէջ—ամենեին։ Իսկ թէ ուրիշ բաների մէջ—երբէք լեռ չէր մնալ։ Թէ Ջաղացպանը մի խօսք ասաց, նա խսկոյն պատասխանը կտալ և այն՝ անպատճառ հակառակը կասէր։ Թէ Ջաղացպանն ասի՝ «չգիտեմ», սա խսկոյն—«բայց ես գիտեմ»։ Անհամ մարդ է...։ Ահա այժմ էլ մի այնպիսի խօսք ասաց, որ Ջաղացպանս եղունդներով գըլխարկի տակ քորեց, իսկ ինքը դեռ ուրախանում էլ է։

—Գուցէ դուք դեռ այժմ էլ չհասկացաք, թէ ինչ օր է այսօր։

—Ինչիս է որ Ջհուդի ամեն մի տօնը գիտենամ,—նեղացած պատասխանեց Ջաղացպանը։—Այս նրանց մօտ հօ չեմ ծառայում։

—Ամեն մի։ Հէնց բանն էլ այն է, որ սա «ամեն մի» տօն չէ։ Այսօր մի այնպիսի տօն է նրանց համար, որ տարին մի անգամ է գալիս միայն։ Այդ դեռ ինչ է որ։ Աւելին

ասեմ,—աչխարքիս երեսին ուրիշ ոչ մի ազգ մի այսպիսի տոն չունի։

—Դէ լաւ, կասէք։

—Կարծեմ Զանչողի (Խապուն) մասին դուք էլ լսած կլինիք։

—Հա։

Զաղացպանը զարմացած մնաց,—և ճշմարիտ, ինչպէս էր, որ գլխի չէր ընկել,—և նա Ջհուդի խրճթի պատուհանից ներս նայեցաւ. ինչ տեսնի—լատակին խոտ ու դարման էր փռած, երկՋահեան ու եռաՋահեան աչտանակների վրայ վառած էին բարակ, ճարպից թափած մոմերը և լսւում էր մի տեսակ, մի քանի մարդահասակ մեղուների բզզոց։ Այդ Եանկէլի նոր առած երկրորդ, նորատի կինն ու մի քանի էլ Ջհուդի ճուտերն էին, աչքերը փակած, շրթունքները ցըմցըմացնելով աղօթք բզզացնում, և այդ բզզոցի մէջ որ ասես մի բառ Ջոկել կարելի չէր։ Բայց մի Ջոկ, մի զարմանալի բան կար այդ աղօթելու մէջը՝—կարծես թէ Ջհուդների ներսը մի ուրիշը նստած է, ու նստած լաց է լինում, մի բան չիշում, խնդրում, աղերսում։ Բայց թէ ումն են խնդրում, ինչ են խնդրում—ով է իմանում։ Այսքանս միայն երևում է, որ նրանց խնդրուածքը օղետան ու փողի համար չէ...։

Ջհուդների աղօթքին ականջ դնելուց՝ մեր Ջաղացպանի հոգին խռովեցաւ,—և՝ ափսոսում էր, և սիրտը ճմլւում։ Նա դարձաւ, վարձուորի երեսը նայեցաւ, որ նոյնպէս դրան ետևից լսում էր այդ բզզոցը, և ասաց.

—Աղօթք են անում...։ Ուրեմն, ասում ես, Եանկէլը քաղաք գնաց։

—Հա, գնաց։

—Մէկ ասող լինի, ինչ գործ ունիս։ Հապա եթէ Զանչողը հէնց նրան չանչի։

—Հէնց բանն էլ այդ է,—պատասխանեց վարձուորը։—Եթէ որ լինէի նրա տեղը, սաղ աչխարքս ինձ բախչէին տեղիցս չէի շարժուիլ—թէպէտ ամեն տեսակ անհաւատների դէմ պատերազմի եմ գնացած ու չքաղրամ էլ ունիմ։ Պինդ կնստէի տանս,—տնից հո չէ չանչելու։

—Ինչո՞ւ։ Որ չանչել ուզի, տան միջից էլ կարող է չանչել։ Ինչի՞ տան միջից կարելի չէ։

—Ինչո՞ւ...։ Զարմանում եմ, որ հարցնում էլ էք։ Որ ուզէք գլխարկ կամ ձեռնոց առնել, ո՞ւր կգնաք առնելու։

—Ո՞ւր պիտի գնամ, ի հարկէ խանութ։

—Ինչու՞ խանութ։

—Բան ասաց։ Որովհետև խանութում չատ-չատ կայ։

—Հա, հէնց այդ է։ Այժմ սինագոգ որ մտնես—սիրտդ ինչքան Ջհուդ կուզէ։ Խռնւում են, լաց լինում, աղաղակում, այնպէս որ ձայները սաղ քաղաքի մէջ փռուած, մէկ ծայրից միւսն է հասնում։ Իսկ ուր որ մմեղներ են հաւաքւում, այնտեղ էլ թռչունն է գնում։ Զանչողը լիմար պիտի լինի, որ այդտեղ գնալու տեղ անտառներ ու դեղեր ման գալ, Ջհուդ փնտրի։ Տարուայ մէջ մէկ օր ունի, այն էլ այդպէսով ի զուր պիտի անցկացնի։ Մէկ էլ որ, ամեն գնդի մէջ հո Ջհուդ չի լինում, մէկտեղ կայ, մէկ տեղ չկայ։

—Է՛, ասենք այդպիսի տեղ քիչ կայ։

—Բիչ, բայց հո կայ..։ Այս էլ կայ որ չատի միջից ընտրելն էլ հեշտ է։

Երկուսն էլ լռեցին։ Զաղացպանը ան էր միտք անում, թէ վարձուորը նորից խօսքով բռնեց իրան, և դարձեալ դժգոհութիւն զգաց։ Իսկ պատուհաններից շարունակ լսւում էր Ջհուդների լացն ու աղօթքը։

—Երևի իրենց հօր համար են աղօթում,—ասաց Զաղացպանը։

—Շատ կարելի է։

—Դեռ տեսնենք այդ ուղիղ բան է,—նորից սկսեց Զաղացպանը, որ համ ուզում էր վարձուորի սիրտը հանել, համ էլ, որպէս մարդ, մի քիչ խղճում էր Ջհուդին։—Գուցէ մարդիկ հէնց դուրս են տալիս միայն։ Ախմախին մէկը հնարած լինի, մէսն էլ հաւատացած։

Այս խօսքերը վարձուորին դիւր չեկան։

—Այդպէս էլ է պատահում,—ասաց նա,—մէկ էլ տեսար մէկը, առանց մտածելու, յանկարծ մի բան ասաց...։Հէնց ձեր ասածն օրինակ,—միթէ ես եմ հնարել այդ բանը, կամ հնարս, կամ խնամիս է հնարել, քանի որ ամեն մի քրիստոնեայ մարդու էլ յայտնի է դա։

—Դուք ձեր աչքովը տեսել էք,—զայրացած հարցրեց Զաղացպանը, որ վարձուորի արհամարհական խօսքերը սրտին էր առել։

Այս էլ ասեմ, որ Զաղացպանս որ տաքանար, Խիսէր

երբեմն էլ պնդել, թէ մինչև իւր աչքովը չտեսնի, չի հաւատալ, որ սատանայ կայ աշխարհումս։ Հէնց այժմս էլ նա խիստ տաքացել էր։

—Իսկ դուք,—ասում է,—ձեր աչքովը տեսել էք։ Բաս որ չէք տեսել, մի՞ք էլ ասիլ, թէ կայ. ա՛յ ինչ։

Մեր վարձուորը թէպէտ պաշտօնաթող զինուոր էր և կտրուկ էլ մարդ, բայց այստեղ ձայնը փոքր ինչ քաշ դցեց և մինչև անգամ հաղալու պէս արաւ։ Բայց և այնպէս—կրողը տանի—ա՛յն մարդը չէր, որ բոլորովին պոչը իրան քաշէր։

—Ի՞նչ սուտ ասեմ,—ասում է,—աչքովս տեսած չեմ։ Իսկ դուք, պարոն Ջաղացպան, սկի Կիև տեսել էք։

—Ոչ, չեմ տեսել, ես էլ սուտ չեմ ասի։

—Թէպէտ տեսած էլ չլինիք, բայց և այնպէս հո Կիևը կա՛։

Այստեղ Ջաղացպանս մի այսպիսի պարզ բանի վրայ աչքերը չռեց։

—Ինչ որ ուզիզ է՝ ուզիզ է,—համաձայնեցաւ նա,—թէև Կիև չեմ տեսել, բայց գիտեմ որ կայ...։ Տեսնում եմ, որ պէտք է հաւատալ, երբ ասում են թէ Զանչողը կայ։ Բայց, գիտէք, բանը... ուզում էի հարցնել, ումից էք իմացել։

—Վա՛. ումից։ Իսկ դուք ումից էք իմացել, թէ Կիևը կայ։

—Ի՞նչ էք վրայ տալիս։ Լեղու եմ ասում է։ Լեղու չէ, թուր է. չորանար այդ լեզուդ։

—Իմ լեզուս չորանալուց օգուտ չկայ. լաւն այն է, որ երբ ամենքն էլ պնդում են մի բան, դուք էլ հաւատաք դրան։ Թէ որ ամենքն էլ նոյնն են ասում, նշանակում է, որ ուզիզ է։ Որ ուզիզ չլիներ, այն ժամանակ ամենքն էլ չէին ասիլ, հապա միայն զրախօսները կխօսէին. ահա՛ ձեզ։

—Բլ, բլ, բլ բլբլում էք... Համբերեցէք մի բոպէ։ Այնպէս էք վրայ տալիս, հէնց գիտենաս սանդ լինիք ծեծելիս։ Այժմ ինքս էլ եմ տեսնում, որ ծուռ ճամբայ եմ բռնել...։ Բայց, գիտէք, դարձեալ կուզէի իմանալ, որտեղից է դուրս եկել դա, ժողովրդի պատմածը...։

—Այնտեղից է, որ ամեն տարի կատարւում է այդ։ Ինչ որ լինում է, այն էլ խօսում են, իսկ ինչ որ չի լինում, նրա մասին խօսելն էլ աւելորդ է...։

—Ի՞նչ մարդ է։ Բայց չէ, սպասիր, ես որ քեզ չկանդ-

նացնեմ, Ջաղացի չախչախի նման դնալու ես հա դնալու։ Վերջապէս ասա մի տեսնենք, ինչ է պատահում։ Դու ինձ ա՛յս ասա։

—Էը՛. ուրեմն դուք այն էլ չգիտէք, թէ ինչ է լինում զատասանի օրը...։

—Որ գիտենալի, չէի հարցնիլ։ Շատոնց է լսում եմ, որ մարդիկ դուրս են տալիս, ա՛յ ոնց որ դու—Զանչողը, Զանչողը, բայց թէ ինչ մտքով են ասում, չեմ իմանում։

—Թէ որ այդպէս է, վաղուց ասէիք էլի։ արդէն պատմած կլինէի, թէ չէ ես այսպիսի հաստատ մարդիկ չեմ սիրում. ասենք նրանց օգի է պէտք, բայց դեռ սկիզբը ջրի մասին խօսք բաց կանեն—«Ջուր կխմէի, բայց համով չէ»։ Որ ուզում էք, ձեզ պատմեմ, լսեցէք. ինչքան էլ որ չլինի, դարձեալ ես աշխարք տեսած մարդ եմ, ձեզ նման տանը չեմ փտել։ Քանի տարի քաղաքում եմ ապրել, ջհուդների մօտ էլ առաջին անգամ չէ ծառայածս։

—Մեղք չէ,—իւր կասկածը յայտնեց Ջաղացպանը։

—Դուցէ ուրիշի համար մեղք է, բայց զինուորին ամեն բան կարելի է։ Հէնց այդպիսի թուղթ էլ տրուած է մեզ։

—Հա՛, թէ որ թուղթ է տրուած...

Սրանից յետոյ զինուորն արդէն սկսեց բարեկամաբար պատմել Զանչողի մասին բոլոր գիտեցածը, պատմեց և այն, թէ ինչպէս նա ամեն տարի այս օրը մի-մի ջհուդ է չանչում, տանում։

Զանչողը, պէտք է ձեզ էլ ասեմ, քանի որ Ջաղացպանի նման դուք էլ չգիտէք այդ, մի ջոկ տեսակ ջհուդի սատանայ է։ Նա, ասենք, ամեն բանով նման է մեր սատանային, նոյնպէս սև է, նոյնպիսի կոտոշներ ունի և թևերն էլ—ոնց որ մի անագին չղջիկանի թևեր. միայն դաւիկներ ունի և գլխին թասակ, ու մէկ էլ միմիայն ջհուդների վրայ իրաւունք ունի։ Բայց հէնց որ մի քրիստոնեայ մարդու պատահի, թէկուզ ճիչտ կէս գիշերին, մի անապատ տեղ կամ թէ չէ լճացած ջրի ափին լինի, ոնց որ վարկոտ չուն կթողնի, կըփախչի։ Իսկ ջհուդների վրայ նրան իրաւունք է տրուած—ամեն տարի ընտրում է մի ջհուդ և վեր առնում տանում...

Ահա հէնց այդ ընտրութիւնն անելու համար է Իսմ-Կիպուրը, զատասանի օրը։ Դեռ այդ ասնից օրեր առաջ ջհուդները սկսում են աղօթք անել, լաց են լինում, շորերը պա-

տառոտում և մինչև անգամ չգիտեմ ինչու վառարանից մոխիր հանում, գլուխները ցանում։ Իրիկունից ամենքը լուացուում են գետակի կամ լճակների մէջ, իսկ արևը մայր մտածովը խեղճերը գնում են աղօթատուն, և մի այնպիսի աղմուկ-աղաղակ բարձրացնում, որ Աստուած հեռու անի,—ձայները գլխներն են ձգում, իսկ վախից աչքները փակում...։ Իսկ այդ միջոցին, հէնց որ ժուրթն ընկաւ ու երեկոյեան աստղը ծագեց, Զանչողը դուրս է գալիս իւր բնից ու պտոյտ անում աղօթատան գլխին, ու թևերով պատուհաններին խփում, ու իրեն համար որս ջոկում։ Ամենից աւելի վախը ու սարսափը ջհուդների վրայ կէս գիշերին է ընկնում։ Նրանք դիտմամբ վառում են բոլոր մոմերը, որ անձուկ չլինի, բոլորը դեռին են փռուում, այնպէս կանչվռտում, հէնց գիտենաս մորթելու են տանում։ Եւ մինչ նրանք այսպէս վէր ընկած սուգ ու չիւանի մէջ են լինում, Զանչողը, մի մեծ ագռաւի նման, մտնում է ներս. ամենքն էլ զգում են, թէ ինչպէս նրա թևերի շարժումից սառչում է սրտները, իսկ նայորին որ առաջուց ընտրած է լինում, զգում է, որ սատանի մագիլները խրում են իւր մէջքին։ Է՛հ. միայն պատմելուց արդէն մարդուս ջանը սրսռում է. դէ իմացիր ինչ կլինի խեղճ ջհուդի հալը...։ Ի հարկէ, ինչ որ ջանումը ոյժ կայ, սկսում է կանչել։ Բայց ո՞վ է լսողը, քանի որ հէնց ամենքն էլ գժ՛ի նման գորգոռոց են գցել։ Ո՛վ գիտէ, գուցէ կողքին եղողները հէնց լսում էլ են, ինչ կարող են անել—նրանք ուրախ են, որ իրենք պրծել են...։

Վարձուոր խայրկօն հէնց ինքն էլ քանի անգամ լսել է, թէ ինչպէս դրանից լեռոյ գիւղում փող է հնչելիս եղել, և ինչ զիլ, խղճալի ու երկար ձայնով...։ Այդ աղօթատան ծառան է իւր խեղճ եղբօր ետևից բարի ճամբայ ասում. իսկ այդ միջոցին միւսները դաւթում հաղնում են իրենց ոտնամանները (որովհետև նրանք գուլբով են աղօթատուն մըտնում) և սուս ու փուս տուն դառնում։ Խայրկօն այս էլ է տեսել, թէ ինչպէս նրանք խմբովին կանգնում են լուսնի առաջ և մի բան փնթփնթում, և ոտքի ծայրերին բարձրացած՝ գիշերային երկինքը դիտում...։ Եւ այդ ժամանակ, երբ արդէն բոլորն էլ հեռանում են, դաւթում գետնին մնում է մի զոյգ ոտնամանի, որ իւր տիրոջն է սպասում...։ Է՛հ, ինչքան ուզում է սպասի, տէրը չկայ. որովհետև այդ միջոցին Զանչողը ոտնամանների տիրոջը չանչած, օդի մէջ թևերը շարժելով սարեր ու ձորեր, դաշտեր ու անտառներ է կտրում և աչքաառում, որ քրիստոնէի աչքի չընկնի...։ Անիծեալը ուրախ է լինում, երբ ամպամած ու մութ գիշերուայ է պատահում։ Բայց եթէ խաղաղ ու պարզ գիշեր լինի, այ ինչպէս այսօր, երբ լուսինը այնպէս է լուսաւորում, հէնց գիտենաս ցերեկ լինի, կարելի է ասել, որ սատանան ի զուր է ջափա քաշել...։

—Ինչու՞,—հարցրեց Ջաղացպանը ու վախեցաւ, թէ մի գուցէ չատախօս Խայրկօն դրա համար էլ սկսի իրեն յանդիմանել։ Բայց սա այս անգամ հանդարտ պատասխանեց.

—Նրա համար, որ բաւական է թէկուզ մի հասարակ քրիստոնեայ մարդ, թէ կուզ հէնց դուք, օրինակ, ասէ. «Թող, այդ իմն է»—նա իսկոյն ջհուդին բաց կթողնի։ Թևերը կթափահարէ, ոնց որ գնդակահար եղած անգղ խղճալի կերպով կրկանչէ և, ամբողջ տարուայ աւարից զրկուած, կթռչի կերթայ։ Իսկ ջհուդը գետին կընկնի։ Լաւ եթէ չատ բարձրից չի վէր ընկնիլ, կամ փափուկ տեղ, ճահճի մէջ կընկնի։ Թէ չէ, միևնոյնն է, կորած է ի զուր...։ Ոչ սատանին է փայ դառնում, ոչ իրան։

—Ա՛յ քեզ բան,—մտքի մէջ ընկած պատասխանեց Ջաղացպանը և վախեցած՝ աչքը ձգեց երկինք, որտեղ լուսինը, ճշմարիտ որ ցերեկի նման լոյս էր տալիս։ Երկինքը պարզ էր, միայն լուսնի ու անտառի միջև, որ գետակի միւս կողմը հեռուում սեւին էր տալիս, ոնց փետրի նման, արագ արագ վազում էր մի փոքրիկ ամպ։ Ամպ էր՝ ամպի պէս. բայց այս բանս մի քիչ տարօրինակ թուաց Ջաղացպանիս,—կարծես քամի էլ չկայ, թփերի վրայ տերևներն անշարժ կեցած են, հէնց իմանաս հմայուած լինին, բայց ամպը ուղիղ, թռչունի նման, դէպի քաղաք է թռչում։

—Հապա մի տեսէք, ինչ եմ ցոյց տալու,—ասաց Ջաղացպանը։

Վարձուորը դուրս եկաւ օդեռնից և, մէջքը դրան կողքին դէմ տուած, սառնութեամբ հարցրեց.

—Ի՞նչ կայ որ։ Բան էք գտել ցոյց տալու։ Ամպ է, ինչ անենք։ Տէրը նրա հետ...

—Բայց դուք այս էլ նայեցէք,—քամի կայ։

—Հ՛ը՛ը՛... Ա՛յ քեզ բան,—գլխի ընկաւ վարձուորը։—Ուղիղ քաղաք է քչում...։

Եւ երկուսն էլ, գլուխները վեր բարձրացրած, վզները քորեցին։

Իսկ պատուհաններից չարունակ լսւում էր ջհուդների բզզոցը, երևում էին նրանց դեղնած, երկարացած դէմքերը, գլխարկները յետ քաշած, աչքները փակ, շրթունքներն անշարժ...։ Ջհուդի լակոտները լալիս էին, կտոր-կտոր լինում, և Ջաղացպանին դարձեալ թուաց, թէ մէկ ուրիշն է նրանց ներսը նստած լաց լինում, մի այնպիսի բան խնդրում, որը վաղուց, շատ վաղուց կորած և մասամբ էլ մոռացուած է արդէն...։

—Է՛հ, տուն գնալու ժամանակ է,—ուշքի եկաւ Ջաղացպանը.—Իսկ ես փող էի բերել Եանկէլին տալու...։

—Կարելի է։ Նրանց տեղ ես եմ ընդունում,—պատասխանեց վարձուորը մի կողմ նայելով։

Բայց Ջաղացպանը այնպէս ձեացրեց, իբր թէ չէ լսել։ Բերածը մի այնքան էլ փոքր գումար չէր, որ առանց այլևայլութեան մի որ և իցէ վարձուորի ձեռը դնես, այն էլ մի այսպիսի թոկից փախած, պաշտօնաթող զինուորի։ Այդքան փողի համար, ինչպէս ասում են, աչքին-ունքին չէր նայիլ, թէ դրել ես-դրիր, ոչ թէ գիւղից, նահանգից էլ կարող էր փախչել։ Ցետոյ գնա ու ետևից մարդ արի։

—Մնաք բարով,—ասաց Ջաղացպանը։

—Երթաք բարով։ Բայց փողը կարող էի վերցնել։

—Ի՛նչ նեղութիւն, իրան կտամ։

—Ինչպէս կուզէք։ Առնելը ես էլ կառնէի, մի մեծ նեղութիւն չէ։ Էհ, օղեատունն էլ փակելու ժամանակ է։ Երևում է, որ ձեզանից զատ ոչ մի շուն չպիտի գայ այսօր։

Վարձուորը դարձեալ մէջքը դրան կողքին քորեց, Ջաղացպանի ետևից մի տեսակ անհաճոյ կերպով սուլեց ու ընկաւ դռները գոցել. դրան վրայ սպիտակ ներկով նկարած էր մի աման, մի բաժակ ու մի շիշ։ Իսկ Ջաղացպանը ցած իջաւ բլրակից ու, սպիտակ չորերը հագին, սկսաւ փողոցով առաջ գնալ, իսկ նրա ետևից դարձեալ վազ էր տալիս նրա սև, սիպսև ստուերը։

Բայց այժմ Ջաղացպանն արդէն իւր ստուերի մասին չէ, որ մտածում էր, հապա բոլորովին մի ուրիշ բանի մասին...

II.

Ջաղացպանը տասը սաժէն չէր անցկացել, որ փոքրիկ պարտիզում ցանկապատի ետևը մի բան խշխշաց, չրխկաց, կարծես երկու մեծ թռչուններ թռան։ Բայց այդ թռչուն չէր, հապա մի երիտասարդ ու մի աղջիկ, որ ստուերի միջից յանկարծ Ջաղացպանի դուրս գալուց վախեցել էին։ Սակայն, ինչպէս երևում է, երիտասարդը շատ էլ վախկոտներիցը չէր, —աւելի խորը, ստուերի մէջ հեռանալով, այնպէս որ հազիւ բալուտի տակ սպիտակին էր տալիս երկուսի պատկերը, նա ձեռքով չփոթուած աղջկանը պինդ գրկած, դարձեալ շարունակում էր իւր զրոյցը։ Իսկ երբ մի քիչ էլ հեռացաւ, Ջաղացպանը մի այնպիսի բան լսեց, որ սաստիկ նեղանալուց կանգ առաւ...։

—Հէյ, ով ես չգիտեմ, բայց լաւ կանէիր մի քիչ համբերէիր ու չպաչպչէիր,—ասաց նա։—Թէ չէ այնպէս պինդ ես չփփացնում, ոնց որ սոխակը թփերում,—ասաց նա ցանկապատին մօտենալով։

—Իսկ դու, շուն չան որդի, ինչ բան ունիս, որ քիթդ ուրիշի բակն ես կոխում,—պատասխանեց ստուերում կանգնած երիտասարդը։—Սպասիր, այս րոպէիս ես քու ոտքը կը ջարդեմ։ Կհասկանաս, թէ ինչ ասել է ուրիշներին խանգարելը։

—Լա՛ւ, լաւ,—ասաց Ջաղացպանը հեռանալով։—Հէնց գիտենաս մի մեծ բանի վրայ ես...։ Եւ այնպիսի շտահով ես պաչում, որ լսողի նախանձն ես շարժում։

Նա կանգ առաւ, մտածեց, գլուխը քորեց ու յետոյ, ճանապարհից ծռուելով, թռաւ մի ցանկապատի վրայից և բանջարանոցի միջովն անցաւ, գնաց դէպի այրի կնոջ խրճիթը, այն՝ որ գեղի ծայրին, առանձնացած, բարձր սօսիների տակն է գտնւում...։ Փոքրիկ խրճիթ էր, ծռուած, գետին խոնարհած։ Լուսամուտն էլ այնքան մանրիկ բան, որ եթէ գիշերս մի քիչ մութը լինէր, չէիր տեսնիլ։ Բայց այժմ սաղ խրճիթը հէնց գիտենաս վառուած լինէր լուսնի լուսով. տանիքի յարդը կարծես ոսկի լինէր, պատը՝ արծաթ, իսկ լուսամուտը պատի վրայ, կկոցած աչքի նման, սեին էր տալիս։ Պատուհանից լոյս չէր երևում։ Երևի պառաւն ու աղջիկը

ընթրիքի բան չունէին, ուստի և կարիք չկար ճրագ վառելու։ Ջաղացպանը կանգնեց, երկու անգամ կամացուկ թրխկացրեց պատուհանն ու մի կողմ քաշուեցաւ։

Շատ չտասեց և աղջկայ երկու թմբլիկ ձեռներ պինդ փաթաթուեցան նրա վզովը, իսկ երբ աղջկայ ջերմ շրթունքները Ջաղացպանի բերանին կպան, կարծես բեխերի արանքում մի բան վառուեց։ Է՛հ, ինչպէս ասեմ։ Թէ որ ձեզ այդպէս համբուրող եղել է, այն ժամանակ ինքներդ էլ կիմանաք, իսկ թէ մի այդպիսի բան ձեր կեանքում պատահած չէ, այն ժամանակ պատմել էլ չարժէ։

—Ֆիլիպկո, հոգիս, սիրելիս,—ասում էր աղջիկը քըծնուելով,—եկար վերջապէս... սպասելուց աչքս ջուր կտրեցաւ, առանց քեզ չորացել, այս անջուր արօտին եմ նմանել...։

«Է՛, փառք Աստուծոյ, որ դեռ չես չորացել»—մտածեց Ջաղացպանը՝ աղջկայ փափլիկ իրանը ձեռքով հուպ տալով—«Փառք Աստուծոյ, դեռ բան չկայ»։

—Իսկ երբ պէտք է հարսանիքի պատրաստուենք,—ասաց աղջիկը դեռ ձեռները Ֆիլիպպի ուսերին դրած և իւր, աչնանային գիշերուայ նման հրապուրիչ սև աչքերը նրան ուղղած։—Սխր չուտով Ֆիլիպպովկա է դալիս։

Այս խօսքերը այնպէս դիւր չեկան Ջաղացպանին, ինչպէս կուսական համբոյրները։ «Տեսնում ես ուր է խփում»—մտածեց նա ինքն իրեն։ «Ախ, Ֆիլիպպ, Ֆիլիպպ, այժմ մի լաւ քու դլուխդ պիտի լուանայ»։ Բայց և այնպէս սիրտ արաւ և աչքերը մի կողմ անելով, ասաց.

—Լաւ բան ես իմացել, Դանիա։ Իսկոյն հարսանիքն ես փնտրում։ Այժմ այդ կարելի բան է, քանի որ ես արդէն իմ գլխին Ջաղացպան եմ դարձել և չուտով, կարելի է դեղի առաջին հարուստը դառնամ, իսկ դու—մի խեղճ այրի կնոջ աղջիկ ես։

Աղջիկը ցնցուեց, կարծես օձ խածած լինէր։ Նա թռաւ, Ֆիլիպպից հեռացաւ և ձեռներով սիրտը բռնեց։

—Իսկ ես կարծում էի... վայ իմ գլխին...։ Էլ ինչու էիր ուրեմն, անպիտան, պատուհանը թակում։

—Այ քեզ բան. ինչու էիր պատուհանը թակում...—պատասխանեց Ջաղացպանը։—Ինչու չպիտի թակեմ, քանի որ մայրդ ինձ փող է պարտք։ Իսկ դու դուրս պրծար և ուղղակի

սկսար համբուրուել։ Ի՛նչ անէի...։ Ուրիշների չափ համբուրուել ես էլ գիտեմ։

Եւ նա դարձեալ ձեռքը նրան մեկնեց. բայց որ Ջաղացպանի ձեռքը աղջկայ իրանին չկպաւ, իրանը սարսռաց, հէնց իմանաս իժը խայթեց։

—Կորիր,—կանչեց աղջիկը մի ։ ինպիսի բարկութեամբ, որ Ջաղացպանը լեռ-լեռ գնաց։—Ես քու թուղթ մանէթանոցդ չեմ, որ քու սեպհականութեան պէս բռնում ես ինձ։ Հապա մի քիչ էլ մոտեցիր, էն վալը բերեմ գլխիդ, որ գիտցածդ էլ մոռանաս...։

Ջաղացպանը չփոթուեց։

—Ի՛նչ տաք աղջիկ ես եղել։ Ի՛նչ է, ես, մեղայ Աստուծու, ջնուդ եմ, ինչ է, որ այդպէս անպատիւ ես անում։

—Ջնուդ չես, բաս ինչ ես։ Տասը շահին մէկ մանէթ ես դարձրել, այդ բաւական չէ, դեռ շահն էլ ինձանից ես պահանջում։ Կորիր, ասում եմ, դղուելի մարդ։

—Աղջիկ եմ ասում հա,—ասաց Ջաղացպանը և ձեռքով երեսը ծածկեց, կարծես վախենալով, թէ մի դուցէ, ճշմարիտ, աղջկայ բռունցքը հասնի։—Տեսնում եմ, որ խելքը գլխին մարդը կարող չէ հետդ խօսել։ Գնա, մօրդ կանչիր։

Բայց պառաւն առանց այդ էլ արդէն խրճթից դուրս էր եկել և խոնարհ գլուխ տալիս։ Ջաղացպանին այդ աւելի դիւր եկաւ, քան թէ աղջկայ հետ խօսակցութիւնը։ Նա չտկուեցաւ, և նրա սև ստուերը պատի վրայ այնպէս գլուխը հպարտ-հպարտ վեր էր բարձրացել, որ մինչև անգամ Ջաղացպանն ինքն էլ միտք էր անում, թէ ինչպէս է որ գլխարկը գլխից վեր չէ ընկնում։

—Գիտես, պառաւ, ինչու եմ եկել,—ասում է Ջաղացպանը պառաւին։

—Ա՛խ, ինչպէս չգիտենամ։ Երևի իմ փողի համար ես եկել։

—Չը՛, քու փողի համար չէ, պառաւ, հապա իմ փողի,—ծիծաղեց Ջաղացպանը։—Աւաղակ հօ չեմ, որ գիշերով ուրիշի փողի համար օտարի տունը գնամ։

—Հէնց ուրիշի փողի համար էլ եկել ես,—զրգռուած ասաց Գալիան ձեռները կողքին դրած և դէպի Ջաղացպանն առաջանալով,—և ոչ թէ քու փողի։

—Թիւ, խելադար աղջիկ,—ասաց Ջաղացպանը էլի մի

երկու քայլ լեռ քաշուելով։—Աստուած վկայ, ալապիսի խեղճ աղջիկ սաղ գեղը ման գաս, չես գտնիլ։ Ոչ միայն սաղ գեղը, հապա սաղ նահանգը։ Դէ ինքդ մտածիր, ինչ ես ասում։ Որ մենակ մայրդ չլինէր, ես քեզ դատարան քաշ կը տալի. բայց մայրդ վկայ չի լինիլ ի հարկէ։ Մէկ լաւ միտք արա, աղջի։

—Ի՞նչ կայ միտք անելու, քանի որ սատանա զուտ ճըշմարտութիւն է։

—Ի՞նչ ճշմարտութիւն, չէ՞ որ պառաւը պարտք է վերցրել ու չէ դարձրել։

—Սուտ ես խօսում, սուտ ես խօսում, չունս։ Երբ դեռ Ջաղացպանի աչքերտ էիր ու ինձ հետ սիլի բիլի անում, ուզում էիր տուն մտնես մեզ մօտ, այն ժամանակ հօ չէիր ասում, թէ լեռ ես ուզելու։ Բայց հէնց որ աղաղ մեռաւ ու ինքդ Ջաղացպան դարձար, այն ժամանակ բոլոր տուածդ լեռ ստացար, դարձեալ քիչ է։

—Հապա ալիւրը։

—Ցեռոյ, ինչ է որ...։ Ի՞նչ արժէր ալիւրը։

—Չափը վաթսուն կոպէկ, ահա ինչ արժէր։ Ուր ուզում ես գնայ, դրանից աժան ոչ ոք չի տալ, թէ կուզ քեզ էլ վրադիր տաս։

—Իսկ մեզանից ինչքան ես աւելի վերցրել։

—Ցես, տես, ուր է գնում։ Քու լեզուդ էլ... Խայրկօի լեզուից պակաս չէ։ Ես էլ դրան կպատասխանեմ—հապա շահը՞։ Հը, առա՞ր։

Բայց Գալիան ալ ես ոչինչ չէր պատասխանում։ Աղջկանց այդ լաճախ է պատահում,—կիսուն կիսուն, կասեն կասեն, ոնց որ ջաղաց, ու յանկարծ կանգ կառնեն...։ Կը կարծես, որ ջուրն է պակաս եկել...։ Բայց որտեղ։ Դառն արտասուքը աղբիւրի նման դուրս վազեց աղջկայ աչքերից. նա մի կողմ քաշուեց ու սպիտակ շապկի թեով սկսաւ աչքերը սրբել։

—Ցեղն է,—ասաց Ջաղացպանը մի քիչ չվոթուած, բայց և այնպէս ուրախանալով։—Ինչի՞ էիր մարդու վրայ յարձակուում։ Որ չհաջալիր, չէիր էլ լաց լինիլ։

—Լռիր, լռիր, լռիր, զզուելի չունս։

—Դէ որ այդպէս է, ինքդ էլ լռիր։

—Լռիր, հոգի ջան, լռիր,—ծանր հառաչելով ասաց

պառաւ մայրը։ Խեղճը վախենում էր, թէ Ջաղացպանը նեղանայ։ Երևում էր, որ պառաւը պարտք տալու ճար չունէր։

—Ջեմ լռիլ, մայրիկ, չեմ, չեմ,—պատասխանեց աղջիկը։ կարծես Ջաղացի բոլոր անիւները նորից սկսան պտտուել։—Սկի էլ չեմ լռիլ թէ որ ուզում է, նրա աչքերն էլ դուրս կքցեմ, որ մէկ էլ չհամարձակուի անունս կոտրել, պատուհանը թակել, համբուրուել.... Ինչու՞ էիր պատուհանս թակում, ասա, թէ չէ հէնց կբռնեմ մազերիցդ որ... չեմ մոռի տալ, որ Ջաղացպան ես և հարուստ։ Առաջ հո քիթդ չէիր բարձրացրել, ինքդ էիր նշանուում ու անուշ խօսքեր ասում։ Իսկ այժմ այնքան ես գլուխդ բարձրացրել, որ գլխարկդ էլ գլխիդ չի մնում։

—Ախ, սուս կաց, զաւակս, իմ խոնարհ որբուկս,—վըշտանար հառաչով նորից ասաց պառաւը։—Իսկ դուք, պան Ջաղացպան, մի նեղանաք աղջկանս վրայ, խելքը չի կարում։ Ջահել խելքն ու ջահել սիրտը—ոնց որ եռացող դարեջուր, մէկ է, համ պղտոր է, համ եռում։ Բայց որ նստի, խմողներին համ կտայ։

—Իսկ ինձ ինչ,—ասաց Ջաղացպանը։—Ես նրա ոչ դառնութիւնն եմ ուզում, ոչ քաղցրութիւնը. ես ձեր ընկերը չեմ։ Դու իմ փողս ինձ տուր, մէկ էլ ով է ձեր խրճթի վրայ նայողը։

—Ախ, ինչ անեմ, չունինք։ Մի քիչ էլ համբերիր, աղջկանս հետ կաշխատենք, կտանք։ Ախ, որ քարտը տամ զըլուխս, երկսիդ համար էլ ցաւի մէջ եմ ընկել, սիրելի Ֆիլիպպ։ Հո դիտես, որդուս պէս սիրել եմ քեզ, որ ասես մըտքովս չէր անցնում, թէ այն պարտքն ինձանից պիտի առնես, այն էլ տոկոսներով...։ Գոնէ մէկ աղջկանս մարդու տալի. լաւ էլ փեսացուներ կան,—բայց նա պինդ կացել, ոչ ոքին չի ուզում գնալ։ Այն օրից, որ դու աղջկանս ժառեցար, դիմել-հմալել ես նրան, ինչ ես արել։ Աւելի լաւ է, ասում է, ինձ սաղ-սաղ գերեզման դնես։ Իմ խելքիս ինչ ասեմ, որ լոյսէ լոյս թողնում էի, որ երկսով այստեղ ահա միասին անցկացնէք...։ Ա՛խ, վա՛յ ինձ...։

—Ես ինչ անեմ,—ասաց Ջաղացպանը։—Պառաւ, մեր բաներին քու խելքդ չի հասնիլ՝—հարուստ մարդու ծախսն էլ շատ կլինի։ Այ, ես էլ չհուզեն պարտք ունիմ—պարտքս տալիս եմ հո։ Դուք էլ ձեր պարտքը տուէք։

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
C.C.P.A Публичная Библиотека
7/XI-1922
ИМЕНИ А. МЯСНИКЯНА
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

—Գոնէ մի ամիս էլ համբերիր։

Ջաղացպանը գլուխը քորեց ու մտածեց։ Պառաւը մի քիչ շարժել էր նրա գութը, մանաւանդ որ մի քիչ դէնն էլ Գալիայի նախշած շապիկն էր սպիտակին տալիս։

—Դէ լաւ, թէ որ այդպէս է, տես, ուրեմն ես էլ մի տասը գրոշ վրայ կ'դամ,—ասաց նա։—Բայց լաւ է վճարէիր։

—Ինչ արած, երևի ճակատիս գիրն է,—հառաչեց պառաւը։

—Դէ ուրեմն այդպէս էլ կլինի։ Ես Ջհուդ հո չեմ, ես էլ սիրտ ունիմ։ Ուրիշը լինէր, հաստատ կասեմ, մի քսան գրոշ անպատճառ կաւելացնէր, իսկ ես միայն տասնով բաւականացայ և մինչև Ֆիլիպովկա էլ քեզ ժամանակ։ Բայց տես, այն ժամանակ արդէն վրադ զանգատ կտամ։

Եւ նա, առանց մնաք բարով ասելու, շուռ եկաւ ու վողջի ճանապարհը մտաւ. նա մինչև անգամ մի չդարձաւ, չնայեցաւ խրճիթի կողմը, որի մօտ դեռ սպիտակին էր տալիս նախշաւոր շապիկը,—բալուտի տակ մութ ստուերի մէջ սպիտակին էր տալիս որպէս սպիտակաւուն աստղ,—և Ջաղացպանը չէր տեսնում, թէ ինչպէս լաց էին լինում սև աչքերը, ինչպէս սպիտակ ձեռները մեկնուած էին դէպի նրան, ինչպէս ախ ու վախ էր անում կուսական կուրծքը։

—Մի լար, հոգիս, մի լար աչքիս լոյսը,—ասում էր պառաւ Պրիսեան։—Մի լար, երևի Աստուած այս է գրել ճակատներիս։

—Ախ, մայրիկ, մայրիկ, գոնէ թողնէիր մէկ նրա աչքերը հանէի, դուցէ մի քիչ թեթևանայի։

III

Սրանից յետոյ Ջաղացպանի մտքերն ասես թէ աւելի նս մռայլեցան։

—Չէ, աշխարքիս վրայ հէնց գիտենաս բաներն այնպէս չեն դառնում, ինչպէս որ պէտքն էր,—մտածում էր նա ինքն իրեն։—Մարդ իրեն միշտ անհաճոյ դրութեան մէջ է զգում, բայց թէ ինչի—ինքդ էլ չես հասկանում...։ Ահա այս բոպէիս աղջիկը վռնդեց ինձ...։ Ջհուդ անուանեց, էյ-է...։ Ես որ Ջհուդ լինէի, ու այդքան էլ փող ունենայի. առուտուրը... միթէ այսպէս կապրէի, ինչպէս այժմ եմ ապրում։ Չէ, այսպէս չէի ապրիլ, ինչ կեանք է իմ կեանքս—Ջաղացում ինքդ

աշխատիր, ոչ գիշերները քուն ունեցիր, ոչ ցերեկը մի փոք հալալ հաց կեր. շարունակ աչքդ չորս պիտի լինի, ջրին մոտիկ տաս, որ ուրիշ տեղ չվազի, երկանքին նայես, գլանը նայես, գլանի ժանանիւներին նայես, ժանանիւների մատներին նայես, որ դուրս չպրծնեն, որ հաւասար առնեն...։ Է՛հ, դեռ անիծուած բանուորին էլ պիտի նայես։ Միթէ բանուորին կարելի է հաւատալ։ Հերիք է մի բոպէ հեռացար, իսկոյն այդ անպիտանն էլ կվեր կենայ, աղջկերանց մօտ կվազէ...։ Շան կեանք է Ջաղացպանի կեանքը, իսկը շան կեանք։ Ուղիղ է, այն օրից, որ աղաս—Աստուած հոգին լուսաւորէ—հարբած-հարբած կանգնած ջուրն ընկաւ ու խեղդուեց, ինքս տէր դարձայ և սկսայ մի փոքր փողի երես տեսնել...։ Բայց էլի օգուտ չկայ։ Մէկ մանէթի ետևից հոգիդ դուրս կգայ, ման ես գալիս, ման ես գալիս, ետևիցդ, նոյն իսկ երեսիդ էլ չասած բաները չի մնում, մինչդեռ—չնչին օգուտ կայ—չնչին բան։ Երբէք քրիստոնեայ ասածդ կարող չէ Ջհուդի նման շահուել։ Ա՛յ, որ սատանան Ջհուդին գեղից վերցնէր,—ինչ եմ ասում, այն ժամանակ կարելի էր մի քիչ գործ անել։ Այն ժամանակ ուրիշ տեղ չէին ունենայ, մենակ ինձ կգային թէ հարկը տալու համար փող վերցնելու, և թէ ապրանքի համար։ Հը՛, կարելի էր գուցէ մի փոքրիկ օգնուն էլ բանալ...։ Իսկ Ջաղացը, կամ կարելի էր մի մարդ դնել, կամ հէնց կծախէի էլ։ Կորչէ։ Հէնց գիտենաս մարդս դեռ մարդ չէ, քանի որ աշխատում է։ Ուրիշ բան է, երբ կոպէկը կոպէկ է բերում։ Ցիմար պիտի լինիս, որ այդ չհասկանաս...։ Երկու խոզ որ պահում ես, մէկ էլ տեսար,—խոզը բազմածին կենդանի է,—մէկ տարուայ մէջ ամբողջ սուրուզարձաւ։ Այդպէս էլ փողն է—բաց ես թողնում չիմար մարդկանց մէջ, ոնց որ արածելու ես ղրկում, միայն չքնես ու նորից ժամանակին տուն քշել կարողանաս՝—կոպէկը տաս կոպէկ կծնի, մանէթը տասը մանէթ...։

Այս միջոցին Ջաղացպանը բարձրացաւ հասաւ այն տեղը, որտեղից ճանապարհը իջնում էր դէպի գետը։ Արդէն դիմացից լսւում էր,—հազիւ հազ, երբ գիշերուայ քամին չնչում էր,—թէ ինչպէս քնաման ջուրը քլքլում էր նաւերի մէջ։ Իսկ ետևը, մի անգամ էլ չետ դառնալով, Ջաղացպանը տեսաւ պարտէզների մէջ քնած գեղը և բարձր սօսիների տակ ալրի կնոջ փոքրիկ խրճիթը...։ Նա կանգ առաւ և գլուխը քորելով փոքր ինչ մտածեց։

—Չը՛, լիմար կլինէի,—ասաց նա վերջապէս ճանապարհը շարունակելով։—Ով է իմանում, այն գիշերը որ աղաս հարբած չլինէր ու լճացած ջրի մէջ չընկնէր, հիմի վաղուց Գալիային շընքիս փաթաթած լինէին։ Իսկ նա հո իմ ընկերս չէ։ Բայց, ա՜հ, ինչքան անուշ է այդ աղջկայ պաչը—ֆուֆ, ինչքան անուշ է...։ Ասացի հո, աչխարքիս վրայ ոնց որ պէտք էր բաներն այնպէս չեն դառնում։ Որ այդ բոյ ու բոսին մի լաւ էլ օժիտ լինէր... ասենք հէնց այնքան, ինչքան որ Կոդնենի Մակոդոնենկոն է տալիս իւր Մատրիային...։ Է՛հ, էլ ինչ խօսք...։

Նա բլրի ստորոտից մի անգամ էլ աչքը լեռ ձգեց, նայեցաւ, և այդ միջոցին գիւղում յանկարծ զանգը հնչեց։ Նա տեսաւ զանգակատունը, որ գեղամիջում, բլրակի վրայ էր շինած։ Կարծես մի բան վէր եկաւ զանգակատնից և, զնգոցով ու օրօրուելով, թռաւ գնաց դաշտերի վրայ։

—Է՛հէ, երևում է արդէն կէս գիշեր եղաւ,—մտածեց նա ինքն իրեն և, բերանը լայն բացած յօրանջելով, շտապով բլրից ցած իջաւ՝ դարձեալ իւր սուրուի մասին մտածելով։ Մանէթներն աչքի առաջից չէին հեռանում. դրանք կարծես կենդանի լինէին, հէնց այն է՝ ձեռքից ձեռք էին անցնում, զանազան գործերի մէջ մտնում, ազատ արածում իրենց համար և աճում, բազմանում։ Նա մինչև անգամ ծիծաղեց մտածելով, թէ ինչպէս զանազան լիմարներ կարծում են, թէ իրենք իրենց համար են աչխատում։ Բայց կհասնի ժամանակը, և նա, հոտի տէրը, այդ ամենը իրենց սերունդով կքշէ, կըտանէ ու իւր երկաթապատ սնդուկը կլցնէ։

Եւ այս ամենը հաճելի մտքեր էին։ Միայն երբ Ջնուդը միտքն ընկաւ, հաճելի մտքերը նորից փչացան։ Ջաղացպանը տխրեց, որ Ջնուդը բոլոր արօտատեղերը իւր ձեռքն է ձգել, և իւր խեղճ մանէթները ոչինչ չունին ապրելու, տեղ չունին բազմանալու, նման ոչխարների հոտին, որն արօտ է դուրս եկել այն տեղի վրայ, ուր արդէն եղել են Ջնուդի այծերը...։ Ի՞ հարկէ որ այդտեղ կշտանալու բան չես գտնիլ...։

—Էրնէկ սատանան տանէր, պրծնէինք այդ անիծեալից,—մտածեց Ջաղացպանը, և նրան թուաց, թէ հէնց այդ է պատճառը, որ ինքն այսպէս տխուր էր...։ Աչխարքիս երեսին հէնց այդ է վատը։ Անիծեալ Ջնուդները չեն թողնում, որ քրիստոնեան իւր արդիւնքը հաւաքէ...։

Այստեղ, բլրի կիսին, որտեղ նաւերի ջրի խաղաղ և ատես թէ քնամած խոխոջն արդէն շարունակ լսելի էր լինում,—յանկարծ Ջաղացպանը արձանի նման կանգ առաւ, և ձեռքով ճակատին խփեց։

—Վա՜հ, ինչ բան կլինէր... ճշմարիտ Աստուած, լաւ բան կլինէր։ Հէնց այսօր էլ ուղղակի դատաստանի օրն է։ Ինչ կասես, որ Ջնուդի սատանան մեր Եանկէլին ջոկած լինի...։ Բայց չէ. այդ լինելու բան չէ։ Քաղաքում Ջնուդների տեղը չատ։ Մանաւանդ որ Եանկէլը—ծանր մարմնով, ծերունի, ոսկրն ու կաչին մնացած մի Ջնուդ է։ Ի՞նչ շահ նրանից։ Ոչ, Ջաղացպանն այն բազդը չունի, որ հազարաւորների միջից Զանչոզը հէնց Եանկէլին ջոկէ։

Մի բոպէ Ջաղացպանի գլխում, անհանգիստ մրջիւնների նման, ուրիշ մտքեր վխտացին.

—Է՛հ, Ֆիլիպպ, Ֆիլիպպ. քրիստոնէին վայել չէ այնպիսի բաներ մտածել, որ դու ես մտածում. Խելքդ գլուխդ ժողովիր։ Եանկէլի որդիքը հո կմնան, դարձեալ պարտքդ պիտի տաս...։ Երկրորդ էլ որ մեղք ես գործում,—Եանկէլը քեզ վատութիւն չի արել։ Դուցէ ուրիշները պատճառ ունին ձեր միքիտանին անիծելու, բայց չէ՞ որ դու էլ չես քաշուիր ուրիշներից վաչխ առնելուց ...։

Բայց այս անդիւրեկան մտքերի վրայ, որոնք չան նման խածոտում էին նրա խիղճը, նա բաց թողեց աւելի կատաղած մտքեր։

—Բայց էլի Ջնուդը Ջնուդ է. քրիստոնեայի թալը չէ։ Թէ որ ես վաչխ առնում էլ եմ,—էհ, կարո՞ղ չեմ ասել, թէ չեմ առնում. առնում եմ ի հարկէ,—գոնէ, կարծում եմ, դարձեալ լաւ է տոկոսը քրիստոնեայի տալ, քան անհաւատ Ջնուդի։

Այս միջոցին զանգակատնից լսուեց զանգի վերջին հարուածը։

Երևի ժամհարը, Իվան Կաղիլօն, ժամի մօտ քնած, քունը դլխին քաչել է զանգի թոկը—այնքան երկար խփեց կէս գիշերը։ Բայց վերջին անգամը, երևի ուրախանալով որ վերջինն է, այնպէս ուժեղ խփեց, որ Ջաղացպանը մինչև անգամ ցնցուեցաւ՝ երբ սարի քամակից զնգոցը զօղանջեց նրա գլխի վերևը, և գետակից անցնելով փռուեց անտառի վրայ, հեռաւոր դաշտերի վերև, որոնց միջով պտույտ-պտույտ անցնում է քաղաքի ճամբան...։

«Հիմա աշխարքում ամենքն էլ քնած են,—ինքն իրեն մտածեց Ջաղացպանը, և մի բան կարծես նրա սրտին խփեց։ —Ամենքն իրենց տեղում քնած են, մենակ ջհուդներն են խռնում իրենց աղօթատանն ու լաց լինում, մէկ էլ ահա ես, անթաղ մնացած մեռելի նման, կանգնած եմ լճացած ջրի մօտ վատ վատ բաներ միտք անում...»

Եւ շատ տարօրինակ թուաց նրան այդ ժամը...

«Լսում եմ որ,—ասում է,—զանգի ձայնը մարում է դաշտում, բայց միևնոյն ժամանակ թւում է, թէ մի աներևոյթ բան կողմնակի ճանապարհով վազ է տալիս, հառաչում...։ Տեսնում եմ դետակի միւս կողմը անտառը, որ ամբողջապէս թաթախուած է ցողի մէջ, և ցողը փայլփլում է լուսնի շողով, իսկ ինքս մտածում եմ,—այս ինչպէս է, որ մի այսպիսի ամառ գիշեր սառնամանիքի եղեամով է պատած դա։ Եւ երբ այն էլ միտս ընկաւ, թէ ինչպէս աղաս լճակի մէջ խեղդուել էր,—ես հո այդ բանի վրայ շատ էի ուրախացել,—բոլորովին սիրտս փորս ընկաւ։ Ոչ գիտեմ Ջաղաց գնամ, ոչ գիտեմ տեղս կանգնած մնամ...»։

—Գաւրիլօ. հէյ, Գաւրիլօ,—կանչեց նա իւր Ջաղացի բանուորին։—Հէնց այդպէս էլ է. անառակը Ջաղացը դատարկ թողել, գել է վազել, աղջկերանց մօտ գնացել։

Ֆիլիպպը լոյս տեղ, ամբարտակի վրայ ելաւ։ Լսում է՝ ջուրը ծոր է տալիս ջրարգելի տակից, իսկ նրան այնպէս է թւում, թէ մէկը դաղտագողի դուրս է գալիս լճակից ու անիւների վրայ մագլցում...։

«Է՛հ, աւելի լաւ է գնամ քնեմ»—մտածեց նա...։ Բայց մի անգամ էլ ետեր դարձաւ, նայեցաւ։

Լուսինը վաղուց էր երկնքի ամենաբարձր կէտից անցել ու ջրի մէջը նայում...։ Ջաղացպանը զարմանում էր, թէ որտեղից է իւր փոքրիկ դետակի մէջ այդքան խորութիւն,—համ լուսինն էր տեղաւորուել, համ կապոյտ երկինքը իւր բոլոր աստղերով մէկտեղ, համ էլ այն փոքրիկ մութ ամպը, որը սակայն փետրի նման թեթև ու արագ թռչում էր քաղաքի կողմից։

Բայց որովհետև արդէն նրա աչքերը փակւում էին, ուստի և նա երկար ժամանակ զարմացած չմնաց և, բանալիքով բաց արաւ դրսի դուռը, ներսից քաշեց սողնակը, որպէս զի իմանայ, թէ երբ է վերադառնալու բանուորը—գնաց, մտաւ իւր անկողինը...։

IV

—Ը՛հը՛, դէհ վեր կաց Ֆիլիպպ...։ Այ քեզ օրին,—յանկարծ մտածեց նա մթնում անկողնից վեր կենալով, կարծես մէկը մուրճով գլխին հասցրած լինէր։—Ինչպէս մտահան էի արել՝—ախր այդ քաղաքից եկողը հէնց այն ամպն է, որ նոր քաղաք էր թռչում, և դեռ ջհուդի վարձուորի հետ էլ զարմացանք, թէ առանց քամու է շարժւում։ Այժմս էլ կարծես մի մեծ քամի չկայ և եղածն էլ այն կողմից չէ։ Սպասիր։ Այստեղ մի բան կայ...։

Նա բոբիկ ոտով դուրս եկաւ և, փորն ու մէջքը քորելով, կանգ առաւ ամբարտակի ուղիղ մէջ տեղը։ Առաջը թումբ բռնած դետակի կողմից հովը փչում էր նրա մէջքին, իսկ առջևից ուղղակի դէպի նրան էր գալիս փոքրիկ ամպը։ Միայն այժմս դա առաջուայ պէս թեթև չէր և այնպէս աղատ ու համաչափ չէր թռչում, հապա կարծես թեթևակի տատանւում էր և, գնդահար եղած թռչնի նման, դէպի ցած էր գալիս։ Երբ որ ամպը հասաւ լուսնի դէմը, այն ժամանակ արդէն Ջաղացպանը պարզ հասկացաւ, թէ ինչ բան էր դա, որովհետև պայծառ լուսնի առաջ որոշակի երևացին սև թևերը, իսկ նրանց ներքևում էլ մի երկայն, դմբդմբացող մօրուքով կուչ եկած մարդու պատկեր...։

—Է՛յ-հա։ Դու բանը տես,—մտածեց Ջաղացպանը։—Մէկին չանչել է։ Ի՞նչ անեմ։ Թէ կանչեմ—«թող, այդ իմն է»—վայ թէ խեղճ ջհուդը ջարդ ու բուրդ լինի կամ խեղդուի։ Բարձր է։

Բայց այստեղ նա տեսաւ, որ բանը փոխւում է—սատանան իւր որսի հետ օդի մէջ մի պտոյտ արաւ և սկսաւ կամաց-կամաց ցած գալ։ «Երևում է ազատութիւն է արել ու իւր ուժից վեր բեռն է առել,—մտածեց Ջաղացպանը։—Է՛հ, այժմ կարելի է ջհուդին ազատել, որքան չլինի էլի մարդ է, հոգի ունի, սատանին հաւասար չէ։ Դէ, երեսս խաչակնքեմ ու ինչքան կարող եմ գոռամ»։

Բայց այդ անելու տեղ, նա ինքն էլ չէ իմանում ինչպէս է լինում, որ քանի ոտներում ուժ կայ, փախչում է ամբարտակից և թաք կենում խիտ ուռենիների տակ, որոնք իրենց կանաչ ճիւղերը, պարիկի նման, թրջում էին Ջաղացի հաւաքուած ջրի մէջ։ Այդտեղ ծառերի տակ այնպէս մութն

էր, որ կարծես զնդան լինէր, և Ջաղացպանը հաւատացած էր, թէ ոչ ոք իրեն չի տեսնիլ։ Եւ, ուղիղը պէտք է ասել, այդ միջոցին նրա ատամը ատամին չէր կպչում, իսկ ձեռքն ու ոտքն այնպէս էին դողդողում, կարծես Ջաղացքի չախչախ լինէր։ Բայց և այնպէս շատ էր հետաքրքրւում տեսնելու, թէ ինչ է լինելու։

Սատանան իւր բեռը չանչած մէկ քաշանում, դէպի գետին էր իջնում, մէկ ելնում, անտառից վերև բարձրանում, բայց երևում էր, որ Նրա ուժի բանը չէ դա։ Մի երկու անգամ մինչև իսկ ջրին դիպաւ, և ջհուդի ջրին կպչելուց գետակի վրայ շրջաններ կազմուեցան, բայց իսկոյն ջարը թափահարում էր թևերն ու իւր որսի հետ բարձրանում նման ձկընկուլի, որ ջրի միջից մի խոշոր ձուկն է հանում։ Վերջապէս օդի մէջ երկու թէ երեք լայն շրջան արաւ և ուժաթափ եղած շրխկաց, մեռածի նման ամբարտակի մէջ տեղը փռուեցաւ։ Լեղապատառ եղած ջհուդն էլ նրա կողքին ընկաւ։

Սակայն պէտք է ձեզ ասեմ,—չգիտեմ ինչու մոռացել էի,—որ մեր Ջաղացպանն արդէն վաղուց էր ճանաչել, թէ ումն էր Զանչողը քաղաքից քաշ տալիս։ Իսկ երբ ճանաչեց,—ինչ ունիմ թաքցնելու, երբ որ հէնց ինքն էլ խոստովանուեց այդ,—խնդում եղաւ, զուարթացաւ։ «փառք քեզ Աստուած,—ասաց նա ինքն իրեն,—հէնց ինքն է, մեր Նովոկամենկայի միկիտանը։ Դէ, երևի մի բան կլինի։ յամենայն դէպս կարծում եմ, ես գործ չունիմ դրա մէջ խառնուելու, որովհետև երկու շուն կռուելիս, երրորդը չպէտք է նրանց մօտենայ...։ Մանաւանդ որ, ես ինչ կապ ունիմ դրանց հետ, հէնց ասենք ոչինչ էլ չեմ իմացել...։ Դուցէ այստեղ չէի գտնուում,—հապարտական չեմ։ Ջհուդի ճամբան նայելու...»։

Եւ մէկ էլ ինքն իրեն մտածեց։ «Դէ, Ֆիլիպպ, այժմ արդէն ահա քու օրիկդ բացուեց...»։

V

Երկար ժամանակ երկուսն էլ—թէ խեղճ Ջհուդը և թէ դևը—անշարժ ընկել էին ամբարտակի վրայ։ Լուսինն արդէն սկսել էր կարմրել, դէպի մուտը խոնարհել և կախուած մնացել էր անտառի վրայ, կարծես նա էլ ուզում էր իմանալ, թէ ինչ է լինելու վերջը...։ Գիւղում մի աքլոր խռղած ձայնով

գանչեց, իսկ մի շուն էլ մի երկու անգամ հաչեց, երևի վատ երազ պիտի տեսած լինի։ Բայց ոչ միւս աքլորները, ոչ միւս շները նրանց չհետևեցին,—երևում է, որ լոյսը բացուելուն դեռ բաւական ժամանակ կար։

Ջաղացպանը ցնցուեց և սկսաւ կարծել, թէ այս ամենը երազ է, մանաւանդ որ ամբարտակն արդէն մթան մէջ էր և պարզ չէր երևում, թէ ինչ է ամբարտակի մէջ տեղում սևին տալիս։ Բայց երբ գեղից աքլորի ձայնը հառաւ, սև կոյտը սկսաւ շարժուել։ Եանկէլը բարձրացրեց թասակ ծածկած գլուխը, չորս կողմը նայեցաւ, վերկացաւ տեղիցը և կամացուկ, վտիտ ոտները արագիլի նման վեր-վեր բարձրացնելով, ուզեց փախչել։

—Հէյ, հէյ, բռնիր, թէ չէ կփախչի,—քիչ էր մնում կանչի վախեցած Ջաղացպանը, բայց տեսաւ, որ դևն արդէն բռնել է Ջհուդի երկար փեշից։

—Սպասիր,—ասաց նա,—դեռ վաղ է...։ Տես մի, ինչ ճարպիկն է եղել։ Ես դեռ չեմ հանդստացել, իսկ դու արդէն ուզում ես ճանապարհը շարունակել։ Քու բանդ հեշտ է ի հարկէ, բայց մէկ ինձ էլ հարցրու, հնչտ է քեզ նման անագին մարդ տանելը։ Քիչ է մնում հոգիս դուրս գայ։

—Լաւ,—ասաց Ջհուդն աշխատելով իւր փեշն աղատել, դուք ինչքան ուզում էք հանդստացէք, իսկ ես ոտքով էլ կարող եմ օգտուսս հանել։

Դևը մինչև անգամ վեր կացաւ, նստաւ։

—Ինչ...։ Ես քո քրեհղարն եմ, ինչ է, որ քեզ աղօթանից տունդ հասցնեմ, շուն չան որդի։ Դեռ հանաք ես անում...։

—Ի՛նչ հանաքի ժամանակ է,—պատասխանեց խորամանկ Եանկէլը որպէս թէ բոլորովին չհասկանալով, թէ ինչու է դևն իրեն բռնել։—Շատ չնորհակալ եմ, որ մինչև այստեղ հասցրիք, իսկ այստեղից ես ինքս էլ կգնամ։ Շատ տեղ չէ։ Ինչու անհանգիստ լինիք որ։

Բարկութիւնից դևը տեղիցը վեր թռաւ։ Նա վեր-վեր ընկաւ, հէնց գիտենաս գլուխը կտրած հաւ լինէր, և թևի մէկ հարուածով գետին գլորեց Եանկէլին, ու ինքը, պատառի փուքսի նման սկսաւ չունչ քաշել։

—Ա՛յ այդպէս,—մտածեց Ջաղացպանը։—Դուցէ դևին գովելը մեղք էլ է, բայց այս բանը հաւանեցնել,—ինչպէս երևում է նա իւր որսը բաց չի թողնիլ։

Եանկէլը պպզեց ու սկսաւ խիստ բարձր ձայնով կանչել։ Այստեղ սատանան ալ ես կարող չէր բան անել՝—քանի՞ ջՀուղի չունէը բերանն է, ոչ մի հնար չկայ նրա ձայնը կըտրելու—մէկ ձայնի կկանչէ։ «Բայց ինչ օգուտ,—մտածեց Ջաղացպանը դատարկ ջաղացին նայելով։—Հիմա բանուորս աղջկերանց հետ է, կամ թէ չէ հարբած վեր ընկած կլինի մի որ և իցէ ցանկապատի տակ»։

Ի պատասխան խեղճ Եանկէլի սրտաճմլիկ լացին մենակ քնէած գորտը կրկռաց ճահճի մէջ, մէկ էլ բուն, ալդ գիշերային անիծեալ թռչունը, ցատկեց եղեգնուտի մէջ ու մի երկու անգամ, ասես թէ դատարկ տակառի միջից, ձայնը ձգեց—բու-ու, բու-ու...։ Լուսինը, կարծես համոզուած, որ ջՀուղի բանն արդէն պրծած է, բոլորովին անտառի ետևը մտաւ, և թանձր խաւար իջաւ ջաղացի վրայ, ամբարտակի վրայ, գետի վրայ, իսկ ճահճացած լճակի վրայ սպիտակ մշուշ բարձրացաւ։

Դենը անհոգաբար թեները շարժեց, յետոյ նորից պառկեցաւ, ձեռքերը ծալեց գլխի տակ և ծիծաղեց։

—Ինչքան ուզում ես կանչիր։ Ջաղացքում մարդ չկայ։

—Ո՞րտեղից գիտէք,—սրանեղած ասաց հրէան և շարունակեց կանչել, այս անգամ արդէն ուղղակի ջաղացպանին դառնալով.

—Պարոն ջաղացպան, օյ պարոն ջաղացպան։ Արծաթ, ոսկի, շողակ պարոնս։ Աղաչում եմ, միայն մէկ բոպէ, մի ամենաչնչին բոպէ միայն դուրս եկէք այստեղ, ու միայն չորս բառ, չորս ամենամանրիկ բառ ասացէք։ Դրա փոխարէն ես ձեր պարաքի կէսը կբաշխեմ ձեզ։

—Բոլորն էլ ինձ կլինի,—պատասխանեց մի բան ջաղացպանի գլխի մէջ։

ՋՀուղը գլուխը քաշ զցած սուս եղաւ, և սկսաւ աղի արցունք թափել։

Բաւական ժամանակ էլ անցաւ։ Լուսինը բոլորովին մայր էր մտել և վերջին շողերը հանդան ամենաբարձր ծառերի կատարներին, թէ երկնքում և թէ երկրիս վրայ կարծես ամեն ինչ խոր քուն էր մտել. ոչ մի տեղից ոչ մի ձայն-ծպուտ չէր լսւում, միայն ջՀուղը կամացուկ լաց էր լինում ու ասում.

—Օյ, իմ Սուրաս, օյ, իմ զաւակներս, իմ խեղճ զաւակներս...։

Դենը փոքր ինչ հոգնութիւն առած, վեր կացաւ, դեռ

դարձեալ կզացած նստաւ ամբարտակի վրայ։ Թէպէտ մութն էր, բայց էլի ջաղացպանի աչքովն ընկաւ մի զոյգ եղջիւր, նման երնջի եղջիւրներին, որ պարզ երևում էին լճակից բարձրացող մշուշի վրայ։

—Խ՛սկը մերինի նման է,—մտածեց ջաղացպանն ու իրեն այնպէս զգաց, որպէս թէ մի խիստ սառը բան՝ կուլ տուած լինէր։

Նա ալդ միջոցին նկատեց, որ ջՀուղը դեին թեով բոթում է։

—Ի՞նչ ես բոթբոթում,—հարցրեց դենը։

—Սսս։ Լսիր ինչ եմ ասում...

—Ի՞նչ։

—Ասացէք խնդրեմ, սա ինչ սովորութիւն է, որ անպատճառ խեղճ ջՀուղ էք չանչում...։ Ինչի՞ մի լաւ գոյ չէք վերցնում։ Այ այստեղ մօտիկ մի լաւ ջաղացպան կայ...։

Դենը խորը ախ քաշեց։ Գուցէ նա էլ էր դատարկ ջաղացի կողքին, լճակի մօտ նստելուց ձանձրացել. ինչ որ է՝ սկսաւ ջՀուղի հետ զրոյց անել։ Նա վեր առաւ գլխի թասակը,—պէտք է ձեզ ասեմ, որ վարձուորի պատմածին պէս, ճշմարիտ որ գլխին թասակ ունէր ծածկած, իսկ թասակի տակից կախ էին ընկած երկայն դաւիկները,—եղունգներով գլուխը պինդ քորեց ճիշտ այնպէս, ինչպէս չարացած կատուն ճանկերով ճանկռտում է տախտակը, երբ մուկը փախչում է ձեռքից,—և յետոյ ասաց.

—Ախ, Եանկէլ, դու մեր փեշակը չգիտես։ Ես նրանց մօտենալ անգամ կարող չեմ։

—Բայց իրաւունք տուէք հարցնելու, ինչ մի դժուար բան կայ այդտեղ, ինչ կայ երկար մտածելու։ Ես հո գիտեմ, թէ ինչպէս յանկարծ չանչեցիք ինձ. մինչև անգամ ձայն հանել չկարողացայ։

Դենը ուրախ-ուրախ քրքչաց, այնպէս որ մինչև անգամ ճահճի մէջ մի գիշերային թռչունի վախեցրեց, և ասաց.

—Ինչ որ ուզիր է՝ ուզիր է—ձեզ հեշտ է չանչելը...։ Բայց գիտես ինչու։

—Ինչու։

—Նրա համար, որ ինքներդ էլ շատ լաւ չանչող էք։ Այսքանս ասեմ, որ աշխարքիս երեսին էլ ձեզ նման մեղաւոր ազգ չկայ։

—Օյ-վեյ, զարմանալի բան։ Բայց ինչ է մեր մեղքը։ Ասեմ՝ լսիր...

Դեռը դարձաւ դէպի Ջհուդն ու սկսաւ մատների վրայ հաշուել։

—Մարգկանցից վաչխ էք առնում—մէկ։

—Մէկ,—ասաց Եանկէլը նոյնպէս մատը փակելով։

—Ուրիշների արիւն-քրտնքովն էք ապրում—երկու։

—Երկու։

—Մարգկանց արաղով հարբացնում էք—երեք։

—Երեք։

—Բացի այդ արաղի մէջ ջուր էք խառնում—չորս։

—Ասենք լինի չորս։ Ուրիշ։

—Այսքանս հերիք չէ։ Ախ, Եանկէլ, Եանկէլ։

—Ես հո չեմ ասում քիչ է, միայն այս եմ ասում, թէ դուք ձեր գործը չէք հասկանում։ Կարծում էք Ջաղացպանը վաչխ չէ առնում, կարծում էք Ջաղացպանը ուրիշների արիւն-քրտնքով չէ ապրում...

—Դէ, Ջաղացպանի վրայ ստեր մի դուրս տալ։ Նա այդպէս մարդ չէ—նա քրիստոնեայ է։ Իսկ քրիստոնեան պէտք է խղճայ ոչ միայն իւրայիններին, հապա և օտարներին, խոսքի վրայ հէնց ձեզ, Ջհուդներիդ։

—Օյ-վայ, այդ ինչ մեծ սխալ է,—ուրախ-ուրախ բացականչեց Ջհուդը։ Ուրեմն, այ ձեզ ինչ կասեմ...

Նա վեր թռաւ տեղից, դեռն էլ վեր կացաւ, և երկուսը կանգնեցին իրար դէմ։ Ջհուդը իւր ուսի վրայից մատով ուռենիների կողմ ցոյց տալով մի բան չչնջաց և, մատը փակելով, ասաց սատանային։

—Մէկ։

—Սուտ ես ասում, այդպէս բան կարող չէ լինել,—ասաց սատանան մինչև անգամ փոքր ինչ վախեցած, և նայեցաւ ուռենիների կողմը, ուր թաք էր կացել Ֆիլիպը։

—Հըմ, ես աւելի լաւ գիտեմ։ Դեռ սպասեցէք։

Նա նորից չչնջաց ու ասաց.

—Երկու։ Իսկ այս էլ—և նա դարձեալ սատանի ականջին մի բան չչնջաց—եղաւ երեք, աղնիւ խոսք...։

Սատանան գլուխը շարժեց և մտքի ծոմն ընկած կըրկնեց.

—Անկարելի բան։

—Եկէք գրաղ դանք։ Թէ որ ասածներս ուղիղ լինին, այն ժամանակ մի տարուց ինձ բաց կթողնէք և դեռ ինձանները էլ կբաշէք...։

—Հըմ, հըմ, Համաձայն եմ։ Ա՛յ օյին կլինէր։ Այն ժամանակ ես իմ ոյժս կփորձէի...

—Հաւատացնեմ, չատ շահաւէտ գործ արած կլինէք...

Այս միջոցին միենոյն աքլորը կանչեց գիւղում, և թէպէտ նրա ձայնը դարձեալ ուռաջուայ պէս քնաթաթախ էր և դարձեալ գիշերային լռութեան մէջ ոչ ոք ոչ մի տեղից նրան հետևող չեղաւ, բայց Ջանչողը սթափուեց։

—Է՛, դու ինձ այստեղ հեքեաթներ ես պատմում, իսկ ես էլ ականջներս կախած լսում եմ։ Այսօրուայ ձուն վաղուայ հաւից լաւ է։ Պատրաստուիր։

Դեռը թեերը շարժեց, երկու սաժէնի չափ ամբարտակից վեր բարձրացաւ և նորից ուրուրի նման յարձակուեց խեղճ Եանկէլի վրայ և չանչերը ձգելով նրա պարեգօտի մէջքին, պատրաստուեցաւ թռչելու...

Ոհ, ինչ աղեկտուր ձայներ էր արձակում ծերունի Եանկէլը՝ ձեռները մեկնելով դէպի այն կողմը, ուր սարի միւս երեսին գիւղում օղետունն էր գտնուում, և մէկ մէկ իւր կնոջ ու զաւակների անունն էր տալիս։

—Օյ, իմ Սուրաս, օյ Շլէօմիկս, Իտելէս, Մովշէս։ Օ՛յ պարոն Ջաղացպան, պարոն Ջաղացպան, աղաչում եմ, օգնեցէք, չորս բառ միայն ասացէք։ Ես ձեզ տեսնում եմ, այ այդտեղ, ուռենու տակ թաք էք կացել։ Խղճացէք խեղճ Ջհուդիս, չէ՞ որ Ջհուդն էլ կենդանի հոգի ունի։

Շատ սրտամտիկ էր խեղճ Եանկէլի աղաչանքը։ Կարծես մէկը Ջաղացպանի սիրտը բռների մէջ առած ճմլում լինէր։ Իսկ սատանան ասես թէ մի բանի էր սպասում,—շարունակ նոր թև ելած թռչնի նման թափահարում էր թեները և Եանկէլին ամբարտակի վրայ ծանր-ծանր տարուբերում...

«Ի՞նչ ցածմտքի դև է,—մտածում էր Ջաղացպանն աւելի ևս թաքնուելով ուռենու ետևը,—միայն տանջում է խեղճ Ջհուդին։ Դու բանը տես որ, չուտով աքլորներն էլ կսկսեն կանչել...»։

Եւ նոր էր մտածել այսպէս, որ դեռը բարձր ձայնով ծիծաղեց, ձայնը փռուեց գետի վրայ և մթանգամից թռաւ, բարձրացաւ վերև...։ Ջաղացպանը գլուխը վեր բարձրացրեց,

բայց մի բոպէից արդէն սատանան ագռաւի չափ էր երևում, յետոյ ծտի չափ, յետոյ ճանճի, մժղուկի, և անհետացաւ։

Հէնց այստեղ վախ ընկաւ Ջաղացպանի վրայ,—ծնկները դողդողում էին, ատամներն իրար խփում, մազերը քիշ-քիշ կանգնել, այնպէս որ, թէ այդ միջոցին գլխին գլխարկ լինէր, վեր կընկնէր. և այնուհետև ինքն էլ չէ լիշում, թէ ինչպէս իւր ոտները նրան Ջաղաց, իւր խուցն են հասցրել...։

VI

—Թխ-թխկ...

—Թխ-թխ-թխկ... թխ-թխկ...

Մէկը Ջաղացի դուռն էր թխկացնում, և այն էլ այնպէս պլինդ, որ սաղ չէնքը աղմուկով լցուել, ամէն կողմից արձագանք էր տալիս։ Ջաղացպանը վախեցաւ—չլինի՞ սատանան յետ լինի դարձած,—ի զուր հո չէր Ջհուդի հետ մի բան փըսփսում,—ուստի գլուխը կոխեց բարձի տակ։

—Թխ-թխկ... թխ-թխկ...։ Է՛յ, աղա, դուռը բաց։

—Ջեմ բանայ։

—Ինչո՞ւ չէք բանա՞յ։

Ջաղացպանը գլուխը բարձրացրեց։

«Հը՞, հէնց գիտենաս բանուորիս, Գաւրիլօի ձայնը լինի...»—Գաւրիլօ, դո՞ւ ես։

—Էլ ո՞վ կլինի։

—Հապա՞ երդում կեր։

—Դէ Աստուած վկայ ես եմ։ Ո՛վ է իմացել, որ ես ինքս լինիմ ու ես չլինիմ։ Դեռ արի դրա համար երդում կեր։ Զարմացք բան...

Բայց և այնպէս Ջաղացպանս իսկոյն չհաւատաց։ Նա վերև բարձրացաւ ու կամացուկ դռան վերևի փոքրիկ պատուհանից դուրս նայեցաւ։ Ուղիղ որ, ներքևը պատի մօտ կանգնած էր բանուորն ու մի այնպիսի բան անում, որ դուցէ ոչ ոք էլ լսած չլինի, թէ սատանաները մի այդպիսի բան անեն։ Հէնց իմանաս ծանր քար վերցրին Ջաղացպանի սրտի վրայից, նա ցած իջաւ ու դուռը բաց արաւ։

Որ Ջաղացպանին դրանը չտեսաւ, բանուորը նոյն իսկ յետ-յետ քաշուեցաւ։

—Այդ ինչ է հալդ, աղա։

—Ի՞նչ կայ որ։

—Այդ ինչ ես արել, ինչի՞ սաղ երեսդ ալրի մէջ թաթախել—պատի նման սպիտակել ես։

—Իսկ դու տղայ, հո դետակի մօտով չես եկել։

—Դետակի մօտովը եմ եկել։

—Իսկ վերև մտիկ չես տուել, այ տղայ։

—Վերև էլ եմ մտիկ տուել։

—Այ տղայ, հո չես տեսել, իքին...

—Ո՞ւմը։

—Ո՛ւմը...։ Ցիմար։ Ումը պիտի լինի, նրան, որ օղեվաճառ Յանկէլին չանչած տանում էր։

—Ո՞վ պէտք է նրան չանչած լինի։

—Ո՛վ...։ Ի հարկէ Ջհուդների դեը, Զանչողը։ Միթէ չը գիտես նրանց ինչ օրն է այսօր։

Բանուորը պղտոր աչքով նայեց Ջաղացպանին ու հարցրեց.

—Իսկ դուք, աղա, դեղ գնացել էք։

—Գնացել եմ։

—Իսկ օղետուն հո չէք մտել։

—Մտել եմ։

—Եւ օղի հո անուշ չէք արել։

—Թիւհ։ Արի ու լիմարի հետ զրոյց արա։ Հէնց նոր՝ ես իմ աչքովս տեսայ—սատանան Ջհուդի հետ ամբարտակի վրայ հոգնութիւն էր առնում։

—Որտե՞ղ։

—Ա՛յ այստեղ, հէնց մէջ տեղը։

—Ցետո՞յ։

—Ցետոյ, առաւ ու...—Ջաղացպանը չվվացրեց ու ձեռքը շարժեց օդի մէջ։

Բանուորը նայեցաւ ամբարտակին, յետոյ, աչքը երկինք բարձրացրեց ու գլուխը քորեց։

—Ա՛յ քեզ զարմանալի բան։ Հիմա ինչ պիտի լինի։ Ի՞նչ պիտի անենք առանց Ջհուդի։

—Ինչիդ է անպատճառ Ջհուդը, հը՞։

—Ջեմ ասում, թէ ինձ է պէտք...։ Բայց էլի...։ Է՛, մի ասէք, աղա—առանց Ջհուդի, կարծես, էն չի... առանց Ջհուդի եօլա չի գնացուիլ...

—Բան ասաց...։ Ախմախ ես ծնուել, ախմախ էլ կըմեռնես։

—Հ՛ը, ինչ էք անպատիւ անում։ Ձեմ ասում, թէ ես խելօք եմ, բայց և այնպէս գիտեմ հո սեր որն է, սպիտակը որը։ բանելու համար ջաղաց եմ գալիս, իսկ խմելու—օղեռուն։ Թէ որ այդքան խելօք էք, դէ ասացէք տեսնեմ—այժմ ով է մեզ համար օղեռուն պահելու։

—Ո՞վ։

—Հա, ով։

—Հէնց ասենք ես։

—Դու։

Բանուորը աչքերը չռած մտիկ տուաւ Ջաղացպանին, յետոյ գլուխը շարժեց, լեղուով շրխկացրեց և ասաց.

—Հա, թէ որ այդպէս լինի, չգիտեմ։

Ջաղացպանը նոր նկատեց, որ բանուորը ոտների վրայ պինդ կանգնել չի կարողանում և ձախ աչքը նորից կապտացրել են։ Եւ ուզիղն ասած, մի այնպիսի անճոռնի երես ունէր այս բանուորը, որ մարդ տեսնելիս հէնց ուզում էր երեսին թքի։ Բայց դուք բանը տեսէք, որ աղջկերանց մօտ խիստ աջողակ էր և շատ անգամ են ջահելներն աշխատել նրան թալաքի մէջ ձգել, և երբ ձեռքերն է ընկել, այնքան են տուել, որ ջանումը հալ չէ մնացել...։ Որ նրան թակում էին—այդ զարմանալու բան չէ, հապա զարմանալին այն է, որ թակելու պատճառ ունէին։

«Աշխարքումս չկայ մի զզուելի մարդ,—մտածեց Ջաղացպանը նրան նայելով,—որ գոնէ մի աղջիկ չսիրէր նրան։ Բայց այսպիսիներին սիրում են երկու, երեք, տասը... աղջիկ։ Թիւհ, գրողը տանէ...»։

—Դիտես ինչ կայ, Գաւրիլուշկա,—բայց էլի քաղցրութեամբ ասաց Ջաղացպանը,—եկ, իմ կողքին քնիր։

Երբ մարդս տեսնում է այն, ինչ որ ես եմ տեսել, կարծես վախ է ընկնում վրան։

—Ինչ կայ։ Կգամ, կպառկեմ։

Մի վայրկեան անցած-չանցած, բանուորն արդէն խռմփում էր։ Այս էլ ասեմ,—մի գիշեր ես էլ եմ Ջաղացում քնել,—այդ բանուորի նման խռմփացնող մարդ էլ դժուար թէ լինի։ Ով որ խռմփոց չի սիրում, լաւ կանի նրա հետ մէկ սենեակում չքնի,—սաղ գիշերը անքուն կմնայ...։

—Գաւրիլո,—ասաց Ջաղացպանը,—էյ, Գաւրիլո։

—Ի՞նչ կայ էլի. ոչ ինքդ ես քնում, ոչ էլ թողնում ես որ ուրիշը քնի։

—Քեզ դարձեալ ծեծեցին։

—Ցետոյ, ինչ։

—Ո՞րտեղ։

—Ուզում էք ամեն բան իմանալ։ Կողնայում։

—Կողնայում էլ...։ Ի՞նչ գործ ունէիր այնտեղ։

—Ի՛նչ գործ...։ Ինչիդ է, որ հարցնում ես, հի, հի, հի...։

—Նովո-Կամենկալի աղջկերքը քեզ հերիք չեն, ինչ է։

—Թիւհ։ Ձեր Նովո-Կամենկալի աղջկերանց վրայ նայելուց արդէն զզուել եմ։ Ինձ յարմար ոչ մէկը չկայ։

—Հապա այրի կնոջ Գալիան։

—Գալիան...։ Ի՞նչ է որ Գալիան։

—Նրան գնացել ես։

—Ինչու չպիտի գնացած լինիմ։

Ջաղացպանը անկողնի մէջ վեր թռաւ։

—Սուտ ես ասում. չան որդի, ձայնդ կտրիր։

—Հէչ էլ սուտ չեմ ասում, ես կեանքումս սուտ չեմ ասել։ Սուտը թող խելօքներն ասեն։

Բանուորը լօրանջեց ու քնատ ձայնով ասաց.

—Ցիշո՞ մ էք, աղա, որ ամբողջ շաբաթ աջ աչքս ուռած էր, բան չէի տեսնում...

—Ցետոյ։

—Այդ՝ չան քածի արածն էր...։ Թքել եմ նրա վրայ։ Ինչ...։ Բան է գտել—Գալիան։

—«Հա, այդ կարելի է»—մտածեց Ջաղացպանը։ Գաւրիլո, էյ, Գաւրիլո...։ Շան որդին նորից քնեց, դիտես...։ Գաւրիլո։

—Ի՞նչ կայ դարձեալ։ Կրակը հո ջանդ չի ընկել։

—Կարդուել կուզես։

—Դեռ կօշիկ կարել չեմ տուել։ Կարել տամ, այն ժամանակ միտք կանեմ։

—Քեզ համար ես կարել կտամ կօշիկ...։ Գլխարկ էլ կառնեմ, զօռի էլ։

—Այդպէս որ լինի ինչու չէ։ Ես ձեզ աւելի խելօք բան ասեմ։

—Ինչ։

—Այն որ գիւղում արդէն աքլարները կանչում են։ Լսում էք, ինչպէս են ձայները դցել։

Եւ ուղիղ որ,—գիւղում, գուցէ հէնց Գալիալենց խրճիթում, մի աքլար կանչում, բողազն էր պատռում՝ կու-կու-լի-կու-ռու...

—Կու-կու-լի-կու-ռու... Կու-կու-կու-ռու—հեռուից, գիւղի ծայրից, ու մօտից զանազան ձայներով պատասխանում էին նորան միւս աքլարները, այնպէս որ սաղ աշխարհ աքլարի ձայնով էր լցուել, և բացի այդ խուցի պատերը բոլորը, նոյն իսկ ամենամանր ճեղքերն անգամ լուսաւորուել էին։

Ջաղացպանը անուշ-անուշ լօրանջեց։

—Էհ, այժմ արդէն նրանք հեռու են։ Հանգիստ բան է—մինչև տասներկու խփելը նա արդէն մինչև իմ Ջաղացս էր հասել։ Հէ, էէ... այժմ Եանկէլին դրել եմ՝ գտիր...։ Օլին օլին—այս էր։ Թէ որ այս բանս ուրիշներին պատմեմ, գուցէ չհաւատան, անունս ստախօս դուրս դայ։ Բայց ինչ ունիմ սուտ ասելու—վաղը ինքներն էլ կտեսնեն։ Աւելի լաւ է, որ ես սուտ անեմ։ Ո՛վ է իմանում, գուցէ դեռ ասեն, որ ես...։ Է՛հ, ինչ բան ունիմ։ Թէ որ Ջհուդին ես սպանած լինէի, կամ մի այդպիսի ուրիշ բան եղած լինէր, հա, այն ժամանակ պատասխանատու կլինէի, բայց այստեղ ես մաքը չունիմ։ Եւ ինչ բան ունէի դրանց գործին խառնուելու։ Ես անմասն եմ, ոչինչ էլ չեմ իմացել. մէջ կեր—դրաղ ման արի. անխելքի աշխատանքը—խելօքի փորը...։ Ես սուս ու փուս իմ գործիս կլինիմ...։

Այսպէս Ջաղացպան Ֆիլիպպը խօսում էր ինքն իրեն, այլպէս դի խիղճը թեթևացնի. միայն երբ արդէն բոլորովին քնէ դնալու վրայ էր, նրա սրտի մի ծածուկ անկիւնից օձի նման դուրս սողաց այս միտքը, թէ.

—Դէ, Ֆիլիպպ, օրիկդ բացուեց։

Այս միտքը հեռու քշեց նրանից բոլոր միւս մտքերն ու ինքը տէր դարձաւ։

Եւ այս մտքով էլ քնեց։

VII

Առաւօտեան վաղ, դեռ շաղն արօտի վրայ չի ցամաքել, բայց Ջաղացպանն արդէն հագուած, ճանապարհով դէպի գիւղ է դնում։ Հասնում է դեղ, իսկ այնտեղ արդէն մարդիկ իրար են խառնուած, կարծես մրջիւն լինեն.—«Էյ, նոր քան գիտէք։ Օղեվաճառի տեղաք քաղաքից նրա ոտնամաններն են բերել միայն»։

Այդ առաւօտեան պէտք է Նովո-Կամենկալում լինէիք, որ լսէիք թէ ինչ էին խօսում, դատում. քիչ մարդու էլ մեղք չառան։

Եանկէլի այրին, ամուսնու փոխարէն նրա ոտնամանները ստանալով, բոլորովին չփոթուել, ոչ արածը գիտէր, ոչ չարածը։ Մանաւանդ որ Եանկէլը խելք էր բանեցրել ու բոլոր փողն ու քսակով պարտատոմսերը հետը քաղաք էր տարել, նա ինչ կ'կարծէր թէ այդքան բաղմութեան մէջ Ջանչողն իրեն է ջոկելու։

—Միշտ այդպէս է մարդս,—մտքով անգամ չի անցկացնում, թէ փորձանքը, այ այդ Ջանչողի պէս, գլխի վերևը պտոյտ պտոյտ է անում,—գատողութիւն էին անում ամբոխի մէջի մարդիկ օղեանից հեռանալիս. իսկ այդտեղ Ջահել Ջհուդ կինն ու երեխերքը գետնին փռուած մաղերն էին փետրտում։ Բայց մի և նոյն ժամանակ ամեն մէկն էլ մտածում էր.—«երևի իմ պարտատոմսս էլ անհետ կորած կլինի»։

Էհ, ուղիղն ասած, ամբոխի մէջ շատ քիչ մարդ զբաղուեցաւ, որ խիղճը միտքը բերէր—«մեղք չենք գործիլ, թէ որ Ջհուդի կնոջը շահը չտանք էլ, գոնէ գլուխը տանք...»։ Բայց որ ճշմարիտն ասելու լինինք, ոչ ոք ոչ մի քոռ կոպէկ չտուեց նրան...։

Զաւեց և Ջաղացպանը։ Էհ, ասենք Ջաղացպանը իրեն հաշիւ չէր գցում։

Եանկէլի այրին աղաչում էր, պաղատում, ոտներն ընկնում, մինչև անգամ երեխերանց ստիպեց ժողովրդի ոտքերն ընկնել, որ բարի դեղացիք գոնէ մանէթին տասը շահի տան, գոնէ քսան գրոշ տան, որպէս զի որբերը սովից չկոտորուին, մի կերպ քաղաք կարողանան դնալ։ Շատ դթասիրտ մարդիկ մեղքցան այն աստիճան, որ արցունքը բեխերի վրայով ցած էր գլորուում, ոմանք էլ թեով բոթում էին կողքինին։

—Աստուածդ միտքդ բեր, դրացի։ Կարծեմ դուք մի բան պարտք էիք Ջհուդին։ Լաւ կանչիք տալիք...։ Ես իմ Աստուած, պէտք է ինչքան էլ լինի տաք։

Բայց հարևանը միայն գլխարկի տակից գլուխն էր քրքում։

—Ես ինչու պիտի տամ, քանի որ ինքս իմ ձեռքովս իրեն ջհուդին բոլոր պարտքս մինչև վերջին կոպեկը տուել եմ քաղաք գնալուց առաջ։ Ի՛նչ է, մեկ էլ տամ։ Ա՛յ, դուք, հարևան, ձեր բանն ուրիշ է...

—Ինչու իմ բանս ուրիշ կլինի, քանի որ ես էլ ուզիղ այնպես եմ արել, ինչպես դուք։ Նանկելը քաղաք գնալուց առաջ եկաւ մօտս ու սկսաւ խնդրել—տուր, տուր—ես էլ հանեցի ու տուի։

Ջաղացպանը լսում էր այս ամենը և սիրտը կսկծում—«էլ քեզ մարդիկ։ Մարդ եմ ասում հա։ Ո՛ր ասես Աստուծուց վախ չունին։ Երևի հէնց ինձ էլ,—մեկ ձեռքներն ընկնեմ,—մի և նոյնն են անելու...։ Է՛, պարոն գեղացիներ, ձեզ հետ գործ բռնողը աչքը չորս պէտք է բանայ, թէ չէ՝ բանը բուրդ է։ լիմար է այն մարդը, որ մատը ձեր բերանը կդնէ...։ Չէ, ինձանից այդ բանը չէք տեսնիլ—խելքս հացի հետ հո չեմ կերել։ Քանց թողնեմ որ դուք ինձ օլինի բերէք, հազիր ես ձեզ օլինի բերեմ...։

Մենակ պառաւ Պրիսիան էր, որ ջհուդին բերեց տուաւ մի քսան հատ ձու և մեկ էլ նոր գործած կտաւի կէսը, և այդ տուաւ չգիտեմ քանի կոպէկի տեղ, որ պարտք էր մնացել ջհուդին։

—Վեր առ, խեղճ, ներող եղիր մի քանի կոպէկ էլ մնաց, այն էլ որ Աստուած տալ, կվճարեմ։ Վերջին ունեցածս էր, բերի։

—Ա՛յ քեզ խորամանկ պառաւ,—չարացաւ դարձեալ Ջաղացպանը։—Երէկ ինձ ոչինչ չտուեց, բայց ջհուդ կնկայ համար հո գտաւ։ Հօյ մարդիկ են հա։ Հիմի ծերերի մէջ էլ հաւատարմութիւն չէ մնացել։ Քրիստոնեայ մարդու չտուաւ, հանեց անիծուած ջհուդին տուաւ։ Սպասիր, պառաւ, ես քեզ վերջը ցոյց կտամ...։

Նանկելի կինը ժողովեց իւր որբերին, կիսադնի ծախեց իւր ունիմ չունիմն ու մնացած օղին,—իսկ մնացածն էլ շատ բան չէր—Նանկելն ուզում էր քաղաքից մի տեսակ օղի բերել, մեկ էլ ասում էին որպէս թէ մի երկու վեդրօ էլ խայրկօն էր տակովն արել,—ու ոտով հեռացաւ գնաց Նովո-Կամենկալից։ Որբերը նրա ետևից...։ Երկսին զրկած էր տանում, երրորդը մօր փեշից բռնած քաշէ քաշ գնում էր ետևից, իսկ երկու մեծերն էլ իլար առաջկորուկ անելով վազում էին առջևից...։

Եւ գեղացիք դարձեալ վզները քորեցին։ Ով որ խիղճ ունէր, ինքն իրեն մտածում էր. «Ոնէ ջհուդի փողի տեղաք խեղճերին կաւքով զրկած լինէինք, գոնէ փոքր ինչ խղճերս մաքուր կլինէր։։ Բայց արի տես որ ամեն մեկն էլ վախենում էր՝—մի գուցէ ուրիշները գլխի ընկնեն, թէ երևի ջհուդի հետ դեռ իւր հաշիւը մաքրած չէ։ Իսկ Ջաղացպանը դարձեալ մտածում էր. «Ի՛նչ մարդիկ են։ Թէ որ մի օր խոփս քարին առնի կամ ընկնեմ, անշուշտ ինձ էլ ուրախ պիտի լինին այսպէս ճանապարհ ձգելու»։

Ահա այսպէս խեղճ այրին իւր զաւակներով մի կերպ իրեն քաղաք ձգեց, և միայն Աստծուն է յայտնի, թէ ինչ եղաւ այնուհետև։ Գուցէ մի տեղ իւր զաւակներով մի գործի կալաւ, գուցէ և բոլորն էլ քաղցից կոտորուեցան։ Ամեն բան կարող է լինել։ Բայց, ասենք, ջհուդներն իրայինների ետևի վրայ չեն թողնում։ Լաւ թէ վատ, մի կերպ հնար կտան ապրելու։

Սրանից յետոյ ժողովուրդն սկսաւ դատել, թէ ով պէտք է այսուհետև Նովո-Կամենկալում օղետուն պահի։ Բանն այն է, որ թէպէտ Նանկելը վերցրել էր, թէպէտ նրա այրին ու որբերը աչքի առաջից հեռացել, գնացել էին, բայց օղետունը դարձեալ կանգնած էր ըլրակի գլխին, իսկ դրանն էլ սպիտակ ներկով նկարած մնում էր օղի չափն ու ամանը. մի խօսքով ամեն բան իւր առաջուայ տեղն էր մնացել։ Մինչև անգամ Խայրկօն ըլրակի վրայ նստած իւր չիբուխն էր քաշում սպասելով, թէ ով էր լինելու իւր նոր աղան։

Ուզիղ է, մի երեկոյ, երբ ժողովուրդը դատարկ օղետան դրանը հաւաքուած դատողութիւն էր տալիս, թէ ով պէտք է իրենց օղետունն ու պանդոկը պահէ,—տերտէրը մօտեցաւ նրանց և, ամենքին խոնարհ գլուխ տալով, (ժողովուրդ ասածդ—մեծ բան է, մեղք չէ եթէ մինչև իսկ տերտէրը ժողովրդի առաջ խոնարհութիւն ցոյց տայ), սկսաւ համոզել, թէ լաւ կլինէր համախոհական կազմէին ու օղետունը լաւիտանս լաւիտենից փակէին։ Տերտէրն ինքը իւր ձեռքով թուղթը կըզրէր ու առաջնորդին էլ կխրկէր։ Եւ այդ խիստ լաւ, խիստ հաճելի և հասարակութեան էլ խիստ ձեռնտու բան կլինէր։

Ծեր մարդիկ, նրանց հետ էլ կանալք սկսան ասել, թէ տերտէրի ասածը շատ ուզիղ է, բայց այդ բանը Ջաղացպանին շատ ծուռ, մինչև անգամ վիրաւորական երևաց։

«Ա՛յս էլ քեզ տէրտէրս,—մտածեց նա,—այս էլ քեզ բարեկամս։ Բայց չէ, պատուելի հայր, սպասիր, դեռ կտեսնենք...»։

—Խօսք չկայ, շատ լաւ էք ասում,—կեղծաւորութեամբ ասաց նա,—այդ թուղթը շատ ձեռնտու բան է... միայն չգիտեմ ձեզ թէ հասարակութեան։ Դուք ինքներդ — սրտներդ չցաւի—օղին միշտ քաղաքից էք բերել տալիս. ի հարկէ ձեզ օղետուն էլ հարկաւոր չէ։ Այս էլ ձեզ համար ձեռնտու է, որ առաջնորդը կկարդայ թուղթն ու ձեզ կդովի։

Ամբողջ ժողովուրդը սկսաւ հաւանութիւն տալ, աղմուկ հանել, այնպէս որ տէրտէրս բարկութիւնից թքեց, յարդէ գլխարկը գլխին քաշեց ու օղետնից հեռանալով գնաց իւր ճամբան, հէնց իմանաս դրա համար եկած չլինէր, հապա երեկոյեան զբօսանքի դուրս եկած լինէր։

Է՛հ, ինչ երկար բարակ գլուխ ցաւացնեմ։ Կարծեմ ինքներդ էլ հասկացաք, որ Ջաղացպանն ինքն էր ուզում Չուդի տեղ օղետուն պահել։ Իսկ մի անգամ որ այդ միտքն ունէր, ինչպէս հարկն է մի լաւ խօսեց հասարակութեան հետ, ում որ պէտքն էր օղիով յարգեց, զեմստվային դատարանում իւպրաւնիկին բանը լաւ հասկացրեց, գաւառական դատարանում—դրագրի, յետոյ գանձապահի հետ տեսնուեցաւ, և վերջապէս նաև չինական ոստիկանապետին ու խմիչքների վերատեսչին շահեց։

Այս ամենից յետոյ Ջաղացպանը գիւղ դառնալով, գնաց օղետուն. իսկ այնտեղ Խալրկօն բլրակի վրայ նստած իւր չիբուխն էր քաշում։ Ջաղացպանը հէնց գլխով որ չարեց, Խալրկօն—թեպէտ և հպարտ մարդ էր—իսկոյն վեր թռաւ տեղից ու Ջաղացպանի մօտ վազեց։

—Հը՛, ինչ կմտես,—հարցրեց Ջաղացպանը։

—Ես ինչ պիտի ասեմ։ Դուցէ դուք բան ունիք ասելու։

—Հէնց բանն էլ այդ է, որ ունիմ էլ։

Է՛լ Ջաղացպանին լեղուակոխ չէր անում, հապա գլխարկը երկու ձեռքի մէջ բռնած տրորում էր և, Ֆիլիպպի ասածները լսելուց յետոյ, խելօք-խելօք պատասխանեց։

—Պառաղ եմ. պատրաստ եմ աշխատելու ձեր յարգութեան համար...։

Եւ Ջաղացպանը սկսաւ Նովո-Կամենկայում Եանկէլից էլ լաւ միքիստանութիւն անել, և իւր մանէթները ուրիշներին

մօտ արածելու ղրկել, և հէնց որ ժամանակը կգար—իսկոյն նրանց իրենց պտուղներով կհաւաքէր իւր գանձարանը։ Եւ այլ ևս Նովո-Կամենկայում նրան ոչ ոք խանգարող չկար։

Բայց որ մարդիկ նրա երեսից շատ անգամ դառն արտասուք են թափել,—էհ, այդ էլ սուտ չէ, իսկ ուղիղ բանը թաղցնել կարելի չէ։ Ուղիղ որ շատ են լաց եղել—գուցէ ոչ պակաս, քան Եանկէլի երեսից են լացել, գուցէ և նրանցից աւելի,—հաստատ չեմ կարող ասել։ Ո՛վ է մարդկային վիշտը չափել, ո՛վ է մարդկանց արցունքի հաշիւը պտտել...։

Է՛, ոչ չափողը կայ, ոչ էլ հաշուողը. ասած է,—շունը չնից, երկուսը մէկ տնից. չգիտեմ ով ինչպէս, բայց ես կարծում եմ, որ այդ ուղիղ է...։

VIII

Ճիշտն ասած, ամենևին չէի ուզիլ բարեկամիս համար այսպիսի բաներ պատմել, բայց ինչ արած՝—մի անգամ որ սկսել եմ, պէտք է վերջացնեմ. տաղը որ ասես, պէտք է բառերն էլ ասել...։ Մանաւանդ որ, երբ ինքը Ջաղացպանը ոչինչ չի թաքցնում, ես ինչ ունիմ թաքցնելու...։

Բանն այն է, որ ծերունի Եանկէլին լոկ մարդկանց վրայ էր հարկաւոր։ Հէնց որ ականջովը ընկնէր, թէ մէկի ջերում մի-երկու ռուբլի կայ, իսկոյն սիրտը որդ կընկնէր, կկրծէր, ու իսկոյն կսկսէր մի այնպիսի բան մտածել, որ այդ ռուբլին իւր ջերը մտնի։ Որ յաջողուէր—նրա ու Սուրալի ուրախութեան էլ չափ չկար։

Իսկ Ջաղացպանի համար այդ քիչ էր։ Եանկէլը ինքն էր ամենքի առաջ մինչև գետին խոնարհւում, այն ինչ Ջաղացպանը ուրիշներին էր իւր առաջ ծռում, խոնարհեցնում, ու կոռելի (հնդկահաւ) նման էլ գլուխը հպարտ-հպարտ վեր բարձրացնում։ Եանկէլն, ասենք, ստանաւոլի մօտ որ գնար, ետևի դռնով կմտնէր ու դողդողալով կանգնած կմնար դրանը, իսկ Ջաղացպանն ուղղակի մեծ դռնով ներս կմտնէր, հէնց գիտենաս իւր հօր տունը լինէր։ Պատահեց, որ մէկը հարբածխելօք մեր Եանկէլին մի լաւ վզակոթին հասցրեց, խեղճը շատ էլ չէր նեղանում—մի քիչ կկոնծկոնծար ու կդադարէր, շատ-շատ վերջը մի քանի չանի ջարամայ ուզէր։ Իսկ Ջաղացպանը հէնց ինքն էր չատերի մազերից բռնում, այնպէս որ շատ անգամ խեղճի մազը նրա ձեռքը կմնար, իսկ աչքերից

ոնց որ դարբնոցում կռանի տակից, կայծեր կթռչեին... Հապա, հէնց բանն էլ այդ էր էֆ — Ջաղացպանին համ պատիւ պիտի տայիր, համ փողդ։ Եւ ինչ պահեմ, և տալիս էին։ Մարդիկ պատկերների առաջ խոնարհում, երկրպագութիւն են անում, իսկ իմ բարեկամիս առաջ ես աւելի էին խոնարհում։

Բայց նա էլի դժգոհ էր։ Ցխուր, տրտում ման կդար սենեակի մէջ ու կմտմտար. կարծես սիրտը չուն կրծելիս լինէր։

«Չէ, ոնց որ այնպէս չէ չինած աշխարհս,— չէ, այնպէս չէ։ Փող էլ ունենաս, էլի այն չէ, սրտիդ ուզածին պէս չես ուրախանում»։

Մի անգամ Խալրկօն նրան հարցնում է.

— Ի՞նչ էք, աղա, այդպէս տխուր-տրտում ման դալիս հա ման դալիս, հէնց իմանաք թրջած աքլոր լինիք։ Էլ ինչերդ է պակաս։

— Գուցէ որ պակուէի, մի քիչ սիրտս բացուէր, ուրախանալի։

— Էլ ինչ էք սպասում, պակուեցէք էլի։

— Հէնց բանն էլ այդ է էֆ։ Ինչպէս պակուես, երբ որ կողմից մտիկ ես առլիս, բանը գլուխ չի դալիս։ Քեզ ճիշդն ասեմ,— երբ որ դեռ Ջաղացպան չէի, հապա բանուոր, գուցէ իմացած էլ լինես, ես այստեղ սիրում էի Գալիային, ալրի կնոջ աղջկան... Թէ որ աղաս խեղդուած չլինէր, կարելի է արդէն նրան առած էլ լինէի։ Այժմ դու դատիր — հիմի ինչ իմ թաղն է Գալիան։

— Ի՞նչ խօսք. այժմ ձեզ սաղ կդաս միայն հարուստ Մակոդոնի աղջիկը, Մարիան։

— Հա. ինքս էլ տեսնում եմ, ուրիշներն էլ հէնց մի ձայն այդ են ասում, թէ իմ հարստութեանս նայած Մակոդոնները իսկ որ սաղ կդան ինձ... Բայց դա էլ... շատ զըզուելի է այդ Մարիան։ Սաղ օրը ահագին խոսի դէզի նման նստած հա կուտ է ուտում։ Հէնց որ աչքս վրան չեմ ձգում, կարծես մէկը քթիցս բռնում է ու երեսս միւս կողմ շուռ տալիս ...։ Ա՛յ, ինչ եմ ասում, Գալիան ուրիշ բան է... Ճիշտ որ, աշխարքիս բաներն այնպէս չեն դառնում, ինչպէս որ պէտքն էր։ Ուզում ես մէկին սիրես — բայց արի տես, որ փող ուրիշն ունի...։ Գիտեմ, պիտի ցամաքեմ, չոր դառնամ...։ Արար աշխարք աչքիցս դուրս է եկել։

Ջինուորը բերանից չիբուխը հանեց, թքեց կողքի, ու ասաց.

— Վա՛տ բան է։ Ոչ մի մարդ կարող չէ ձեր դարդին դարման անել, բայց որ ինձ լսէք, չէք փոշմանիլ։ Գուցէ դեռ ինձ փնչքէչ անէք այն կօշիկը, որ Օգանոսից գրաւ է մնացել, հը՞...։

— Մի այդպիսի բանի համար աչքիս կօշիկ կերևայ. բայց ճարը գտել ես արդեօք...։

Եւ ճշմարիտ, անպիտան զինուորը — գրողը նրան տանի — ճարը գտել էր. մի այնպիսի բան էր գտել, որ եթէ ամեն բան նրա ասածի պէս լինէր, ու մի քիչ էլ վաղ եղած լինէր, — գուցէ այժմս արդէն այն աշխարքում սատանաները մեր Ջաղացպանին ջրկիր դարձրած լինէին, ու ես էլ ձեզ այս պատմութիւնը չէի պատմիլ...

— Դէ լաւ, լսեցէք — ասում է նա։ — Ուրեմն դուք երեք հոգի էք — մի տղամարդ ու երկու աղջիկ։ Բայց, ի հարկէ, կարելի բան չէ, որ մի մարդ երկու կնիկ առնի, որովհետև թուրք հո չէք։

«Գրողը տանէ, ինչպէս ուզիղ է դատում, — մտածեց Ջաղացպանը։ — Ցետոյ տեսնենք»։

— Լաւ։ Քանի որ դուք հարուստ մարդ էք ու Մարիան էլ հարուստ հարսնացու, — այստեղ փոքր տղան էլ ձեզ կասէ, թէ ումը պէտք է առնէք դուք։ Ներումն Մակոդոնին խնամի դրկեցէք։

— Ճիշդ ես ասում։ Բայց ես այդ առանց քու ասելուդ էլ գիտէի...։ Հապա Գալիան։

— Իսկ դուք մինչև վերջը լսեցիք։ Կամ գուցէ արդէն ինքներդ էլ գիտէք, թէ ինչ էի ուզում ասել...։

— Դէ լաւ, լաւ, մի նեղանալ։

— Դուք անմեղ հրեշտակին էլ կնեղացնէք։ Ես այն մարդը չեմ, որ մի բան սկսեմ ու չվերջացնեմ։ Մի շտապէք, Գալիայի մասին էլ պ'տի ասեմ։ Նա ձեզ սիրում էր։

— Ինչ որ ուզիղ է - ուզիղ է։

— Իսկ դուք այն ժամանակը, որ նա ձեզ սիրում էր, ինչ էիք։

— Ջաղացքի բանուոր։

— Դէ այժմ դարձեալ մանր երեխան անդամ կհասկանայ, — թէ որ սի աղջիկ Ջաղացպանի բանուորին է սիրել, Ջաղացպանի բանուորի էլ կին պիտի լինի։

— Ես հո Ջաղացպանի բանուոր չեմ։

— Ինչ անենք որ չէք։ Միթէ Ջաղացում բանուոր չունիք...

—Գաւրիլօն... Է-Է-Հէ, տես ինչ է մտածել...։ Դէ որ այդպէս է, թող նա էլ քեզ կօշիկ տայ այդ խելօք բանի համար։ Քեզ այսքանս ասեմ, որ ոչ նա, ոչ էլ նրա եօթը պորտը այդ բանը չեն տեսնիլ. ես լինիմ ու համբերեմ։ Կգնամ, նրա գլուխը կՋարդեմ։

—Ա՛յ քեզ տաք մարդ. տեղն ու տեղը կրակ է...։ Ես բոլորովին ուրիշ բան էի ուզում ասել, իսկ դուք տաքացել, կրակ էք կտրել։

— Ուրիշ ինչ ունես ասելու, եթէ ես այդ ասածդ չեմ հաւանում։

—Առաջ մէկ լսեցէք։

Խալրկօն չիբուխը հանեց բերանից, մի աչքը կկոցած Ջաղացպանի երեսը նայեցաւ, ու լեղուով մի այնպէս չլմփացրեց, որ Ջաղացպանի քէֆն եկաւ...

—Իսկ դուք, նրան, աղքատ էլ որ լինի, դարձեալ սիրում էք...

—Ի՞նչ խօսք, ի հարկէ սիրում եմ...

—Դէ հիմի էլ, երբ բանուորի կինը դառնայ, որքան սրտներդ ուզէ, դարձեալ կարող էք սիրել նրան։ Ես իմ ասելիքս վերջացրի,—երեքդ էլ կապրէք միևնոյն Ջաղացքի մէջ, իսկ չորրորդը, պակաս Գաւրիլօն հաշիւ չէ...։ Հը՞, հիմի հասկացա՞ք, թէ ինչ եմ տալիս ձեզ, գինի թէ քացախ։ Ձէ՛, Խալրկօի գլխին չեն թակել, հապա այն տեղին, որ վայել է, և դրա համար էլ նա խելօք մարդ է դուրս եկել,—գիտէ թէ միջուկն ում կհասնի, կճեպը ում, և նոր կօշիկներն էլ ում...։

—Հապա՝ եթէ բանը գլուխ չգայ։

—Ինչու՞ չպիտի գլուխ գայ որ։

—Ես ինչ գիտեմ, հազար ու մի պատճառ կարող է լինել։ Հէնց ծերունի Մակոդոնը կարող է աղջիկը չտալ։

—Հա՛. թէ որ ես ինքս հետը խօսած չլինէի, ուրիշ բան էր...

—Ցետոյ։

—Ցետոյ ինչ պիտի լինի։ Քաղաքից օղի էի բերում, իսկ նա—քաղաք էր գնում։ Դէսից, դէնից խօսեցինք, ու ես ասացի։ «ահա ձեզ համար փեսայ—մեր Ջաղացպանը»։

Նա՞ ինչ ասաց։

—«Մաքոշը անգամ թող չանցկացնէ, ասում է։ Ի՞նչ կարողութեան տէր է, որ դրան աղջիկ տամ։

—Իսկ դու՞ ինչ ասացիր։

—Ես էլ ասացի.—ինչի՞, ինչ կայ որ. երևի դեռ չգիտէք, որ ահա չուտով մէկ տարի կլինի, որ մեր Ջհուդին սատանան չանչել, տարել է։

«Հա՛, որ այդպէս է,—ասում է,—այդ ուրիշ բան՝ — որ Ջհուդը գիւղում չէ, ի հարկէ Ջաղացպանն էլ այժմ մարդու կարգ է...»։

—Դէ լա՛ւ, ասենք Մակոդոնը համաձայնեց։ Տեսնենք դեռ Գալիան կուզէ՞ բանուորին գնալ...։

—Հը՛մ, որ մօրն ու աղջկան խրճթից վռնդեն, ուրախ կլինի Ջաղացքումն էլ ապրելու։

—Այդ, ասենք, այդպէս է...

IX

Ջաղացպանը իւր Ջանը քորից, իսկ այս բանը, որ ես ձեզ պատմում եմ, ահա արդէն մօտ մէկ տարի կլինէր, որ սկսուել էր։ Ջաղացպանը դեռ իւր չորս կողմը չէր կարողացել մտիկ տալ, որ արդէն Ֆիլիպովկան էլ, մեծ պատն էլ, գարունն ու ամառն էլ անցել էին, գնացել։ Եւ ահա դարձեալ մեր Ջաղացպանը կանգնել է օդեռան չեմքի մօտ։ իսկ նրա կողքին—վարձուորը մէջքը դրան կողքին դէմ տուած։ Մտիկ է տալիս, ու ինչ տեսնէ լա՛ւ,—տեսնում է, որ լուսինը ինչպէս որ մի տարի առաջ, նոյնպէս և այժմ պայծառ փայլում է երկնքի երեսին, միևնոյն կերպով էլ գետակն է շողշողում, և փողոցը նոյնպէս սպիտակ է, և նոյնպիսի սև ստուերը Ջաղացպանի կողքով վազում է արծաթափայլ գետնի վրայով։ Եւ մի բան ընկաւ Ջաղացպանի միտքը։

—Լսիր, բան եմ ասում, Խալրկո։

—Ի՞նչ կայ։

—Այսօր ինչ օր է։

—Երկուշաբթի։

—Իսկ այն ժամանակ լիշում ես, շաբաթ օր էր։

—Տարուայ մէջ շաբաթ օրեր չա՞տ...։

—Այն ժամանակ, մի տարի առաջ, դատաստանի օրը։

—Հը՛, այդ էք ասում։ Այո՛, շաբաթ օր էր։

—Իսկ այժմ երբ է նրանց դատաստանի օրը։

—Խա՛չը, ես էլ չգիտեմ երբ է։ Մօտակայքում էլ Ջհուդ չկայ, որ գիտենամ։

—Հապա մի երկնքին նայիր, ինչպէս պարզ է, իսկ և իսկ այն օրուայ նման...։

Եւ Ջաղացպանը վախեցած ջհուդի խրճթի պատուհանին մտիկ տուաւ, թէ մի գուցէ դարձեալ ջհուդի տղայքը նստած, տղղալիս, գլուխները չարժելիս ու աղօթելիս լինին իրենց հօր մասին, որին Ջանչողը դաշտերի ու ձորերի վրայով քաշ է տալիս...։

Սակայն չէ։ Այդ ամենն արդէն անցած գնացած բան է։ Երևի Եանկէլի ոսկորն անդամ մնացած չի լինիլ, նրա որբերը շաղ են ընկել երկրիս հեռաւոր կողմերը, իսկ խրճիթն էլ մութն է, կարծես գերեզման լինի...։ Եւ Ջաղացպանի հոգու տունն էլ այնպէս խաւար էր, ինչպէս այդ ջհուդի խրճիթը։ «Այն ժամանակ ջհուդին չաղատեցի, տղոցը որբացրի,—մտածեց նա ինքն իրան,—այժմ էլ թալաք եմ սարքում այրի կնոջ աղջկանը..»։

—Հը՞, բանը գլուխ կգայ կասես,—հարցրեց նա Խայրկօին։

—Ինչու՞ չպիտի գլուխ գայ։ Հա, կան մարդիկ, որ իրենց բաղդին քացով են տալիս, գուցէ դուք դրանցից էք...

—Ասենք ես դրանցից չեմ, բայց էլի...։ Դէ մնաս բարով։

—Երթաք բարով։

Ջաղացպանը բլրակից ցած իջաւ, իսկ Խայրկօն դարձեալ նրա ետևից չվչվացրեց։ Թէև այն անդամուայ նման մի այնքան էլ անսպասիւ կերպով չչվվացրեց նա, բայց և այնպէս Ջաղացպանը խիստ առնուեցաւ։

—Ի՞նչ ես չվչվացնում, հառամղաղա,—ասաց նա ետևը դառնալով։

—Ա՛յ քեզ բան, սրա պատճառով մարդ չպէտք է էլ չվվացնէ,—վիրաւորուեցաւ Խայրկօն։—Ես կապիտանի մօտ էլ ծառայելիս դարձեալ չվչվացնում էի, իսկ ձեզ մօտ կարելի չէ։

«Ուղիղ է ասում,—մտածեց Ջաղացպանը,—և ինչու՞ չպիտի չվչվացնէ որ։ Բայց զարմանք բան—այս ինչիցն է ամեն բան էլ այնպէս պատահում, ոնց որ այն երեկոյ...»։

Եւ նա հեռացաւ բլրակից, իսկ Խայրկօն, թէպէտ մի քիչ ցած ձայնով, դարձեալ չվչվացրեց...։ Անցաւ Ջաղացպանը բաւուտի պարտէզների մօտով, տեսնի—հէնց իմանաս դարձեալ երկու խոշոր թռչուն դուրս պրծան արօտի միջից, և դարձեալ ստուերի մէջ սպիտակին է տալիս բարձր մորթէ գլխարկն ու աղջկայ նիշած չապիկը, և մէկն այնպէս պինդ-պինդ պաչպըչում է, որ թփերի մէջ արձագանգ է տալիս...։ Թիւհ, դրողը

տանէ։ Այս անդամ Ջաղացպանս այլ ևս սիրտ չարաւ անիծուած երիտասարդին կշտամբելու,—վախենում էր, թէ մի գուցէ անցեալ տարուայ նման պատասխան ստանայ...։ Եւ մեր Ֆիլիպը դանդաղ քայլերով մօտեցաւ այրի կնոջ ցանկապատին։

Ահա և խրճիկը, որ կարծես լուսնի լուսով վառուելիս լինէր, և պատուհանը, որ աչքախիրիկ էր արել, և բարձր սօսիները, որ լոզ էին տալիս լուսնի լոյսի մէջ...։ Ջաղացպանը փոքր ինչ կանգ առաւ ցանկապատի առաջ, գլուխը քորեց և դարձեալ ոտքը ցանկապատի վրայով գցեց միւս կողմը։

—Թխ-թխկ։

«Օ՛ֆ, էլի այն անդամուայ նման չան հալում պիտի լինիմ, գուցէ և աւելի վատը լինի,—մտածեց Ջաղացպանը։—Ախր այդ անիծուած Խայրկօն իր անիծուած լեզուով չատ լաւ նկարագրեց բանն է...։ Հիմի որ միտք եմ անում, չէ, հէնց իմանաս այն չէ... բան չի դուրս գալիս ասածից։ Է՛հ, թող ինչ լինելու է լինի»—և նա նորից պատուհանը թխկացրեց։

Ահա պատուհանից երևաց Գալիալի չարմաղ երեսն ու սեորակ աչքերը։

—Մայրիկ չան, մայրիկ,—չչնչաց նա։—Էլի անիծուած Ջաղացպանն է եկել, պատուհանի առաջ ցցուել ու ապակին թակում։

«Է՛հ, էլ այս անդամ դուրս չի վազիլ, ճտով ընկնիլ, թէկուզ սխալմամբ էլ չի համբուրիլ, ինչպէս այն անդամն էր»—մտածեց Ջաղացպանը և չսխալուեցաւ՝—աղջիկը դուրս եկաւ խրճթից, հեռու կանգնեց ու ձեռները սպիտակ կրծքին խաչեց։

—Ի՞նչ ես էլի եկել պատուհանը թակում։

Ա՛խ, ծանր է այդպիսի սառն խօսքեր լսել մի աղջկանից, որին առաջ ջերմ սրտով սիրել ես...։ Ջաղացպանս մէկ ուզում էր աղջկանը դրկել ու ցոյց տալ, թէ ինչու էր եկել, և մինչև անդամ, ուղիղն ասած, կողքի-կողքի մօտենում էլ էր Գալիալին, մէկ էլ միտք արաւ, որ պէտք էր առաջ Խայրկօի ասածներն ասել, և խօսեց։

—Ինչի՞ չպէտք է թակեմ, քանի որ արդէն այնքան էք ինձ պարտք մնացել, որ տակիցը դուրս գալու ճար չունիք...։ Ձեր խրճիթն էլ այդքան չարժէ։

—Ա՛նասուած, թէ գիտես որ պարտքի տակից դուրս

չպիտի դանք, էլ ուր ես գիշերով պատուհան թակում։ Պառաւ մօրս դերեզման պիտի իջեցնես։

—Ո՞վ է նրան դերեզման իջեցնում, Գալիա։ Քո՞ ձեռին չէ՞. որ ուզես, կարող եմ մօրդ ծերութիւնը մխիթարել։

—Սուտ ես ասում։

—Չէ, սուտ չեմ ասում։ Ա՛խ, Գալիա, Գալիա, կեանքս կեանք չէ առանց քու սիրուդ...։

—Հա՛, շան նման հաջա...։ Բաս ալն ո՞վ է ուզում Մակագոնին խնամի ուղարկի։

—Ուզում եմ թէ չեմ ուզում, բայց ես, Աստուած վկայ, ճիշդն եմ ասում, առանց քեզ հալ ու մաշ եմ լինում...։ Բայց թէ հիմի ինչ եմ մտածում—այս րոպէիս ամեն բան կարգով կպատմեմ, իսկ դու, թէ որ խելօք աղջիկ ես, մի լաւ ականջ կդնես։ Միայն տես, պայման եմ դնում—ինչ ասելու ես ասա, բայց բանը փայտի չհասնի, թէ չէ կնեղանամ հա։

—Խելք չհասնելու բաներ ես ասում,—ասաց Գալիան ձեռները ծալելով։—Դէ լաւ, ես մտիկ կանեմ, միայն տես, թէ էլի լիմար-լիմար դուրս ես տալու, կփոշմանես հա...։

—Է՛, չէ. լիմար բան չէ ասելուս...։ Բանն այն է, որ դու... ինչպէս էր ասել Խայրկօն...

—Խայրկօն։ Խարկօն ինչ գործ ունի այստեղ։

—Է՛հ, սուս կաց, թէ չէ չեմ կարող մի կարգին բան ասել...։ Պատասխանիր—դու սիրում էիր ինձ։

—Որ սիրելիս չլինէի, քո այդ զզուելի մռութդ կպաչէի հա...

—Ես ինչ էի այն ժամանակ—Ջաղացպանի բանուոր, չէ։

—Հա։ Սև դառնար էն օրը, որ Ջաղացպան դարձար։

—Էհ՛հ. ուելորդ բաներ մի ասիլ, թէ չէ ասելիքս կմոռանամ...։ Ուրեմն դուրս է գալիս, որ դու բանուորին էիր սիրում, ուրեմն և բանուորի հետ էլ պիտի պսակուես ու Ջաղացում ապրես։ Իսկ ես ինչպէս առաջ էի սիրում, այնպէս էլ այդ ժամանակ կսիրեմ քեզ, թէկուզ տասը Մոտրիա առնեմ։

Գալիան մինչև անգամ աչքերը տրորեց—չլինի թէ, մտածում էր, երազում լինի։

—Այդ ինչ ես դուրս տալիս, ալ մարդ։ Կամ ես եմ բոլորովին խելքս թռցրել, կամ թէ չէ՝ քու մի տախտակդ է պակաս։ Այդ ինչպէս կարող եմ բանուորի հետ պսակուել, քանի որ դու այժմ Ջաղացպան ես։ Եւ ինչպէս կարող ես ինձ

առնել, երբ Մոտրիային խնամի ես ուղարկելու, հը՞...։ Այդ ինչ ես դուրս տալիս, ալ մարդ, ձախ ձեռովդ մի երեսդ խաչակնքիր։

—Ալ քեզ խօսք։ Միթէ ալլ ես բանուոր չկա՞ Ջաղացում։ Հապա Գաբրիլօն .. բանուոր չէ՞ նա։ Ճիշդ է, մի փոքր խելքից պակաս է, բայց այդ բանը, չիտակն ասեմ, աւելի ձեռնտու է մեզ համար։

Աղջիկը միայն այժմ հասկացաւ, թէ ինչ էր ուզում հասկացնել Ջաղացպանը։ Նա յանկարծ ձեռքերն իրար խփեց ու աղաղակեց.

—Վա՛յ մայրիկ, մայրիկ ջան, սա ինչ բան ասաց։ Նա թրքացել, երկու կին է ուզում առնել։ Նուռ արա, մայրիկ ջան, փէսը դուրս բեր տնից, իսկ առ այժմ ես իմ ձեռնեռովս կտեսնեմ նրա դատաստանը...։

Եւ սկսաւ աղջիկը Ջաղացպանի վրայ գնալ, իսկ Ջաղացպանս յետ-յետ էր փախչում...։ Հասաւ չափարին, ոտը գցեց վրան ու ասաց.

—Հը՛, այդպէս, հա, օձի ծնունդ։ Դէ, դու էլ, մայրդ էլ կորէք, դուրս գնացէք այս խրճթից։ Հէնց վաղն և եթ պարտքի տեղ կխլեմ ձեռներիցդ։ Կորիր։

Իսկ աղջիկը պատասխանեց։

—Դու էլ հէնց այս րոպէիս դուրս կորիր պարտիզից, քանի որ դեռ ես եմ պարտիզի տէրը։ Թէ չէ, եղունգներով աչքդ կփորեմ ու էն օրը կգցեմ, որ Մոտրիադ անգամ չկարողանայ ճանաչել,—չէ թէ երկու հոգի սիրել, հապա նոյն իսկ մէկն էլ չուզենայ վրադ նայել։

Դէ գնա ու հետը խօսիր։ Ջաղացպանը թքեց, շտապով ցանկապատից վէր թռաւ ու զայրացած, դուրս եկաւ դեղից։ Երբ որ հասաւ ճանապարհի բարձր տեղին, որտեղից արդէն լսւում էր, թէ ինչպէս ջուրը խոխոջում է նաւերի մէջ, մինչև անգամ ետեր դարձաւ ու բռունցքով սպառնական շարժում արեց...։

Եւ հէնց այդ միջոցին լսուեց—դոն, դոն...

Դարձեալ գիւղի զանգակատանը ժամն ուղիղ կէս գիշեր խփեց...։

X

Ջաղացպանը մօտեցաւ իւր Ջաղացքին, իսկ Ջաղացքն ամբողջապէս թաղուած է ցողի մէջ, և լուսինը լուսաւորում

է, և անտառը կեցած փայլփլում, և բուն — այդ անիծեալ թռչունը—ցատկում, եղեգնուտն է ընկնում, չէ քնում, կարծես մէկին սպասելիս լինի, կարծես մէկին ճանճուտից դուրս կանչելիս լինի...

Ջաղացպան Փիլիպպի վրայ նեղութիւն եկաւ։

—Հէյ, Դաւրիլո,—կանչեց նա ջաղացի կողմը դառնալով։

—Բու-ու, բու-ու,—ձայն տուաւ ճանճուտից բուն, իսկ ջաղացքում որ ասես ձայն-ծպտուն չկար։

«Ա՛խ, անիծուած տղայ։ Էլի աղջկերանց մօտ է վազ տուել...» – մտածեց ջաղացպանը և կարծես սիրտը չէր տալիս, որ դատարկ ջաղացը վերադառնայ։ Թէպէտ արդէն սովորել էր, բայց դարձեալ ժամանակ-ժամանակ լիշում էր, որ ջաղացի յատակի տակ, ցցերի արանքներում մենակ ձկներ ու օձեր չեն որ լող են տալիս մութ ջրի մէջ...։

Նա դարձաւ, քաղաքի կողմը նայեցաւ։ Խաղաղ, պայծառ գիշեր էր. մէգը հաղիւ նկատելի կերպով ծուխի նման կանգնած էր գետակի վրայ, որը հոսում, գնում էր անտառի ետեր, բայց լուսաւոր աղջամուղջի միջից չէր երևում...։ Իսկ երկնքում որ ասես ամպ չկար...։

Ջաղացպանը ետեր դարձաւ և զարմացաւ, թէ որտեղից էր այս փոքրիկ ջրի մէջ այսքան խորութիւն—թէ լուսնի համար, թէ աստղերի համար և թէ բոլոր կապոյտ երկնքի համար...։

Մէկ էլ տեսաւ որ ջրի մէջ, աստղերի վրայով մի փոքրիկ մոծակ է թռչում...։ Մի լաւ մտիկ տուաւ, տեսաւ—մոծակը մեծացաւ, ճանճի չափ դարձաւ, յետոյ ճնճղուկի, ագռաւի, իսկ վերջն էլ մի մեծ թռչուն։

—Ցիտաս, Քրիստոս, չարը խափանես, բարին կատարես,—ասաց ջաղացպանն ու աչքերը վեր բարձրացնելով տեսաւ, որ այդ ջրի մէջ չէր, հապա օդի մէջ մի բան թռչելով ուղիղ դէպի ջաղացն էր գալիս։

—Տէրն ինքը փրկի։ Երևի այս դարձեալ Զանչողն է որոսի համար քաղաք գնում։ Դու մի այս անհաւատին տես, որքան ուշացել է այս անգամ—արդէն կէս գիշերը խփել է, իսկ նա դեռ նոր է ճամբայ ընկնում...։

Նա այսպէս, գլուխը վերև բարձրացրած, մնացել էր կանգնած, իսկ օդի մէջ, արծուի նման, պտոյտ-պտոյտ անելով սլանում էր ամպն ու ցած գալիս. իսկ այդ ամպի միջից

մի բզզոց էր լսում... ոնց որ մեղուապարը, որ փեթակից դուրս գալով պարտիզի վրայովն է թռչում...։

—Հը՞, չլինի դարձեալ իմ ամբարտակի վրայ է ուզում հանդստանալ։ Այս էլ ինչ նոր բան է սովորել սա։ Սպասիր, եկող տարի մի խաչ տնկեմ, տեսնենք այն ժամանակ էլ կը-գա՞լ. ամբարտակս հո քարվանսարայ չէ, որ գալ ու ճանապարհին հանդստանայ...։ Ը՛հը՛, հապա այս ինչ ձայն է, հէնց իմանաս երեխերանց բաց թողած թրթռի ձայն լինի։ Ինչպէս երևում է դարձեալ պէտք պիտի լինի թփի քամակին թաք կենալ ու դիտել։

Հաղիւ հասել էր թփերի ետեր, վերև նայեցաւ և քիչ էր մնում վախից կանչէր...։ Ի՞նչ տեսնէ լաւ—տեսնում է, որ հիւրը մօտեցել է ջաղացի կարին և ձեռին բռնել է... գրաղ կդամ, որ մատներովդ անգամ չէք կարող անցկացնել, թէ ինչ է սատանան իւր չանչերի մէջ բռնել...։

Ջհուդ Եանկէլին։ Այո, հէնց այն Եանկէլին, որ մի տարի առաջ սատանան քաշ էր տուել, հետը տարել, այժմ լեռ էր բերում։ Նա պինդ բռնած էր Եանկէլի մէջքից, իսկ Եանկէլը ձեռին բռնած ունէր մի շատ մեծ, սաւանի մէջ փաթաթած կապոց, և երկուսն էլ վիճում են օդի մէջ ու այնպէս վրայ տալիս, հէնց իմանաս տասը ջհուդ մի գեղցու վրայ բաղարում զալմաղալ սարքելիս լինէին...

Սատանան գիւլլի նման վեր ընկաւ ամբարտակի վրայ։ Թէ որ փափուկ կապոցը չլինէր, ով գիտի Եանկէլի ոսկորները փշուր-փշուր լինէին։ Յետոյ երկուսն էլ վեր թռան, ոտքի ելան և սկսան դարձեալ զալմաղալը ձգել։

—Վա՛յ վա՛յ... Սա ինչ խոզութիւն է ձեր արածը,—կանչեց Եանկէլը,—կարող չէք մի փոքր զգուշութեամբ ցած դալ...։ Կարծեմ որ ձեռներիդը սաղ մարդ է։

—Մէկ մարդ, հլա մի հատ էլ կապոց. գետինը մտնէիք երկուսդ էլ...։

—Հը՛մ. ձեզ ինչ է խանդարում իմ կապոցիկս։ Հօ դուք չէք պահողը, ինքս եմ...։

—Կապոցիկ։ Իրեղէնների մի սար է։ Հաղիւ քաշ տուի, օ՜օֆ։ Պայմաններիս մէջ այդ հո չկար...։

—Վա՜հ, այդ որտեղ էք տեսել, որ մարդ առանց իրեղէնների ճամբայ ընկնի...։ Որ լանձն էք առել մարդ տանել, պէտք է նրա իրերն էլ տանէք, այդ առանց պայմանի էլ հասկանալի է...։ Ով է դժուել իւր ապրանքը դէն դցի։ Եա

չատոնց տեսնում եմ, որ ուզում էք խեղճ Եանկելին խաբել, դրա համար էլ պատճառներ էք վնտրում...

—Հա՛, քեզ նման ազուէսին խաբողը երբէք օր անդամ կեանք չի ունենալ։ Անիծուած լինի այն օրը, որ քեզ պատահեցի։

—Իսկ ես կարծում էք չնա ուրախ եմ, որ ծանօթացել եմ ձեզ... Պահ-պահ, մի երեսելի գամ էք, էլի... Աւելի լաւ է դուք ինձ մի տէք, թէ ինչ էր մեր պայմանը։ Հը՛, դուցէ դուք մոռացել էք, դէ ուրեմն ես լիշեցնեմ՝—մենք դրաղ էինք եկել։ Դուցէ կասէք—դրաղ էլ եկած չենք։ Այդ հո երեսելի բան կլինէր։

—Ո՞վ է ասում դրաղ չենք եկել։ Միթէ ես ասել եմ, թէ չենք եկել։

—Է՛հ, ինչպէս կարող էք ասել դրաղ եկած չենք, քանի որ ահա այստեղ, հէնց այս տեղում դրաղ եկանք։ Դուցէ չէք լիշում ինչի վրայ էր մեր դրաղը, ես այս բոպէիս կլիշեցնեմ։ Դուք ասում էիք՝—Ջհուդները վաչխ են առնում, Ջհուդները մարդկանց հարբացնում են, Ջհուդները Ջհուդներին խղճում են, իսկ օտարներին չեն խղճում, դրա համար է, որ ամենքն էլ ասում են, թէ դրողը տանէ դրանց։ Դուցէ դուք այդ բանը չէք ասել, իսկ ես էլ դուցէ դրան չեմ պատասխանել, թէ—այ, այստեղ թվերի քսմակին կանդնած է Ջաղացպանը։ Թէ որ նա Ջհուդի խղճալիս լինէր, այն ժամանակ կկանչէր ձեզ. «Պարոն սատանայ, բաց թողէք — դա կին, դաւակներ ունի»։ Բայց նա չի կանչիլ... Այս մէջ։

«Վա՛յ անպիտան, ինչպէս հասկացել է» — մտածեց Ջաղացպանը, իսկ սատանան պատասխանեց.

—Լաւ, մէկ։

—Ցետոյ, ասացի, լիշեցէք խօսքերս՝—հէնց որ այստեղից ոտս կտրուի, Ջաղացպանը օղետուն կբանայ և կսկսի օղիի մէջ ջուր խառնել, իսկ վաչխ—նա հէնց այժմ էլ շատ լաւ է կուփում... Երկու։

—Լաւ, երկու,—հաստատեց սատանան, իսկ Ջաղացպանը գլուխը քորեց.

«Այդ որտեղից կարող էր դուշակել անիծեալը»։

—Ցետոյ ասում եմ՝—ուրիշներն ուզում են, որ մեզ դրողը տանէ, այդ ճշմարիտ է... Բայց ինչ էք կարծում, թէ որ այն ժամանակն այստեղ լինէին մեր Ջհուդներն ու իմանային,

թէ ինչ էիր ուզում ինձ անել, գալմաղալ կբարձրացնէին թէ չէ։ Իսկ Ջաղացպանի համար, մի տարուց, նրա հաւատակիցներից ումն ուզում էք հարցրէք, ամենքն էլ պիտի ասեն—դրողը տանէ նրան...։ Երբէք։

—Լա՛ւ, երբէք։ Ո՛վ է բան ասում։

—Շատ հետաքրքիր կլինէր, որ այդ էլ ուրանայիք։ Էլ ինչ Ջհուդի աղնիւ սատանայ պիտի լինէիք։ Բայց դուք այն ասացէք—ինչ էր մեր պայմանը։

—Ես ամեն բան կատարեցի։ Մի տարի քեզ կենդանի թողի—մէկ։ Ցետ բերի—երկու...։

—Իսկ երրորդը։ Ո՞րն է երրորդը։

—Ուրիշ էլ ինչ ես ուզում։ Որ դրաղը տանես — բաց կթողնեմ, կգնաս բանիդ։

—Հապա՝ ՀԼասներս...։ Կրած ՀԼասներս չպիտի՞ տաք...։

—Վնա՛ս։ Ո՞րտեղից կարող էիր ՀԼաս ունենալ, քանի որ մի ամբողջ տարի քեզ առանց վկայականի թոյլ տուինք մեր մէջ առուտուր անելու...։ Հը՞։ Դու աշխարքում երբէք տարում կարող չէիր այսքան օգուտ ստանալ...։ Ինքդ նայիր՝—ես այստեղից քեզ միայն կապայով տարայ, մինչև անդամ ոտիդ կօշիկ չունէիր, բայց այժմ տես, ինչպիսի կապոց ես բերել, հը՞։ Թէ ՀԼաս ես ունեցել, բաս այդ որտեղից է։

—Օ՛յ վայ։ Էլի կապոցն էք երեսովս տալիս...։ Ինչ որ այնտեղ առուտուրով աշխատել եմ—այդ իմ բաղդս է...։ Միթէ դուք իմ չանս հաշուել էք։ Ձեզ ուղիղն ասեմ, որ այնտեղ ձեր մէջ առուտուր անելուց, ես ՀԼասից դատ չահ չեմ տեսել, իսկ այստեղ էլ սաղ տարիս եմ կորցրել...։

—Ա՛յ դու խաբեբայ,—կանչեց սատանան։

—Ե՞ս եմ խաբեբան. դուք էք խաբեբայ, ցած, անպիտան, վատ...։

Ու սկսան դարձեալ այնպէս շուտ շուտ վրայ տալ, որ ոչ մի խօսք կարելի չէր հասկանալ։ Երկուսն էլ ձեռներն էին շարժում, երկուսն էլ թասակները թափ տալիս ու ոտքի մատների վրայ բարձրանում, հէնց գիտենաս կռուի պատրաստ երկու աքլոր լինէին։ Վերջապէս առաջինը սատանան ուշքի եկաւ.

—Դեռ լայտնի էլ չէ, թէ ով է տարել։ Որ Ջաղացպանը քեզ չիաղճաց, այդ ուղիղ է, իսկ մնացածը դեռ կտեսնենք, դեռ պէտք է ուրիշներին հարցնել, դուցէ նա օղետուն էլ բացած չլինի։

«Երկուսն եմ բաց արել,—դարձեալ գլուխը քորեց Ջաղացպանը։—Է՛հ, գոնէ պէտք է մի տարի սպասած լինէի,—այն ժամանակ Եանկէլը հաստատ տանուլ կտար գրաղը, թէ չէ այժմ չատ վատ հոտ է գալիս...»։

Եւ նա իւր Ջաղացի կողմը նայեցաւ — արդեօք կարելի չէր, կամացուկ, Ջաղացի քամակով փախչել, գիւղ գնալ։ Բայց այդ միջոցին անտառում մէկի փնթփնթոցն ու անհաւասար քայլուածքը լսեց։ Եանկէլը ուսեց իւր կապոցն ու վազեց, ուռիքի ետեր գնաց։ Ջաղացպանը հաղիւ կարողացաւ մի հաստ ուռենու ետև թաղ կենալ, որ երկուսն էլ—սատանան ու Ջհուդը—ուռուտ մտան, իսկ այդ միջոցին ամբարտակի ծայրին երևեցաւ բանուոր Գաւրիլօն։ Նրա հագուստը պատառոտած էր, գլխարկը մի կողմի վրայ թեք ընկել, իսկ բոբիկ ոտներն իրար հետ վիճում էին — մէկն ուզում էր աջ գնալ, իսկ միւսը հակառակի պէս, ձախ էր գնում։ Մէկը դարձեալ ուզում է իւր կողմը ձգի, բայց միւսը դէպի իրեն էր քաշում, այնպէս որ կարծես հէնց այն է խեղճի գլուխը մի կողմէ ընկնելու, իսկ մարմինն ու ոտքերը—միւս կողմ։ Այսպէս խեղճ տղան զանազան գծեր կազմելով գնում էր գնում, բայց էլի ամբարտակի ծայրը չէր հասնում։

Սատանան տեսաւ, որ բանուորը քոռ հարբած է, դուրս եկաւ ու իւր իսկական կերպարանքով կանգ առաւ ամբարտակի մէջ տեղը։ Ցայտնի բան է, ինչ ունէր սատանան հարբած մարդու հետ շատ նազ ու տուղ անելու։

—Բարի աջողում,—ասում է։—Որտեղ էք այսպէս կոնծել...։

Ջաղացպանը մ՛այն այժմ նկատեց, թէ ինչպէս այս մէկ տարուայ մէջ Գաւրիլօն ընկել էր և զզզուել։ Եւ այդ այն պատճառով միայն, որ իւր տիրոջ մօտ աչխատածը հէնց նրա մօտ էլ խումի էր տալիս. վաղուց է Ջաղացպանից փողի եր։ Ես չէր տեսել, հապա փողի տեղ միայն օղի էր վերցնում։ Բանուորը բոլորովին մօտ եկաւ սատանային, երկու ոտքը դէմ տուեց գետնին ու ասաց.

—Հօ.հօ, կանգնի։ Այս ինչ թարս ոտներ են, ախբէր։ Երբ որ հարկաւոր է, չեն գնում, իսկ երբ տեսնում են, որ մի բանի դէմ ես սռել, զօրով ուզում են առաջ տանեն։ Իսկ դու ով ես, ինչ ես, որ ասես չեմ ջոկում...

—Ես, եթէ բարեհաճիք տեսնել, սատանայ եմ...

—Հա՜։ Հանգ հո չես անում։ Հը՛... կարելի է ճիշդ էլ

լինի։ Ահա պոզերը, պոչը—ամեն բան իրա տեղն է։ Բաս գաւիկնեբդ ինչացու են։

—Ես, սրտներդ չցաւի, Ջհուդի սատանայ եմ։

—Ի՞։... Ա՛յ քեզ բան։ Որ պատմելու լինիմ, թէ ձեր մեծապատուութեան իմ աչքովս եմ տեսել, ոչ ոք չպիտի հաւատայ...։ Անցեալ տարի հո դու չքիր Եանկէլին չանչել։

—Հէնց ես էլի։

—Հիմի ումն ես եկել տանելու։ Զլինի՞ ինձ։ Զեռք չըտաս, թէ չէ կգոռամ, Աստուած վկայ կգոռամ...։ Դու դեռ չես իմանում, թէ ինչ ձայն ունիմ։

—Է՛հ, ի զուր մի կանչիլ, այ մարդ։ Դու իմ ինչիս ես պէտք...։

—Գուցէ Ջաղացպանին ես տանելու։ Թէ ուզում ես՝ կանչեմ դայ։ Բայց չէ։ Նրան էլ որ տարար լեռոյ ով է օղետուն պահելու։

—Միթէ նա օղետուն ունի։

—Նա՜...։ Չէ թէ մէկ, երկուսն ունի—մէկը գեղամիջում, միւսը ճանապարհի վրայ...

—Հա՜ հա՜հա...։ Զլինի՞ դրա համար է Ջաղացպանն ափսոսդ գալիս։

—Օ՛հ, այդ ինչ զօռբայ ծիծաղ ունիս...։ Հը՛մ։ Ես այն մարդը չեմ, որ Նրան ափսոսամ...։ Չէ՛, այդ չէր ասելիքս...։ Ուզում էի ասել—նա այն մարդը չէ, որ ես Նրան ափսոսամ։ Նա կարծում է, թէ Գաւրիլօն ախմախ է...։ Բայց չէ՛, չէ՛, նրա ասածն ուղիղ է—ես մի այնքան էլ խելօք մարդ չեմ, ներող կլինիք։ Բայց էլի փլաւ ուտելիս գդալը ուրիշի բերանը չեմ տանիլ, հապա միայն իմ բերանս։ Թէ ուզեմ պսակուել, ինձ համար կպսակուեմ, իսկ եթէ չեմ պսակուիլ, դարձեալ ինձ համար է։ Ուղիղ եմ ասում թէ ոչ։

—Ուղիղը ուղիղ է, բայց չեմ հասկանում, թէ ինչ ես ուզում ասել։

—Հը՛, գուցէ քեզ հարկաւոր չէ գիտենալ, դրա համար էլ չես հասկանում, բայց որովհետև ինձ պէտք է հասկանալ, դրա համար էլ հասկանում եմ, թէ ինչու է ուզում նա ինձ պսակել։ Է՛հ, թէպէտ չատ էլ խելօք չլինիմ, էլի չատ լաւ եմ հասկանում նրա միտքը։ Ա՛յ հէնց այն ժամանակն էլ որ դուք Եանկէլին տարաք, ես խղճացի նրան. «Հիմի ով պէտք է մեզ համար օղետուն պահէ», հարցրի աղիս։ Իսկ նա պատասխան

է տալիս. «Թիւհ, լիմար։ Միթէ մարդ չկայ։ Հէնց ասենք ես։ Այդպէս էլ ալժմս—որ Չաղացպանին տանէք, առանց այն չէ, որ նրա տեղը բռնող չգտնուի.... Դէ, քեզ պէտք է ասեմ, այ մարդ... Թիւհ, Թիւհ, ներեցէք։ Անիծուած սատանին մարդ ասացի...։ Քեզ պէտք է այս ասեմ—չգիտեմ ինչու, կարծես քունս է տանում։ Դու գիտես, ինչ ուզում ես արա .. կուզես վեր առ տար, իսկ ես գնամ, քնեմ, գիտես, մի քիչ հիւանդ եմ։ Լաւն այդ է...։ Ըհը՛...։

Եւ բանուորի ոտքերը դարձեալ սկսան իրար խառնուել, ու հազիւ էր դուռը բացել, ներս մտել, որ վեր ընկաւ ու սկսաւ խռմփացնել։

Սատանան ուրախ-ուրախ ծիծաղեցաւ ու ամբարտակի ծայրին կանգնած՝ Եանկէլին աչքով արաւ.

—Կարծես թէ ասածդ ուղիղ լինի, Եանկէլ։ Ասածիդ նման է դո՛ ես զալիս...։ Բայց արի՛ լինձ մի ձեռք չոր տուր, կվճարեմ...։

Եանկէլը մի վարտիկ հանեց ու սկսաւ լոյսին մոտիկ անել, որ մի գուցէ հնի տեղ նորը տայ, իսկ այդ միջոցին անտառից ճանապարհի վրայ մի զոյգ եզ երևաց։ Եզները քնամած դանդաղ-դանդաղ շարժում էին զլուխները, սայլի անիւները թեթևակի ճռնչում էին, իսկ սայլի մէջ պառկած էր մի գիւղացի, Օպանաս Դանդաղկոտը։ Նա առանց վերնաշորի էր, գլուխը բաց, ոտաբոբիկ, և ձայնը ձգած մի երգ էր դուռում։

Լաւ մարդ էր Օպանասը, միայն օղուի մեծ սէր ունէր։ Պատահում էր, որ հագուած-զգուած դուրս կգար մի տեղ գնալու, բայց Խայրկօն օղետան առաջ կանգնած նրան ձայն կտար.

—Մի գաւաթ անուշ չես անի, Դանդաղկոտ։ Ի՞նչ կայ շտապելու։

Օպանասն էլ անուշ կանէր։

Ցետոյ ամբարտակի վրայից անցնելով, դուրս կգար գիւղից, բայց այդտեղ էլ միւս օղետան առաջից ինքը Չաղացպանը ձայն կտար.

—Մի գաւաթ անուշ չես անի, Դանդաղկոտ։ Ինչի՞ ես շտապում։

Նա այդտեղ էլ կկոնծէր։ Մէկ էլ տեսար—առանց մի տեղ գնալու կվերադառնար տուն։

Այո, լաւ մարդ էր, բայց երևի նրա ճակատին էլ այն է գրուած եղել, որ երկու օղետների միջև կորչի, գնալ...։ Բայց

և այնպէս ուրախ մարդ էր և միշտ խաղ ու տաղ էր ասում։ Հո լինում են այդպիսի մարդիկ—ունեցած չունեցածը կխմեն, քէֆի կանեն, իսկ կրակ դարձած կնանիք տանը նրանց ճամբան կսպասեն. բայց այդ մարդիկ հէնց որ մի երգ կամ մի երգի յաւելուած յօրինեն, կկարծեն թէ դրանով դարդը թաղեցին։ Այդպէս էլ ալժմս—Օպանասը սայլի մէջ պառկած այնպէս էր զուռում, որ մինչև անգամ գորտերն ափից Ջրի մէջ են ցատկում.

Սիրուն եղներ, հա՛ եզը,
Առաջ տարէք իմ սէրը.
Ոտներումս ոյժ չկայ,
Դէհ, ինչ անենք, ոյժ չկայ.
Զուխալ, կօշիկ ու փափախ
Օղետանը թողեցի.
Չաղացպանի դուքնում, ախ,
Անուշ արաղ կոնծեցի։

—Լէհէ, այդ ինչ զրոզի տարածն է ճամբի մէջ տեղը կանգնած, եզներիս առաջն է կտրել...։ Ա՛յ թէ ալարս չէր գալ կառքից ցած գալու, ես քեզ ցոյց կտայի, թէ ինչ է նշանակում ճամբայ փակելը...։ Դահ, դահ, եզը, դահ...։

—Ա՛ մարդ, դէ մի բոպէ կանգ առ,—քաղցր ձայնով ասաց սատանան։—Մի քիչ զրից ունէինք...։

—Մի՞ քիչ։ Դէ լաւ, ինչ ասելու ես, ասա։ Ո՛վ գիտի Կամենկայում օղետունը փակած լինին, գնա՝ ու դրանց զարթացրու...։ Ի՛նչ է անունդ, չգիտեմ, ինչ էիր ասելու...։ Հը՞։

—Այդ ում վրայ էիր այդպէս զեղեցիկ երգ ասում։

—Շնորհակալ եմ գովասանքիդ համար։ Երգս Չաղացպանի վրայ էր, որ հէնց այստեղ, Չաղացումն է ապրում. իսկ թէ լաւն է թէ վատը, այդ իմ գիտնալու բանս է, որովհետև ես այդ ինքս ինձ համար եմ ասում։ Ո՛վ է իմանում, գուցէ մէկի համար ուրախութիւն է դա, իսկ միւսի համար լաց, ահա ինչ...։ Դահ, դահ եզը ջան։ Դարձեալ կանգնել ես այդտեղ։

—Չա՛ռ. կանգնել եմ։

—Է՞լ ինչի ես կանգնել։

—Երգի մէջ ասում ես, որ Չաղացպանի արաղը համով է։

—Տես ինչ... խորամանկն է։ Դեռ երգս չեմ վերջացրել, իսկ նա բառերի ետևից է ընկել։ Դէ որ այդպէս է, ուրեմն մինչև վերջը ասեմ խաղս.

Ջաղացպանի դուքնում, ախ,
Անուշ արաղ կոնծեցի...
Օհ, երկու չիշ արաղին
Մէկ չիշ սառ ջուր կըխառնեն...

—Հը՛, ինչ ես դարձեալ ցից եղել։ Էլ ինչ ես ուզում, Սպասիր մի սալլից ցած գամ, տեսնեմ երկար պիտի կանգնես այդտեղ, հա...։ Կաց մի կոպալս գլխիդ ջարդեմ, տեսնեմ ինչ կասես...։

—Այս բոպէիս, այս բոպէիս կգնամ. մի նեղանա։ Միայն մէկ այս էլ ասա—ինչ կասէիր, թէ որ այստեղի ջաղացպանին էլ սատանան տանէր, ինչպէս որ Նանկէլին է տարել...։

—Ի՛նչ պիտի ասէի—ոչինչ էլ չէի ասել...։ Ուղիղն ասեմ —երևի վերջ ի վերջոյ նրան էլ է չանչելու։ Էֆ, տեսնում եմ դու դեռ կանդնած ես...։ Հը՛, սալլից ցած եկայ հա։ Ցեռ, ար դէն մի ոտս էլ բարձրացրել եմ...

—Լաւ, լաւ, դէ գնա ուրեմն, ինչ բարկացկոտ մարդ ես եղել, տո։

Հեռացար, թէ չէ։

—Հեռացայ, հեռացայ։

—Դահ, դահ, եզը ջան, դահա։

Եզները դարձեալ կոտոշները չարժեցին, անիւները ճռնչացին ու սալլը գլորուեց ամբարտակի միւս ծայրը, իսկ Օսպանասը իւր երգը շարունակեց։

Հա, քաշեցէք, եզը ջան,
Կեռ-կեռ պողերիդ զուրբան։
Ալսօր ակներս խըմեցի,
Վաղն էլ սէլս կըխմեմ։

Սալլը ամբարտակից դուրս գալիս ակները թրխկացին, և Օսպանասի երգը սկսաւ կամաց կամաց ելլի վրայ խլանալ։

Դեռ այդ երգը չէր լռել, որ դեռի միւս կողմից մի ուրիշ երգի ձայն լսուեցաւ։ Կանացի ձայները հնչում էին, զնգում—նախ հեռուից, իսկ յետոյ անտառից։ Երևի աղջկերքը մի տեղ հունձը վերջացրած կամ հնձած արօտը փոցխած, այժմ երիտասարդ կանանց հետ, ուշի մնացած, խաղ ու տաղով տուն էին դառնում, որ անտառով անցնելիս չվախենան։

Սատանան մի անգամ ցատկեց և Նանկէլի մօտ ուռենու քամակը մտաւ։

—Շուտ արա, մի բան տուր։

Նանկէլը մի ցնցոտի դրեց նրա ձեռքը։ Սատանան մի կողմ չպրտեց այն ու ձեռքը տարաւ կապոցին։

—Աղքատի՞ ես տալիս, ինչ է. այնպիսի բան է տուածդ, որ ամօթ է մարդու աչքի երևալ։ Լաւը տուր։

Սատանան, ինչ որ իրեն պէտքն էր քաշեց առաւ, իսկոյն հաւաքեց իւր թևերը, որ չղջիկանի թևերի նման փափուկ էին, իսկոյն էլ հագաւ ծովի նման լայն, կապտաւուն վարտիկը, հագաւ նաև միւս շորերը, գօտին կապեց ու գոգերը ծածկեց մորթէ գլխարկով։ Միայն պոչը ճիտքի (խոնճի) վրայով դուրս էր ցցուել ու օձի նման աւաղի վրայ վազում...։

Սրանից յետոյ լեզուով քմքին չփփացրեց, ոտները գետնին տուրեց, ձեռքերը կողքերին դրեց ու աղջկերանց դէմն ելաւ—հէնց գիտենաս իսկական քաղաքացի կամ թէ չէ կալուածատիրոջ կառավարիչ լինէր—ու կանգնեց ամբարտակի մէջ տեղը։

Իսկ երգը քանի գնում մօտենում էր ու զիլ լսւում,—այնպէս էր երկրիս երեսին ու պարզ լուսնի տակ փռուել, որ կարծես աղ աչխարքս պիտի զարթնէր այս կէս գիշերին։ Բայց յանկարծ մէջ տեղում կտրուեց...։

Աղջկերքը ցրիւ ընկած դուրս եկան անտառից — հէնց գիտենաս մէկը վարդի տերևներ շաղ տուած լինէր գետնի երեսին.—բայց երբ ամբարտակի վրայ մարդու պատկեր տեսան, վախից ճանապարհի ծայրին կուչ եկան, իրար մօտեցան։

—Այդ ինչ է այնտեղ կանգնած, ա՛յ,—հարցրեց աղջկերանցից մէկը։

—Այդ հո ջաղացպանն է,—պատասխանում է միւսը։

—Ի՛նչ ջաղացպան—սկի ջաղացպանին նման չէ։

—Գուցէ բանուորը լինի։

—Ո՛վ է բանուորին այդպիսի շոր տուել...։

—Դէ, մի ձայն հանիր՝ թէ որ չարոց չես,—կանչեց այրի Բուչիլիխան, որ ինչպէս երևում է ամենից սրտոտն էր։

Սատանան հեռուից գլուխ տուաւ ու յետոյ մօտ գնաց նրանց. նա ոտներով ու ամբողջ մարմնով այնպիսի շարժումներ ու ձևեր էր անում, ինչպէս անում է իսկական կառավարիչը, որ ուզում է իրեն պան ձևացնի, և ասաց.

—Միք վախենալ, սիրուններս։ Ես մի երիտասարդ մարդ եմ ու ձեզ ոչ մի վնաս չեմ տալ։ Հանգիստ բաներիդ գնացէք...։

Աղջկերքն ու ջահիլ կանայք իրար բոթբոթելով ելան ամբարտակի վրայ, և շուտով շրջապատեցին նրան...։ Է՛հ, միշտ հաճելի չէ լինում, երբ մի-երկու տասնեակ անհ այսպիսի սրախոս կանայք շրջապատեն մարդուս ու սկսեն սուր աչքերով քննել, միմեանց կռներով բոթբոթել ու վրաղ ծիծաղել։ Սատանան էլ շատ անհամ դրութեան մէջ էր, կուչ ու ձիգ էր անում, տրորուում—չգիտէր ինչպէս շարժուի, ինչ անի։ Իսկ նրանք շարունակ ծիծաղում էին։

«Ա՛յդպէս է, այդպէս. դրան մի լաւ հուպ տուէք,—մտածում էր ջաղացպանը կոճղաւոր ուռենու քամակից։—Մտներդ բերէք, հոգեակ, թէ ինչպէս Ֆիլիպկոն ձեզ հետ երգեր էր ասում, կլոր պար բռնում։ Այժմ տեսնում էք ինչ փորձանքի մէջ եմ—ազատեցէք ինձ, ոտանի մէջ ընկած ճանճ եմ դարձել»։ Որ մի քիչ էլ այսպէս շարունակէին — կարծեմ սատանան գետինը կանցնէր...։

Բաց այրի Բուչիլիխան նրանց կանգնեցրեց.

—Հերիք էլաւ, թուխակներ։ Խեղճին այնքան ծաղրեցիք, որ քիթը երկայնեց, գետնին հասաւ, իսկ ձեռք ու ոտները թուլացած կախ ընկան...։ Բայց դու մեզ այս ասա,—ումն ես այս ճանճի մօտ սպասում։

—Ջաղացպանին։

—Երեսի բարեկամ էք։

«Գետինը պատռուէր ու այսպիսի բարեկամներիս ամենքին էլ կուլ տար»—ուզում էր գոռալ ջաղացպանը, բայց ձայնը բռնուել, կոկորդից չէր գուրս գալիս. իսկ սատանան պատասխանեց.

—Մի այնքան էլ մօտիկ բարեկամ չենք, այնպէս, կայ էլի—եկել եմ հին հաշիւներս տեսնելու։

—Վաղուց է նրան չես տեսել։

—Դէ ուրեմն հիմի նրան չես ճանաչիլ։ Մի ժամանակ շատ լաւ երիտասարդ էր, բայց այժմս այնպէս է քիթը ցցել, որ մլրախով էլ չես հասնիլ։

—Չնա։

—Հապա...։ Ա՛ղջկերք ուղիղ չէ՞ ասածս։

—Ուղիղ է, ուղիղ է, ուղիղ է.—լսուեց ամեն կողմից։

—Թիւհ, մի քիչ կամաց,—կանչեց սատանան ականջնե-

ը խցելով.—աւելի լաւ է դուք ինձ ասէք, այդ ինչից այդպէս եղաւ, և երբուանից։

—Այն օրուանից, որ հարստացաւ։

—Ու սկսաւ շահով փող տալ։

—Ու օղետուն բաց արաւ։

—Իսկ իմ մարդուս, Օզանասին, այդ գետինը մտած Խալրկօլի հետ այնպէս է ցանցի մէջ ձգել, որ խեղճը բանն ու գործը թողած խելքը-միտքը օղետան հետն է։

—Մեր տղամարդկանց ու հայրերին էլ հարբացրել, ունեցած-չունեցածները ձեռներիցը խլել է։

—Ա՛խ, ախ, մեր գլխին ցաւ է դարձել այդ անպիտան ջաղացպանը,—ձայնը զցեց մի կին և, նորերս լսուող երգերի փոխարէն, կանանց անէծքն ու զանգատն էր հնչում գետակի վրայ։

Ֆիլիպպոս վիզը քորեց, երբ տեսաւ, թէ ինչպէս են կանայք նրան պաշտպանում։ Իսկ սատանան, ինչպէս երևում է, բոլորովին արդէն ինքն իրեն հաւաքել էր։ Աչքի պոչովը մտիկ էր տալիս ու ձեռները չփում։

—Հը՛մ, դեռ այդ ինչ է որ,—զիլ ձայնով կանչեց Բուչիլիխան։—Հապա լսել էք, ինչ է ուզում բերի Գալիալի, այրի կնոջ աղջկայ գլխին։

«Թիւհ»—թքեց ջաղացպանը։ Այս ինչ անիծուած թուխակներ են, տա։ Ո՞վ է դրանց բան հարցնում, որ այդ էլ են ուզում պատմել...։ Եւ որտեղից են իմացել։ Այդ բանն այսօր պատահեցաւ գիւղում, իսկ նրանք արդէն ամեն բան հունձ անելիս իմացել են...։ Ա՛յ քեզ կէն, և ինչու է Աստուած ստեղծել դրանց...»։

—Իսկ իմ բարեկամս ինչ է ուզում Գալիալին անել,—հարցրեց սատանան իւր չորս կողմը նայելով, որպէս թէ այդ բանը մի այնքան էլ չէր հետաքրքրում իրան։

Եւ մեր թուխակները սկսան իրար ընդհատելով, խօսքն իրար բերանից խլելով, ամեն բան մանրամասնաբար տեղովտեղով պատմել։

Սատանան գլուխը տատանեց։

—Վայ, վայ, վայ։ Այդ լաւ բան չէ։ Կարծեմ որ առաջուայ միկիթան Եանկէլն էլ այդպիսի բան չի արել։

—Վա՛հ, կարող էր ջհուդը մի այդպիսի բան հնճարել։

—Ո՞րտեղից։

—Ինչպէս տեսնում եմ, սիրելիներս, դուք բարեկամիս մի այնքան էլ չէք սիրում...

—Թող քաջքերը նրան սիրեն. նա իւր օրում այդ բանը մեզանից չի տեսնիլ...

—Վայ, վայ վայ։ Տեսնում եմ, որ նրան դուք բարիք էլ չէք ցանկանում...

—Սև ցաւ տանի նրան։

—Իւր աղալի եռևից ճահիճը գլորուի նա։

—Սատանան տանի նրան, ոնց որ Եանկէլին տարաւ... Ամենքն էլ ծիծաղեցան։

—Շատ ճիշդ ես ասում, Օլենո, որովհետև նա ջհուդից էլ քեթար է։

—Ջհուդը գոնէ աղջկերանց խելքը չէր ման բերում, նրանց հանգիստ թողած միայն իւր Սուրկալին էր ճանաչում։ Սատանան մինչև անդամ կանգնած տեղը վեր ցատկեց։

—Է՛, չնորհակալ եմ, սիրելիներս, որ քաղցր խօսք ասացիք...։ Տուն գնալու ժամանակ չէ։

Իսկ ինքը աքլորի նման, որ ուզում է լուսաբացին պինդ-պինդ կանչել, գլուխը լեռ գցեց, ու չդիմացաւ, քրքչաց, ծիծաղեց։ Եւ նրա ծիծաղն այնպէս որոտաց, որ մինչև անդամ գետակի լատակում եղած բոլոր չար ոգիքը դէս ու դէն ընկան ու կանգնած ջրի երեսին կլոր-կլոր շրջաններ առաջացան...։ Իսկ աղջկերքն այդ ծիծաղից խրտնած, նման ճընճղուկների երամի, որի վրայ քար են արձակում, այնպէս ցրիւ եկան, կարծես քամին փչել, ամբարտակից քշած, տարած լիներ...։

Ջաղացպանի մաղերը բիզ-բիզ կանգնեցան և նա աչքը գիւղի ճամբին ձգեց. «ինչպէս լինէր,—մտածեց նա,—որ ես էլ կարողանայի աղջկերանց եռևից փախչել։ Մի ժամանակ ես էլ ուրիշներից պակաս վաղկան չեմ եղել»։ Եւ յանկարծ մի քիչ թեթև չունչ առաւ, երբ տեսաւ, որ ամբարտակի ծայրին երևաց մի մարդ, այն էլ՝ իւր վարձուորը, Խայրկօն։

«Հապա թէ կարող ես սրան էլ մօտեցիր,—մտածեց Ջաղացպանը.—այնպէս ռեխիդ տայ որ...։ Սա իմ մարդս է։

XI

Վարձուորը բոբիկ էր, կարմիր խումաչէ չապիկ հագած, գլխի գլխարկն առանց պահպանակի, ծործորակին քաշած, և փայտի վրայ անցկացրած բերում էր Օպանասի կօշիկները, որոնցից կուպրի հոտը սաղ ամբարտակն էր բռնել։ «Մի դրան նայիր, ինչպէս չտապել է,—մտածեց Ջաղացպանը,—արդէն կօշիկները վերցրել է...։ Է՛հ, ասենք ոչինչ, վերցնում է վերցնի։ Այժմ յոյս նա է»։

Վարձուորն ամբարտակի մէջ տեղում մի անծանօթ մարդ տեսնելով, կարծեց, թէ դա մի որ և իցէ թափառական աւազակ է և ուզում է ձեռքից կօշիկները խլի։ Այդ պատճառով էլ նա Զանջոզից մի քանի քայլ հեռու կանգ առաւ և ասաց.

—Գիտես ինչ կայ, աւելի լաւ է մօտ չգաս—չեմ տայ։

—Ի՞նչ ես ասում, այ մարդ, խելքի արի։ Ես կօշիկ չունիմ, ինչ է։ Մտիկ տուր, իմը քոնից էլ լաւն է։

—Բաս ինչ ես ջրի ափին բսած ծուռտիկ եղևնու պէս եկել, գիշերով այստեղ տնկուել։

—Ուզում եմ քեզ մի հարց տամ։

—Զարմանք բան։ Հանելուկ հո չես ասելու։ Որտեղից ես իմացել, որ ես ամեն մի հանելուկ ամենից լաւ կգտնեմ։

—Վա՛, լսել եմ, Էլի։

Զինուորը կօշիկները ցած դրեց, հանեց քիսան ու ըսկսաւ չիբուխը լցնել։ Ցետոյ խփեց չախմախը, կրակ արաւ ու չիբուխը կպցնելով, ասաց.

—Դէ, հիմա ասա,—ինչ հանելուկ է։

—Չեմ ասում, թէ հանելուկ է, այլ այնպէս...։ Ի՞նչ ես կարծում, ամենալաւ մարդն ով է այստեղ։

—Ես։

—Է՛, ինչո՞...։ Աւելի լաւ մարդ չկայ։

—Դու հարցնում ես—իմ կարծիքով ով է...։ Դէ ես էլ ինձ ոչ ոքի հետ չեմ փոխիլ։

—Ուզիլ ես ասում։ Իսկ Ջաղացպանը... ինչպէս է։

—Ջաղացպանը...։

Զինուորը մի այնպիսի ծխի բարդ արձակեց բերանից,

որ հէնց գիտենաս ձիու սպիտակ պոչ լինէր լուսնի լույսի առաջ, ու աչքի ծայրով ծուռ-ծուռ սատանին մտիկ տուաւ։

—Դուք, պարոնս, ակցիզում ծառայող հո չէք։

—Չէ։

—Կամ գուցէ ոստիկանութեան մէջ էք... գաղտնի գործով։

—Չէ ասում եմ քեզ...։ Խելօք մարդ պիտի լինիս, ու դեռ հասարակ մարդը չես կարողանում ծառայողից ջոկել։

—Ո՛վ ասաց...։ Ես քու բոլոր ոսկորներդ գիտեմ...։ Հ՞ըցրածս էլ, այնպէս, մի բան էր։ Ուրեմն ասում ես—ինչ մարդ է ջաղացպանը։

—Հմմ։

—Մարդ է, էլի—ոչ բարձր է, ոչ ցած... միջակ բօյով։

—Է՛, չեղաւ, այն չէ ասածդ...։

—Այն չէ։ Ի՞նչ կուզէիր, որ ասէի...։ Գուցէ ուզում ես իմանալ, թէ ձրտեղում խալ ունի։

—Ինչպէս տեսնում եմ, դու սիրում ես կատակ անել, բայց ես ժամանակ չունիմ։ Ինձ պարզ ասա—ջաղացպանը լաւ մարդ է, թէ վատ։

Զինուորը դարձեալ բերանից պոչի նման մի բարդ ծուխ թողեց ու ասաց.

—Տեսնում եմ, շատ ես առաջ վազում, ուզում ես առանց ծամելու կուլ տալ։

Սատանան աչքերը չռեց. իսկ ջաղացպանիս սիրտը ուրախութիւնից թրթռաց։

«Լեզու եմ ասում է»—մտածեց նա։—Իսկ ես քանի քանի անգամ ուզում էի, որ նրա լեզուն բռնուի։ Տես որ պէտք եկաւ,—մի մտիկ տուր, ինչպէս է սատանին կարում...»։

—Ասում եմ—սիրում ես առանց ծամելու կուլ տալ,—խիստ կերպով պատասխանեց զինուորը։—Արի ու ասա—ջաղացպանը լաւ մարդ է թէ վատ։ Ինձ համար ամեն մարդ էլ լաւ է։ Ես, աղբէր ջան, շատ մաղից եմ հաց կերել։ Այնտեղ, ուր հացի թիքան բողոքումդ կմնար, սկի իմ վէջս էլ չի եղել...։ Հը՛, ինչ ես կարծում, փմար ես գտել, ինչ է...։

«Ա՛յ այդպէս, այ այդպէս է»—ինքն իրեն ասաց ջաղացպանը և ուրախութիւնից տեղիցը վեր ցատկեց։—«Ես՝ ես չը-լինիմ, թէ որ մի կէս ժամից սատանան նրա առաջ ոչխարից աւելի ախմախացած չմնայ։ Ես որ ժամում սաղմոս եմ կար-

դում, ոչ մէկը ոչ մի խօսք չի հասկանում... որովհետև չուտ-չուտ եմ կարդում։ Բայց սա չնայելով, որ ծանր ծանր է խոսում, բայց արի ու բան հասկացիր...»։

Ուզիղ որ, խեղճ սատանան այնպէս պինդ-պինդ քորեց գլուխը, որ քիչ էր մնում գլխարկը գլխից վեր գցէր։

—Կաց, աղբէր,—տեսնում եմ, որ մենք երկուսս էլ ջուր ենք մաղում. մենք ճամբից դուրս ենք եկել...։

—Բնչ չգիտեմ, բայց ես ամեն տեղ էլ իմ ճամբաս կը գտնեմ։

—Սիր ես ձեզ հարցնում եմ—ջաղացպանը լաւ մարդ է թէ ոչ, իսկ դուք ուր գնացիք։

—Եկ ես էլ քեզ մի բան հարցնեմ—ջուրը լաւ բան է թէ չէ։

—Ջուրը... ինչու չպիտի լաւ լինի։

—Իսկ եթէ կլաս լինի, ջրի վրայ չես նայիլ, այնպէս չէ—ուրեմն ջուրը լաւ չէ։

—Լաւ, ասենք թէ լաւ չէ։

—Իսկ եթէ առաջդ գարեջուր լինի դրած, այն ժամանակ կլասի վրան էլ չես նայիլ։

—Այդ էլ ուղիղ է։

—Հապա որ մի բաժակ օղի հրամցնեն, հո գարեջրի վրան էլ չես նայիլ...։

—Ասենք այդ այդպէս է...

—Դէ, պլծաւ գնաց։

Սատանան արիւն-քրտինք մնաւ և նրա չուխի տակից պոչը սկսաւ դէս ու դէն գնալ-գալ, այնպէս որ մինչև անգամ ամբարտակի վրայ փոշի բարձրացաւ։ Իսկ զինուորը կօշիկները փայտի վրայ անցկացրած արդէն ուզում էր ձգել, որ ճանապարհը շարունակէ, բայց այդ միջոցին սատանան գլխի ընկաւ, թէ ինչպէսով կարող էր նրանից բան իմանալ։ Մի երեք քայլ հեռացաւ նա և ասաց.

—Թէ որ այդպէս, դէ գնացէք ձեր ճամբան։ Իսկ ես այստեղ կսպասեմ—գուցէ պատահմամբ զինուոր Խարիտոն Տրեգուբենկօին տեսնեմ։

Զինուորը կանգ առաւ։

—Ինչիդ է նա։

—Պէտք է...։ Ասում են զինուոր Տրեգուբենկօն խելօք մարդ է—ձեռքից ամեն բան էլ կգայ։ Կարծում էի այդ դուք

էք։ Տեսնում եմ, որ սխալուել եմ։ Ձեզ հետ խօսողը զուր ժամավաճառ է լինում, խառնւում, և ոչինչ չի հասկանում...։

Զինուորը կոշիկը ցած դրեց։

—Դէ էլի հարցրու։

—Է՛հ, էլ ինչ հարցնեմ։

—Ձէ, մի փորձիր։

—Ուրեմն լաւ։ Ասա ինձ, ով էր լաւ—օգնավաճառ Եանկէլը թէ Ջաղացպանը։

—Դէ հէնց այն գլխից այդպէս ասէիր, էլի. թէ չէ սկսի չեմ սիրում այն մարդկանց, որ ոտաւորը թողած ձիաւորի յետեւից են ընկնում։ Այնպիսի մարդիկ կան, որ աւելի լաւ են համարում տասը վերստ կածաններով մահ գալ, քան թէ մի վերստ ուղիղ ճամբով գնալ։ Հիմի ես քեզ ամեն բան, ինչպէս որ պէտքն է, տեղով-տեղով ասեմ. Եանկէլը մի օղեստուն ունէր, իսկ Ջաղացպանը—երկուսն ունի։

«Ձէ, այդ չեղաւ. այժմ արդէն կարծես ուրիշ տեսակ սկսաւ խօսել,—վշտացած մտածեց Ջաղացպանը։—Աւելի լաւ էր այդ մասին սուս անէր...»։

Իսկ զինուորը շարունակեց.

—Եանկէլի մօտ տրեխով էի մահ գալիս, իսկ այժմ կոշիկ ունիմ...

—Որտեղից է այդ կոշիկը։

—Հը՛մ, որտեղից է...։ Մեր գործն ուղիղ այնպէս է, ինչպէս երկու դոլով բանող Ջրհորը—մէկը լցւում է, միւսը՝ դատարկւում,—մէկը վեր է բարձրանում, միւսը՝ ցած իջնում։ Ես տրեխ էի հագնում—այժմ կոշիկ ունիմ։ Հապա մի Օպանաս Գանդագկոսին մտիկ տուր—նա կոշիկ էր հագնում, իսկ այժմ՝ բոբիկ է, որովհետև ախմախ է։ Իսկ խելօք մարդին դոլը լիքն է գալիս, դատարկ լեռ դառնում...։ Հասկացար։

Սատանան ուշադրութեամբ լսում էր, և ասաց.

—Սպասիր։ Հէնց իմանաս գործին կամաց-կամաց մօտենում ենք։

—Հապա։ Ես հէնց դրա համար էլ ասում էի՝—թէ դու Եանկէլին կվաս համարես, այն ժամանակ Ջաղացպանը գարեջուր է, բայց եթէ ինձ մի լաւ արաղ հրամցնես, ես գարեջուրն էլ կթողնեմ...։

Սատանի ագին այնպէս ուժով չարժուեց ամբարտակի վրայ, որ մինչև անգամ Խայրիկոն էլ նկատեց։ Նա մի բարդ

ծուխ բաց թողեց ուղղակի սատանի քիթ ու բերանին և որպէս թէ անդիտութեամբ ոտով հուպ տուաւ նրա պոչը։ Սատանան վեր ցատկեց ու գոռաց. երկուսն էլ վախեցան, երկուսի աչքերն էլ մեծ-մեծ բացուեցան և երկուսն էլ կէս բոպէի չափ, իրար երեսի մտիկ տալով, մնացել էին լուռ։

Վերջապէս Խայրիկոն իւր հանգի չվվացրեց ու ասաց.

—Է-հէ հէ...։ Բանն այս է հա...։

—Հապա ինչ էիք կարծում,—պատասխանեց սատանան։

—Ա՛յ թէ ուրեմն ով էք եղել դուք։

—Այո, ինչպէս տեսնում էք...։

—Ուրեմն այն դուք էիք... անցեալ տարի...։

—Հա։

—Այժմ... եկել էք նրան...

—Այո, այո...։ Ի՛նչ կասէք։

Խայրիկոն ձգձգուեց, ծուխը բաց թողեց բերանից և պատասխանեց.

—Վերցրու։ Չեմ լաց լինի...։ Ես մի խեղճ մարդ եմ դրա հետ գործ չունիմ։ Ձիրուխը բերանիս կնստեմ օղեսան դրանը, երրորդին կսպասեմ։

Սատանան նորից քրքջաց, իսկ զինուորը կոշիկներն ուսը ձգեց և արագ քայլերով հեռացաւ։ Եւ երբ որ անց էր կենում ուռուտի մօտով, Ջաղացպանը լսեց, թէ ինչպէս նա քթի տակ ասում էր.

—Այ քեզ բան—մէկին տարաւ, այժմ միւսին է տանելու...։ Է՛հ, ես ինչ գործ ունիմ խառնուելու...։ Սատանան Ջհուդին վերցրեց—Ջաղացպանը ժառանգութիւն ստացաւ. այժմ էլ Ջաղացպանին կվերցնի—ժառանգութիւնն ինձ կմնայ։ Զինուորի համար մէկ բան է—հա՛ Ջհուդին է ծառայել, հա՛ Ջաղացպանին։ Այսօրուայ ծախսի փողը իմ ձեռքիս է. ով է իմանում, գուցէ հէնց ինքս էլ գործին ձեռք դարնեմ։ Այսուհետև այլ ես Խայրիկ Տրեգուբենկոն չի լինիլ, հապա—Խարիտոն Իվանովիչ Տրեգուբով...։ Բայց ես չեմ լիմարանալ ու գիշերով ամբարտակի վրայ չեմ գալ...։

Եւ սկսաւ սարն ի վեր բարձրանալ։

Ջաղացպանը չորս կողմը նայեցաւ թէ այժմ ով պէտք է իրան ազատի։ Ոչ ոք չկար։ Ճանապարհը մթնել էր. ճահճի մէջ քնաթաթախ դորալը կրկռաց, բուն զայրացած շամբուտի մէջ ցատկեց...։ Իսկ լուսինն անտառի եռեից միայն աչքի

ծայրով մատիկ էր տալիս՝ «տեսնենք ինչ է գալու Ֆիլիպպի գլխին...»։ Մատիկ տուեց, աչքը կկոցեց ու անտառի ետևը մտաւ...։

Իսկ սատանան ամբարտակի վրայ կանգնել, կողքերը բռնած քրքչում է։ Այդ ծիծաղից դողդողում է հին Ջաղացքը և նրա ամեն մի ճեղքից ալիւր բարձրանում. անտառի չար ոգիքը, իսկ Ջրի մէջ էլ ալքերը—զարթեցան, դէս ու դէն ընկան, ոմանք անտառի մէջ շուաքի էին նստանում, ոմանք էլ անորոշ բիծ էին թռում Ջրի մէջ. շարժուեց նաև կանգնած Ջուրը, ծուխ ու մուխի պէս բարձրացաւ սպիտակ մշուշը, և Ջրի երեսին սկսան կլոր շրջանակներ կազմուել։ Մատիկ տուաւ Ջաղացպանը—և սիրտը ճաքեցաւ—Ջրի միջից իրեն էր նայում մի կապտած դէմք՝ մութ, անշարժ աչքերով և միայն երկար բեխերն էր շարժում, հէնց զիտենաս Ջրուտիճ լինէր։ Այդ իսկ և իսկ ինքը, քեռի Օմելկոն է Ջրից դուրս գալիս ուղղակի դէպի ուռուտը գնալու համար...։

Ջհուդ Եանկէլն արդէն վազուց կամացուկ ամբարտակն էր դուրս եկել, հաւաքել այն շորերը, որ սատանան հանել էր հագից, և, ուռենու տակ ծլկուելով, սկսաւ ձեռաց իւր կապոցը կապել։ Եվ վնասի մասին բերան չի բանում ասենք մի ալգպիսի դրութեան մէջ ով էլ որ լինէր կզարզանդէր։ Ի՛նչ վնաս պահանջելու ժամանակ էր...։ Կապոցն ուսեց ու Ջաղացի քամակով անձայն անցաւ կածանն ու միւսների ետևից դէպի բլուրը գնաց...։

Ջաղացպանն էլ իւր Ջաղացը դարձաւ,—հէչ չէր դռները պինդ գոցէ ու բանուորին զարթեցնէր։ Ուռուտի քամակից դուրս եկած-չեկած, սատանան արդէն կողքին բուսաւ։ Ֆիլիպպը փախաւ, դուռը փակեց ետևից, մտաւ իւր խուցը, ձեռաց ճրագը վառեց որ շատ սարսափելի չլինի, ընկաւ գետնին ու սկսաւ քանի Ջանումը ոյժ կար, գոռալ, գորգոռալ,—ինքնելդ հասկացէք,—ուղիղ այնպէս, ինչպէս Ջհուդներն իրենց աղօթատանը...։

Իսկ սատանան թռչում, պտոյտ պտոյտ է անում տանիքի վրայ, մութը պատուհանից ներս կոխում, թեերով ապակուն խփում,—չէ իմանում, որտեղից մտնի որ «Այդ համեղ թիքան ձեռքից չփախցնի...։

Ցանկարծ—փաաթ...։ Մի բան յատակին դիպաւ, կարծես մի մեծ կատու ընկած լինէր։ Այդ անիծուածն էր ծնունդ-

լոյզից ներս մտել, գետնին զարնուել ու ոտի կանգնել...։ Եւ Ջաղացպանս զգում է, թէ ինչպէս իւր մէջքին նստած՝ չանչերը զգում է Ջանին։

Ի՛նչ կարող էր անել...։

Փաաթ նորից...։ Աչքերը մթնեց, մի մութը ու նեղ տեղով քաշ տուեց Ջաղացպանին. ծեփը թափուեց, իսկ մուրը ամպի պէս բարձրացաւ և յանկարծ...։ Ահա արդէն Ջաղացի կտուրն ու ծխնելոյզը ներքև մնացին, քանի գնում փոքրանում են, մանրանում, հէնց զիտենաս Ջաղացն էլ, ամբարտակն էլ, ուռուտն էլ, կանգնած Ջուրն էլ դէպի անդունդ են գլորուում...։ Իսկ ներքևում խաղաղ կանգնած մաքուր Ջրի մէջ երևում է շուռ ընկած երկինքը, և աստղերն էլ կամացուկ աչքով են անում, ըստ սովորականին...։ Եւ մէկ էլ Ջաղացպանը տեսնում է—այդ կապոյտ խորութեան մէջ, աստղերի առաջը բռնած, կարծես մի մեծ թռչուն է թռչում, յետոյ կարծես ադաւ լինի, յետոյ ծիտ, ահա և մի մեծ ճանճ դարձաւ...։

«Այդ ինձ է այսպէս բարձրացրել,—մտածեց Ջաղացպանը։—Առ քեզ, Ֆիլիպպո, և Եկամուտ, և հարստութիւն, և օգետներ, և չքեզ կեանք։ Մթթէ մի քրիստոնեայ չկայ, որ կանչէ «թող, այդ ինն է»։

Ոչ ոք չկայ։ Ներքևում, ուղիղ իւր ոտների տակ քնած է Ջաղացը և միայն կանգնած Ջրի միջից իւր սպակեայ աչքերով իրեն է նայում հանգուցեալ քեռի Օմելկոի երկարաբեխ մռութն ու կամաց ծիծաղում, բեխերը շարժում...։

Իսկ այն կողմը, Ջհուդը բլուրն ի վեր է բարձրանում՝ ահագին սպիտակ կապոցի ծանրութիւնից կղացած։ Բլրի լանջին կանգնել է Խայրկոն և ձեռքը աչքին դրած երկինք նայում։ Ինչ ասել կուզի, որ նա իւր աղային չի ազատիլ, քանի որ օղեստան բոլոր սրդիւնքը նրան է մնալու։

Ահա ագչկերանց շաղ ընկած խումբը հասաւ Օպանասի ու նրա եղների ետևից։ Ագչկերքը խելագարի նման թռչում են, իսկ Դանդաղկոտը թէպէտ սայլի մէջ պառկած ուղիղ երկինք է նայում, թէպէտ բարի էլ սիրտ ունի, բայց արաղից նրա աչքերը մթնել են ու լիզուն կապ ընկել...։ Չկայ, ոչ մէկ մարդ չկայ, որ կանչէ. «թող, այդ ինն է»։

Ահա և գիւղը։ Ահա փակ օղեստունը, քնած խրճիթները, պարտէզները. ահա և բարձր սօսիները և այրի կնկայ խրճիթը։

Դրան առաջ սաքուի վրայ մայր ու աղջիկ նստած, իրար փաթաթուած լաց են լինում... Ինչի՞ է նրանց լացը։ Չլինի՞ նրա համար է, որ վաղը Ջաղացպանը նրանց դուրս է անելու խրճթից։

Ջաղացպանի սիրտը ճմլուեց։ Էհ, թող գոնէ սրանք ինձ վատ չասեն։ Նա ոյժը մէկ արաւ ու կանչեց.

— Մի լալ, Գալիա, մի լալ հոգիս։ Թող գլուխն էլ, չահն էլ ձեզ լինի...։ Օֆ, վայ ինձ. իմ բանս ձերինից վատ է— ոնց որ սարդը մի փոքրիկ ճանճ, այնպէս ինձ քաշ է տալիս չարը...։

Եթէի շատ զգայուն է լինում աղջկայ սիրտը...։ Ինչպէս կարող էր այդ հեռաւորութիւնից բան լսուել, բայց և այնպէս Գալիան ցնցուեց և սև, լաչակուած աչքերը վերև բարձրացրեց...

—Մնաք բարով, սևորակ աչեր,—հառաչում է Ջաղացպանը, բայց յանկարծ ինչ տեսնէ—աղջիկը ձեռներով կուրծքը բռնեց, մի խորը շունչ քաշեց ու կանչեց.

—Թող, անիծուած սատանայ։ Բաց թող, այդ իմն է։

Կարծես սատանայի ականջներին մի կոպալ դիպաւ— ցնցուեց, չանչերն արձակեց և, Ֆիլիպպը, փեարի նման, ըսկսաւ գլխկոնձի տալով ներքև ընկնել։

Թռչում է, իսկ սատանան դիւլլի նման ետևիցն է վազում, Հէնց որ հասնում ու չանչում էր Ջաղացպանին, Գալիան նորից ձայն էր տալիս.

—Թող, անիծեալ, իմն է։

Սատանան բաց է թողնում, իսկ Ջաղացպանը վեր դալիս. և այսպէս երեք անգամ. իսկ ներքևն արդէն ճանիճն էլ, որ գեղի ու Ջաղացի միջև է գտնուում, քանի գնում մեծանում է, լայնանում։

Թըր-բախկ։Ջաղացպանը բոլոր ուժով զարնուեցաւ փափուկ ճանճին, որի երեսը ծածկուած էր մամուռով, այնպէս որ ամբողջ ճանճի երեսը ռետինի նման չարժուեցաւ ու Ջաղացպանն նորից երկու սաժէնի չափ վեր գցեց։ Ջաղացպանս դարձեալ վեր ընկաւ, ուրքի կոնդնեց ու սկսաւ փախչել—թռաւ քնած բանուորի վրայից, քիչ էր մնում դուռը կրնկահան անէր, և բոբիկ ոտով վազեց բլուրն ի վայր...։ Համ վազում է, համ դարձնում,—նրան այնպէս էր թուում, թէ հէնց այն է սատանայի նորից չանչելու է իրան։

Վազեց, հասաւ ծայրի խրճթին, թռաւ ցանկապատից, դուռը բաց արեց ներս մտաւ, կանգ առաւ այրի կնոջ սենեակի մէջ տեղն ու միայն այստեղ ուշքի եկաւ.

—Օ՛ֆ, փառք Աստուծոյ, վերջապէս ձեզ մօտ եմ։

XII

Ինքներդ դատեցէք, մարդիկ, այս ինչ էր նրա արածը, —առաւօտը վաղ-վաղ, դեռ արև չծագած, դեռ կովերը հանդ չքշած նա գլուխը բաց, մաղերը գզգզուած, առանց ոտնամանի, բոբիկ, բոլորովին հանուած ներս է ընկնում այրի կնոջ ու նրա աղջկայ—երկու անամուսին կանանց մօտ։ Է՛հ լաւ որ միայն գլխարկն էր կորցրել—և ոչ թէ ճամբին մի ուրիշ բան... այն ժամանակ խեղճերին յաւիտեան խայտառակ արած պիտի լինէր...։ Եւ դեռ երես ունի ասելու։ «Փառք Աստուծոյ, վերջապէս ձեզ մօտ եմ»։

Պառաւի բերանը բաց մնաց։ Իսկ Գալիան չատկանց վեր թռաւ տեղից, ձեռաց չորը վրան գցեց, ու մօտեցաւ Ջաղացպանին։

—Այս ինչ է քո արածդ, անաբո.ռ։ Հարբած ես, ինչ է. տունդ կորցրել այստեղ ես եկել, հը՞։

Իսկ Ջաղացպանը նրա առաջ կանգնած հաճոյքով մտիկ էր տալիս, չնայելով որ աղջկայ աչքերը փոքր ինչ չուած էլ լինէին, ու ասում է.

—Դէ, խփիր, քանի սիրտդ կուզէ։

Աղջիկը—մէկ շրխկացրեց։

—Էի՞ խփիր։

Աղջիկը—երկրորդը հասցրեց։

—Այդպէս, լաւ։ Գուցէ էլի՞ կուզես։

Աղջիկը երրորդն էլ հասցրեց։ Բայց տեսնելով, որ Ջաղացպանիս հոգն էլ չէ, կանգնած ու հաճոյքով մտիկ տալիս իրեն, ձեռներն իրար խփեց ու սկսաւ լաց լինել։

—Ա՛խ, վա՛յ իմ օրիս, ո՞վ պիտի ինձ պաշտպանէ...։ Ա՛խ, այս ինչ ցաւ դարձաւ գլխիս այս մարդը։ Բաւական չէ, որ խաբեց ինձ, ուզեց թուրք դարձնի, անունս էլ կոտրեց, սաղ գեղի մէջ խայտառակ արաւ։ Այժմ էլ մի սրան նայեցէք—երեք անգամ խփեցի, բայց նրա վէջն անգամ չէ։ Էլ ինչ անեմ, ո՞ւր փսիչեմ ձեռիցը, մնացել եմ չուար։

Իսկ Ջաղացպանը հարցնում է.

—Դէ ճիշդն ասա, էլի խփելու ես թէ ոչ։ Թէ չես խփելու, նստեմ, յոգնած եմ։

Գալիան ուզում էր դարձեալ ձեռները բարձրացնի, բայց պառաւն առաջինը գլխի ընկաւ, որ այնտեղ մի բան կայ, և ասաց աղջկանը.

—Սպասիր, աղջիկս։ Ի՞նչ ես մի լաւ հարց ու փորձ չարած խփում հա խփում։ Չես տեսնում, կարծես տղան խնդքը թուցրած լինի։ Այ տղայ, մի ասա ինձ, այս որտեղից եկար, ներս ընկար ու դեռ ասում ես. «Փառք Աստուծոյ, վերջապէս ձեզ մօտ եմ»,—քանի որ չէր պատկանիլ, որ այնտեղ լինէիր...։

Ջաղացպանը աչքերը տրոլեց ու ասաց.

—Եկէք դուք մի ինձ ուղիղն ասէք—քնած եմ թէ արթուն. երեկուանից դէսը մի գիշեր է անցել, թէ մի տարի, ես ինքս էլ այս բոպէիս Ջաղացից եմ գալիս, թէ երկնքից վեր ընկայ։

—Էհէյ, երեսդ խաչ հանիր, այ մարդ։ Այդ ինչեր ես դուրս տալիս, հը՞։ Երազ հո չես տեսել։

—Չգիտեմ, մայրիկ ջան, չգիտեմ, ինքս էլ ոչինչ չգիտեմ...։

Ջաղացպանը նստաւ պատուհանի մօտ, նստարանի վերայ ու աչքը ձգեց պատուհանից դուրս տեսաւ, որ օղեվաճառ Եանկէլը, ահագին կապոցն ուսին, առաւօտեան ցրտին, գընում է տուն։ Ջաղացպանը վեր թռաւ տեղից, ցոլց տուաւ պատուհանից դուրս ու ասաց.

—Ո՞վ է այս գնացողը։

—Ո՛վ պիտի լինի, մեր Եանկէլն է։

—Այդ ինչ է տանում։

—Քաղաքից կապոց է տանում տուն։

—Էլ ինչի՞ էք ուրեմն ասում, թէ երազ եմ տեսել, քանի որ ահա ջհուդն էլ վերադարձաւ։ Ես նրան հէնց նոր, այդ կապոցն ուսին, Ջաղացի մօտ տեսայ։

Եւ ինչու չպիտի վերադառնայ որ։

—Ախր չէ՞ անցեալ տարի նրան Ջանչողն էր տարել։

Մէկ խօսքով, երբ որ Ջաղացպանը իւր գլխով անցածը բոլորը պատմեց, շատ զարմացան։ Իսկ այդ ժամանակ արդէն փողոցում, խրճիթի առաջ, մարդիկ հաւաքւում էին, պատուհանից ներս նայում, դատողութիւններ անում.

—Այ քեզ բան,—ասում էին,—Ջաղացպանը զզզուած մազով, շորերը հանած, գլուխը բաց, ոտը բոբիկ, դաշտի միջով չիտակ այրի կնոջ մօտ է վազ տուել և այժմ խրճիթում նստած է։

—Այ տղայ, մէկ ասա մեզ, այդ ուր մօտ ես այդպէս զուգուած, զարդարուած գնում, պառաւ Պրիսիալի թէ Ջանել Գալիալի...։

Բայց այժմ կարծեմ դուք էլ համոզուած էք, որ խեղճ աղջկայ վրայ կարելի չէր ի զուր տեղը մի այսպիսի արատ ձգել։ Ջաղացպանը հարկադրուած պատկուեց։ Ասենք Ֆիլիպպը ինքն էլ քանի քանիցս ինձ խոստովանուել է, որ Գալիային միշտ սիրելիս է եղել, իսկ այն զիշերուանից, որ սատանան չանչել էր նրան ու Գալիան աղատել, աղջիկն այնքան սիրելի էր դարձել, որ թակէիր չէր հեռանալ նրանից։

Այժմ ապրում են Ջաղացում, զաւակներ էլ ունին։ Իսկ օղետան մասին Ջաղացպանն այլ ևս չէր մտածում, և տոկոս էլ չէր վերցնում։ Իսկ երբ որ նրա առաջ Ջհուդ Եանկէլին գեղից հեռացնելու մասին խօսք լինէր, միայն ձեռքը թափ կտար։

—Իսկ օղետունը, ինչ էք կարծում, կարող է մնալ,—հարցնում էր նա այդպէս ասողին։

—Ի հարկէ կմնայ,—գետին հո չէ անցնելու։

—Բայց ով է օղետունը բռնելու...։ Դուք հո չէք ուզում բռնել։

—Ինչ ՀԱՍ, թէկուզ հէնց ես բռնեմ...։

Եւ նա միայն կշվացներ...։

XIII

Հապա, ահա ինչ է եկել Ջաղացպանի գլխին,—մի այնպիսի բան, որ մինչև օրս էլ չեմ կարողանում հասկանալ—այս բոլորը եղել է, թէ սկի չի էլ եղել, թէ ասեմ սուտ է, Ջաղացպանս մի այնպիսի մարդ չէ, որ սուտ ասի։ Վերջապէս բանուորը, Դաւրիլոն, մինչև այժմ էլ Ջաղացումն է, և թէպէտ խոստովանւում է, որ այդ գիշեր քուռ հարբած է եղել, բայց դարձեալ շատ լաւ միտքն է, որ Ջաղացպանն ինքն է դուռը բաց արել, և այս էլ է նկատել, որ երեսի գոյնը աւիւրից սպիտակ է եղել։ Եւ Եանկէլն էլ լուսաբացին էր դար-

ձել, Օպանասն էլ բոբիկ ու գլխաբաց տուն եկել... Ուրեմն և չեմ կարող ասել, թէ Ջաղացպանն այս ամենն երազում տեսած լինի։

Այս էլ առնենք—ինչպէս կարող էր այս ամենը պատահել, քանի որ դրա համար մի ամբողջ տարի էր հարկաւոր, մինչդեռ Ջաղացպանը հէնց միւս առաւօտն էր բոբիկ ոտքով Գալիայի մօտ գնացել։ դեռ մարդիկ էլ զարմացել էին, թէ ինչ գործ ունի, որ Ջաղացպանը բոբիկ, դաշտի միջով աղջկայ մօտ վազի...։

Էհ, կարծում եմ աւելի լաւ է սկի չքննենք այս։ Եղել է թէ չէ եղել—չգիտեմ, բայց իմ կողմից ոչ ինչ պիտի աւելացնեմ,—գուցէ դուք էլ ունենաք մի ծանօթ Ջաղացպան, եթէ Ջաղացպան էլ չլինի, մի այնպիսի մարդ, որ երկու օրդեռուն է պահում...։ Եւ, գուցէ, դեռ ջհուդներին էլ հաչհուում է, իսկ ինքը մարդկանց կողոպտում, ունեցածները ձեռներից խլում,—դէ, այդպիսի ծանօթների մօտ կարդացէք հէնց այս պատմութիւնը։ Խօսք եմ տալիս, սա արդէն փորձուած բան է, գուցէ նա իւր գործը թողնելն ասենք չթողնի, բայց ձեզ մի բաժակ արաղ հրամցնի—գոնէ այս անգամ հետը ջուր չի խառնիլ։

Դէ այնպիսի մարդիկ էլ կան (այդ էլ փորձուած է), որ հէնց որ լսեցին այս պատմութիւնը, կսկսեն ոչ նման վրներդ հաչել։ Այդպիսիներին էլ ոչ ինչ կասեմ,—ինչքան ուզում էք հաչացէք, բայց ձեզ անկեղծ խորհուրդ կտամ՝—զգուշացէք, չլինի թէ Ջաղացպանի օլինը ձեր գլուխն էլ գայ։

Որովհետև, գիտէք, Նոյեմ-Կամենկալի գեղացիք դրանից յետոյ քանի անգամ տեսել են նոյն այդ սատանային,—այն օրուանից, որ փորձել էր Ջաղացպանին տանել։ Չի ուզում առանց չաղ որսի յետ դառնալ...։ Երամից յետ մնացած թռչնի նման թռչում է և չարունակ որս փնտրում...։

Դէ զգոյշ կացէք, ոչ մարդիկ, չլինի թէ ձեր գլխին էլ մի փորձանք գայ...։

Իսկ առ այժմ մնաք բարով։ Թէ որ մի բան էլ այնպէս պատմած չլինիմ, ինչպէս որ ձեր սիրտը կուզէր—ներող եղէք, ես մի անտաստում մարդ եմ։

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А. Публичная Библиотека
7/XI-1922
ԱՄՍԻՍ, Мясникиана
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

«Ազգային գրադարան»
NL0318692

11.765

891.71
Y-78